* MA United World College, noune.zelts@gmail.com. հոդվածը ներկայացված է 16.02.2022, գրախոսված է 16.03.2022, ընդունված է հրապարակման 20.05.2022.

* MA United World College, noune.zelts@gmail.com, статья представлена 16.02.2022, рецензирована 16.03.2022, принята к публикации 20.05.2022.

ՀՏԴ : 929:781(45) ՌՈՍԻՆԻ + 929:781(479.25) ՉԵՔԻՋՅԱՆ +78
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-79

ՋՈԱԿԻՆՈ ՌՈՍԻՆԻԻ «STABAT MATER»-Ը ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

(նվիրվում է Ռոսինիի «Stabat Mater»-ի ստեղծման 180-ամյակին և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հիմնադրման 85-ամյակին)

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ*

Հղման համար. Ասատրյան, Աննա: «Ջոակինո Ռոսինիի «Stabat Mater»-ը Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 79-100. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-79

2022 թ. մարտի 31-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը: Հնչեց Ջոակինո Ռոսինիի (1792-1868) «Stabat Mater»-ը՝ (1842) Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, մենակատարներ Սոֆյա Սայադյանի (սոպրանո), Քրիստինե Սահակյանի (մեցցո-սոպրանո), Միքայել Գրիգորյանի (տենոր) և Պողոս Բիազբեկյանի (բաս) կատարմամբ: Դիրիժորական վահանակի մոտ էր Հովհաննես Չեքիջյանը:

Ուսումնասիրությունում հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ բացահայտվում է Հովհաննես Չեքիջյանի դերը Հայաստանում և Խորհրդային Միությունում Ռոսինիի «Stabat Mater»-ի համերգային կենսագրության մեջ: Շնորհիվ Հ. Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի՝ 1965 թ. նոյեմբերի 15-ին Երևանում առաջին անգամ հնչեց Ռոսինիի «Stabat Mater»-ը: Այն իր հաստատուն տեղը գտավ հայկական կապելլայի երկացանկում, որի շնորհիվ Հայաստանում «Stabat Mater»-ի համերգային կյանքը շարունակվում է մինչ օր: Երևանյան պրեմիերայից անմիջապես հետո՝ 1965 թ. դեկտեմբերի 27-ին և 28-ին, «Stabat Mater»-ն առաջին անգամ հնչեց Մոսկվայում՝ Հ. Չեքիջյանի և հայկական կապելլայի կատարմամբ տեղի ունեցավ «Stabat Mater»-ի համամիութենական պրեմիերան: Մոսկովյան պրեմիերային հաջորդեցին «Stabat Mater»-ի պրեմիերաները 1966 թվականին Լենինգրադում, մերձբալթյան հանրապետություններում, Ուկրաինայում և Բելոռուսիայում: Ռոսինիի «Stabat Mater»-ի չեքիջյանական մեկնաբանությունն առանձնանում է բարձր պրոֆեսիոնալիզմով և ինքնատիպությամբ:

Բանալի բառեր՝ Հովհաննես Չեքիջյան, Ջոակինո Ռոսինի, «Stabat Mater», երևանյան պրեմիերա, Մոսկվա, համամիութենական պրեմիերա, 1965 թվական:

Ներածություն

2022 թ. մարտի 31-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ մաեստրո Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը:

---

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի փոխնախագահ, «Տիգրան Չուխաճյան» հիմնադրամի նախագահ, Հայաստանի կոմպոզիտորների միության խորհրդի անդամ, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, annaasatryan2013@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 20.04.2022, գրախոսելու օրը՝ 25.04.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԵՐԳ
ARMENIAN NATIONAL ACADEMIC CHOIR
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆԱԿԱՇԱՐԱՆ
ARMENIAN NATIONAL PHILHARMONIC ORCHESTRA
ՋՈԱԿԻՆՈ ՌՈՍԻՆԻ
GIOACHINO ROSSINI
STABAT MATER
ՍՈՖՅԱ ՍԱՅԱԴՅԱՆ, ՍՈՊՐԱՆՈ / SOFYA SAYADYAN, SOPRANO
ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ, ՄԵԶՈ ՍՈՊՐԱՆՈ / CHRISTINE SAHAKYAN, MEZZO-SOPRANO
ՄԻՔԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՏԵՆՈՐ / MIKAYEL GRIGORYAN, TENOR
ԶՈՀՐԱԲ ԶՈՀՐԱԲՅԱՆ, ԲԱՍ / ZOHRAB ZOHRABYAN, BASS
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ
HOVHANNES TCHEKIDJIAN
ԴԻՐԻԺՈՐ / CONDUCTOR
ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՍԱՐԱՀ
31 / 03 2022
ARAM KHACHATURIAN CONCERT HALL
!BRAVO
tomsarkgh

Հնչեց Ջոակինո Ռոսինիի «Stabat Mater»-ը՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Հայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի, մենակատարներ՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի տաղանդավոր արտիստներ Սոֆյա Սայադյանի (սոպրանո), Քրիստինե Սահակյանի (մեցցո-սոպրանո), Միքայել Գրիգորյանի (տենոր) և Պողոս Բիազբեկյանի (բաս) կատարմամբ: Դիրիժորական վահանակի մոտ էր Հովհաննես Չեքիջյանը:

Ռոսինիի «Stabat Mater»-ը հնչեց փարիզյան պրեմիերայից (1842 թ. հունվարի 7) ճիշտ 180 տարի անց՝ կրկնելով փարիզյան հաջողությունը: Ինչպես և այն ժամանակ, մեսսան հուզեց, ցնցեց, հիացրեց: Ինչպես և 180 տարի առաջ՝ երևանյան կատարումը ևս արտասովոր հաջողություն էր՝ զարմանքի և հիացումի պայթյուն: Ի՞նչ իմանար Ռոսինին իր հայրենիքում՝ Իտալիայում, 1842 թ. մարտին տեղի ունեցած նեապոլյան պրեմիերայի ժամանակ՝ Գաետանո Դոնիցետտիի ղեկավարությամբ, որ դրանից 180 տարի անց, շնորհիվ Հ. Չեքիջյանի, իր «Stabat Mater»-ը հնչելու է Երևանում՝ կրկին հուզելու ունկնդրին ճիշտ այնպես, ինչպես 1842-ին…

Համերգը ևս մեկ անգամ վկայեց, որ օրերս իր հիմնադրման 85-ամյակը բոլորած Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը հայ արդի կատարողական արվեստի գագաթն է, իսկ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի վիրտուոզությունը սահման չունի: Նա ոչ միայն վարպետորեն մեկնաբանում է կոմպոզիտորի ողջ մտահղացումը՝ ունկնդրին առավելագույնս ճշգրիտ փոխանցելով այն ամենը, ինչ գրված է պարտիտուրում, այլև ապշեցնում կատարման բարձր կուլտուրայով, անմեկնելի ու անբացատրելի որակներով: Նրա ղեկավարությամբ երգչախումբը դուրս է գալիս իր դերի ու նշանակության շրջանակներից և օժտվում մենակատարի գործառույթով: Նվագախումբն ու երգչախումբը անգամ tutti-ի և ff հնչողության պայմաններում չեն խլացնում մենակատարներին: Ահա այստեղ է դրսևորվում մաեստրո Չեքիջյանի՝ անսամբլի բացառիկ և անգերազանցելի զգացողությունը:

Այս կատարումը համաշխարհային կատարողական արվեստում բացառիկ է նաև նրանով, որ կապելլան երգում է առանց նոտաների:

…Իր պատմության ծանր ժամանակաշրջանն ապրող ժողովրդիս համար

«Stabat Mater»-ը հնչեց որպես իսկապես Stabat mater dolorosa: Հայաստան-աշխարհն ու հայ ժողովուրդն ասես Ռոսինիի անմահ ստեղծագործության հնչյուններով սգում էին 44-օրյա պատերազմում զոհված զավակների կորուստը:

Իմ դեպքում ազգային ողբերգությանը գումարվեց անձնական մեծ վիշտը. թեև արդեն ամիսներ էին անցել, ինչ ես կորցրել էի թանկագին հորս՝ պետական գործիչ Գրիգոր Եգորի Ասատրյանին, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում համակերպվել, չէր ստացվում խլացնել կորստյան անտանելի ցավը… Հայրս, որ Մաեստրոյի տաղանդի երկրպագուներից էր և բաց չէր թողնում ոչ մի համերգ, այդ օրն ինձ հետ չէր. նրա բազկաթոռը թափուր էր… Համերգի ողջ ընթացքում ես արտասվել եմ, քանի որ Մաեստրոյի ղեկավարությամբ երգչախմբի ու նվագախմբի արտիստներն ու մենակատարները «Stabat Mater»-ը հնչեցրին որպես աղոթք՝ առ Աստված…

Համերգն ունկնդիրների վրա թողեց ցնցող ու անջնջելի տպավորություն: Ծափողջույններն ու բրավոները երկար ժամանակ չէին լռում: Ինչպես միշտ՝ հանդիսատեսը չէր շտապում բաժանվել իր սիրելի Մաեստրոյից: Եվ ահավասիկ Մաեստրոն, անսալով իր երկրպագուների «ցանկություն-խնդրանք-պահանջին», կրկին կանգնեց դիրիժորական վահանակի առջև ու…

Որպես բիս հնչեց Շառլ Ազնավուրի տեքստով և Տիրան Կառվարենցի երաժշտությամբ 1988 թվականի Սպիտակի ավերիչ երկրաշարժի օրերին ստեղծված “Pour toi, Arménie” («Քեզ համար, Հայաստան») երգը՝ ֆրանսերենով:

Ու երգի ստեղծումից 34 տարի անց Հովհաննես Չեքիջյանն ասես այդ երգով՝ Ազնավուրի խորիմաստ ու փաստորեն խիստ արդիական տեքստով, ուղերձ հղեց հայոց պատմության դժվարագույն փուլերից մեկն ապրող իր հայրենակիցներին, որոնք այսօր ևս, ինչպես դաժան երկրաշարժից հետո, կարիք ունեն կարեկցանքի ու վշտակցության, նաև՝ մխիթարության ու լուսավոր ապագայի հանդեպ հավատի նորոգման՝

«Ոսկյա արևը թող ժպտա մի բուռ քո հողին,
Հար ցնծա՛, իմ Հայաստան աշխարհ:
Արցունքը քո սրբիր, թող հույսը քեզ օգնի,
Գոտեպնդվիր, ի՛մ ժողովուրդ….» (թարգմանությունը՝ Գևորգ Արմենյանի):

Ռոսինիի «Stabat Mater»-ի չեքիջյանական հանճարեղ մեկնաբանությունը ստիպեց ինձ վերադառնալ տասնամյակների խորքը և ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի դերը Ռոսինիի այս ստեղծագործության համերգային կենսագրության մեջ: Քիչ է ասել, թե նրա շնորհիվ այս գործն առաջին անգամ հնչեց Երևանում 1965 թվականի նոյեմբերի 15-ին և ապրում է մինչ օրս: Շնորհիվ Հ. Չեքիջյանի՝ ստեղծագործությունն առաջին անգամ հնչեց ողջ Խորհրդային Միությունում: Երևանյան պրեմիերային հաջորդեցին «Stabat Mater»-ի պրեմիերաները ոչ միայն Մոսկվայում ու Լենինգրադում, այլև մերձբալթյան հանրապետություններում, Ուկրաինայում և Բելոռուսիայում:

Նշենք, որ տասնամյակներ շարունակ Հ. Չեքիջյանը փայլուն խմբավարի գործունեությունը հաջողությամբ զուգակցում է սիմֆոնիկ դիրիժորի գործունեության հետ: Դրա մեկնարկը տրվեց հայրենիքում առաջին համերգի ժամանակ: Երևանում առաջին բեմելին Մաեստրոն ներկայացավ թե՛ որպես խմբավար,

թե՛ որպես սիմֆոնիկ դիրիժոր. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ կատարեց Բեթհովենի Յոթերորդ սիմֆոնիան: «Համերգի երկրորդ բաժնում Հ. Չեքիջյանն իրեն դրսևորեց որպես նվագախմբի հետ աշխատելու, այն իր կամքին ենթարկելու և հրաշալի հնչողություն ստանալու ունակ լավ սիմֆոնիկ դիրիժոր: Համերգն ունեցավ հսկայական հաջողություն, բյուրավոր ունկնդիրները ողջունեցին երիտասարդ տաղանդավոր դիրիժորին» [16]:

Մինչև 1961 թվականին Հայաստան գալը Հ. Չեքիջյանը սիմֆոնիկ նվագախմբեր է ղեկավարել 1947-ից, այդ թվում՝ Ստամբուլում և Փարիզում, իսկ հայրենիք վերադառնալուց ի վեր՝ Հայաստանի բոլոր սիմֆոնիկ նվագախմբերը, ԽՍՀՄ առաջնակարգ նվագախմբերը՝ ԽՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, Լենինգրադի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, միութենական և արտասահմանյան՝ ընդհանուր առմամբ 69 սիմֆոնիկ նվագախումբ [6, էջ 155-157]:

Հընթացս հայրենիքում անդրանիկ համերգի՝ Մաեստրոն մատուցում է իր առաջին անակնկալը. Խորհրդային Միության մեջ առաջին անգամ հնչում է Բեդրժիխ Սմետանայի «Չեխական երգ» Կանտատը, ընդ որում՝ չեխերեն՝ սկիզբ դնելով ստեղծագործությունները միայն բնագրով կատարելու ավանդույթին. այսօր կապելլան երգում է աշխարհի 27 լեզուներով: Այդ օրվանից մինչ օրս վոկալ-սիմֆոնիկ խոշոր կտավի ստեղծագործությունների համերգային կատարումները Հ. Չեքիջյանի և կապելլայի գործունեության կարևոր բնագավառներից են:

Հ. Չեքիջյանի ջանքերով ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միությունում առաջին անգամ հնչել են վոկալ-սիմֆոնիկ այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են Շուբերտի «Միրիամի հաղթերգը» կանտատը (1964, Երևան, Մոսկվա), Ռոսինիի «Stabat Mater»-ը (1965, Երևան, Մոսկվա), Հ. Բեռլիոզի «Requiem»-ը (1967, Երևան, Մոսկվա), «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան (1983, Մոսկվա) և «Te Deum»-ը (1977, Լենինգրադ), Գ. Ֆորեի «Requiem»-ը (1971, Երևան, Մոսկվա), Շ. Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան (1971, Մոսկվա), Ջ. Վերդիի «Ազգերի հիմնը» (1982, Լենինգրադ), Կ. Լամբերտի «Ռիո Գրանդե»-ն (1982, Լենինգրադ) և այլն:

Հ. Չեքիջյանը համաշխարհային դիրիժորական պրակտիկայում միակ դիրիժորն է, ով Հ. Բեռլիոզի «Requiem»-ը կատարել է 37 անգամ՝ Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Մինսկում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Կիևում, Քիշնևում, Կաունասում, Ուլյանովսկում, Տիրասպոլում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում, Սվերդլովսկում, Լվովում, Օդեսայում, Նովոսիբիրսկում, Օմսկում, Տոմսկում՝ սահմանելով յուրահատուկ համաշխարհային ռեկորդ: Հ. Չեքիջյանի ջանքերով տեղի ունեցավ Բեռլիոզի «Requiem»-ի երևանյան պրեմիերան 1967 թ. փետրվարի 1-ին և 2-ին: Շաբաթներ անց՝ փետրվարի 26-ին, «Requiem»-ը հնչեց Մոսկվայում՝ Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ, ԽՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ: Իսկ մարտի 2-ին և 3-ին ստեղծագործությունը Մաեստրոյի ղեկավարությամբ հնչեց Լենինգրադում՝ Հայաստանի պետական երգչախմբի և Լենֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

Հ. Չեքիջյան-սիմֆոնիկ դիրիժորի հարուստ ու բազմազան նվագացանկն ընդգրկում է տարբեր դարաշրջանների և տարբեր ոճերի վոկալ-սիմֆոնիկ և սիմֆոնիկ երաժշտության բազմաթիվ նմուշներ՝ Բեռլիոզի «Ռեքվիեմից» ու «Te Deum»-ից՝ մինչև Արամ Խաչատրյանի «Զոն ցնծության», Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայից ու «Ֆանտազիայից»՝ մինչև Էդգար Հովհաննիսյանի «Սարդարապատ» ու «Էրեբունի-Երևան», Վերդիի «Ազգերի հիմնից» ու «Ռեքվիեմից»՝ մինչև Կառլ Ջենկինսի «Սիմֆոնիկ Ադիեմուս» [1, էջ 45-51]:

Ջոակինո Ռոսինին և նրա «Stabat Mater»-ը

«Stabat Mater»-ի անվանումն առաջացել է բանաստեղծական տեքստի առաջին բառերից՝ «Stabat Mater dolorosa», որը լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ «Կանգնած էր մայրը սգացող»:

«Stabat Mater»-ի բազմաձայն կոմպոզիցիաներն սկզբնական շրջանում ստեղծվում էին cantus firmus-ի վրա կամ էլ միջանցիկ իմիտացիոն ոճում (Ժոսկեն Դեպրե, Ֆրանկինո Գաֆուրի, Պալեստրինա, Օռլանդո Լասսո): Այս ոճը Հռոմում պահպանվեց երկար ժամանակ (Դոմենիկո Սկարլատի), այնուհետև փոխարինվեց նոր օպերային ոճով՝ նվագախմբի, մենակատար արիաների և զուգերգերի օգտագործմամբ (Ա. Մ. Բոնոնչինի, Ա. Կալդերա): «Stabat Mater»-ի պատմության մեջ շրջադարձային էր նեոպոլիտանական օպերային դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ, opera-buffa-ի դասական, իտալացի կոմպոզիտոր Ջովանի Բատիստա Պերգոլեզիի «Stabat Mater»-ը (1735)՝ գրված կամերային կանտատի ձևում:

XVIII դարում «Stabat Mater» ստեղծեցին Մոցարտը և Հայդնը, իսկ XIX դարում՝ Շուբերտը: XIX դարում, հատկապես Ռոսինիի, Դվորժակի, Լիստի, Վերդիի, Ա.Ն. Սերովի ստեղծագործություններում, «Stabat Mater»-ը «ճեղքեց» եկեղեցական շրջանակները և դարձավ կոնցերտային ժանր: «Stabat Mater»-ն իր կենսունակությունը պահպանեց նաև XX դարում՝ արժանանալով Կարոլ Շիմանովսկու, Լենոկս Բերկլիի, Ֆրենսիս Պուլենկի, Զոլտան Կոդայի և Քշիշտոֆ Պենդերեցկու ուշադրությանը:

Հայտնի է, որ Ջոակինո Ռոսինիի (1792-1868) ստեղծագործությունը մեծ ազդեցություն ունեցավ XIX դարի իտալական և եվրոպական օպերային արվեստի զարգացման համար:

Պուշկինը Ռոսինիի երաժշտությունը համեմատել է շամպայնի ոսկեգույն շիթերի հետ [15, էջ 354], իսկ ընդհուպ մինչև մեր օրերը ռոսինյան արվեստը համարվում է երաժշտության մեջ ուրախության և անկաշկանդ սրամտության հոմանիշ: «Սոցիալական և ռազմական բուռն ցնցումների դարաշրջանում, որը ծնեց ռոմանտիկների «համաշխարհային ողբը» և մռայլ ֆանտաստիկան, Ռոսինիի կայծկլտացող, արևային տոներն իրենց հետ բերում էին հավատ պատանեկության հավերժական իդեալների հանդեպ: Անգերազանցելի մելոդիստը սփռում էր մեղեդիներ, որոնք գերում էին ունկնդիրներին աշխարհի բոլոր երկրներում: Իտալացի կոմպոզիտորներից ոչ ոք, մինչև Ռոսինին և նրանից հետո, չստեղծեց նման գեղեցկության, նրբագեղության և փայլի երաժշտություն: «Կյանք, խելք, ստեղծագործություն, միտք, լույս, տրամաբանություն, գեղեցկություն և հրաշագեղու-

թյուն», - այսպես է բնութագրել կոմպոզիտորի արվեստը Ա.Ն. Սերովը» [15, էջ 354]:

Ռոսինին իտալացի առաջին կոմպոզիտորն էր, որ նման վառ և կատարյալ ձևով արտացոլեց իր ժողովրդի ստեղծագործական ուժերի վերելքը, նրա ազգային ինքնագիտակցության զարթոնքը: Եզրափակելով ազգային օպերայի զարգացման ողջ դարաշրջանը՝ նա միաժամանակ Իտալիայում երաժշտական թատրոնի նոր փայլուն ծաղկման հիմքերը դրեց: Ռոսինիի արվեստը նախապատրաստեց Բելլինիի, Դոնիցետիի և հանճարեղ Վերդիի նշանավոր օպերաները: Նրա շնորհիվ իտալական երաժշտությունն անկման շրջանից հետո վերստին նվաճեց իր երբեմնի հզորությունը՝ արժանի տեղ գրավելով համաշխարհային երաժշտական մշակույթում:

Ժողովրդական-հերոսական ժանրում Ռոսինիի որոնումների նշանակալի հանրագումարը դարձավ «Վիլհելմ Տելլ» (1829) օպերան, որը ոչ միայն դարձավ կոմպոզիտորի ստեղծագործության գագաթը, այլև ազդարարեց ստեղծագործական էվոլյուցիայի ավարտը: Այս օպերայից հետո 37-ամյա Ռոսինին դադարեց ստեղծագործել երաժշտական թատրոնի համար: Նրա կյանքի երկրորդ կեսի նվաճումների թվին են դասվում երկու հոգևոր ստեղծագործությունները՝ վառ թատերական ոգով գրված «Stabat Mater»-ը (1842) և վիթխարի մեսսան, որը նա կեսկատակ անվանեց «Փոքրիկ հանդիսավոր մեսսա» (1863):



««Stabat Mater»-ն ամբողջությամբ առաջին անգամ կատարվել է 1842 թ. հունվարի 7-ին Փարիզում՝ Վանտադուր դահլիճում, որտեղ ներկայումս տեղավորված է Իտալական թատրոնը: Մեսսան կատարեցին Ջուլիետա Գրիզին և Ալբերտացին, տենոր Մարիոն, բաս Տամբուրինին՝ անզուգական կվարտետ: Հրաշալի կատարում» [17, էջ 283]: Մամուլն արձագանքեց. «Այն ժամանակներից, ինչ Փարիզում կատարվեց Հայդնի «Աշխարհի արարումը» օրատորիան, ես չեմ հիշում, որ ինձ վիճակվեր ներկա լինել ավելի հանդիսավոր, ավելի տպավորիչ և ավելի հիանալի համերգի, որն այդքան ուժեղ հուզեր ունկնդիրներին: Փառահեղ է այդ հրաշալի ստեղծագործության փայլը...» [17, էջ 283]: Իսկ համերգին ներկա Հայնրիխ Հայնեն գրեց. «Ռոսինիի «Ստաբատն»

ընթացիկ սեզոնի ամենաարտասովոր իրադարձությունն է, և մեծ մաեստրոյին ուղղված՝ գերմանացիների հանդիմանությունները միանգամայն հստակ վկայում են նրա օժտվածության օրիգինալության և խորության մասին: Գերմանացիները գտնում են՝ իբր այս ստեղծագործությունը շատ աշխարհիկ է, շատ երկրային է հոգևոր երաժշտության համար... Անվերջության զգացողությունը բխում էր ողջ ստեղծագործությունից՝ երկնագույն երկնքի փայլի պես, ծովի վեհության պես: Ահա թե որն է Ռոսինիի հավերժական հմայքը, նրա լուսավոր քնքշությունը, որը ոչ ոք երբեք չկարողացավ, ես չեմ ասում՝ խախտել, փչացնել, անգամ՝ մթագնել» [17, էջ 283]:

Կոմպոզիտորին շատ ուրախացրեց «Stabat Mater»-ի հաջողությունը, քանի որ թվում էր, թե իրեն մոռացել են: Բայց ուրախությունն ավելի մեծ էր, երբ երկու ամիս անց «Ստաբատը» հնչեց Բոլոնիայի համալսարանի դահլիճում՝ միանգամայն անկրկնելի կատարմամբ: «Stabat Mater»-ը ղեկավարելու համար Ռոսինին հրավիրեց Գաետանո Դոնիցետիին, որը նախօրեին՝ 1842 թ. մարտի 9-ին, Միլանում ներկա էր գտնվել Վերդիի «Նաբուկո» օպերայի ցնցող հաջողությանը և հաջորդ օրը Բոլոնիայի ճանապարհին կառքում հիացած կրկնել էր՝ «Ի՞նչ հրաշալի էր այդ երաժշտությունը: Ի՞նչ կոմպոզիտոր է Վերդին» [17, էջ 284]:

«Stabat Mater»-ը կատարեցին սոպրանո Նովելլոն, տենոր Նիկոլայ Իվանովը և երաժշտության երկու սիրահարներ՝ արիստոկրատուհի Կլեմենտինա Դելյի Անտոնին և իշխան Պոմպեո Բելջոյոզոն, ինչպես նաև հանրահայտ երգիչներ բաս Ցուկկելին և Մարիա Ալբոնին: Հաջողությունն աննկարագրելի էր: Դոնիցետին այդ մասին ասաց. «Ես անկարող եմ արտահայտել, թե ինչ ընդունելության արժանացանք Բոլոնիայում Ռոսինին և ես: Դա անհնար է նկարագրել: Փողային նվագախումբ, «ուռա» ճիչեր, մադրիգալներ... Ռոսինիին, որին ես վերջապես համոզեցի ներկա լինել երրորդ ներկայացմանը, պատվեցին ըստ արժանվույն: Նա բարձրացավ ինձ մոտ, դիրիժորական հարթակ, գրկեց ինձ, համբուրեց, և հիացական ճիչերը խլացրին մեզ երկուսիս: Նա նետվեց իմ կրծքին, արտասվեց ու անվերջ կրկնում էր. «Ինձ մենակ չթողնես, բարեկամս»: Բոլորը հուզվեցին՝ տեսնելով Ռոսինիի հուզմունքը» [17, էջ 284]:

«Stabat Mater»-ները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ

Հոգևոր և աշխարհիկ վոկալ-սիմֆոնիկ բազմաթիվ դժվարագույն ստեղծագործությունների անզուգական մեկնաբան Հովհաննես Չեքիջյանի և հայկական կապելլայի երկացանկում համաշխարհային երաժշտության երևելիների ստեղծած «Stabat Mater»-ներից առկա են երեքը՝ Ռոսինիի, Շիմանովսկու և Պենդերեցկու ստեղծագործությունները [2, էջ 57-58]:

1980 թ. ապրիլի 18-27-ը տեղի ունեցան «Սովետական մշակույթի օրերը» Լեհաստանում: Լեհաստանի տարբեր քաղաքներն ընդգրկող «Մշակույթի օրերի» նպատակն էր լեհերին ծանոթացնել խորհրդային արվեստի տարբեր բնագավառների նվաճումներին [5]:

Խորհրդային մշակույթի օրերի շրջանակում Լեհաստանում տեղի ունեցան Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի

հյուրախաղերը: Լեհաստանի հարավ-արևմուտքում՝ Օդրա գետի ափին գտնվող Վրոցլավ քաղաքում, Խորհրդային Միության «Մշակույթի օրերի» բացման պատիվը տրվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբին՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ [19]:

Երկրորդ համերգին՝ ապրիլի 19-ին, Վրոցլավի սիմֆոնիկ նվագախմբի և հայկական կապելլայի կատարմամբ հնչեց լեհ խոշորագույն կոմպոզիտորներից մեկի՝ ժամանակակից լեհական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կարոլ Շիմանովսկու (1882-1937) «Stabat Mater»-ը (1926): «Լեհ խստապահանջ արվեստասերը համոզվեց, որ ունկնդրում է մի երգչախմբի, որը վաղուց հաղթահարել է պրոֆեսիոնալիզմի դժվարին բարձունքները: Երգչախմբի և նվագախմբի բարձրարվեստ կատարումը, մենակատարների՝ Ստեֆանյա Վոյտովիչի (սոպրանո) համոզիչ մեկնաբանումը, Ուրշուլա Միտրեգայի խոր զգացմունքայնությունը, Եժի Մեխլինսկու (բարիտոն) կատարման դրամատիզմը երկի մատուցումը դարձրին ամբողջական, մեծապես համակող» [11]:

Կարոլ Շիմանովսկու «Stabat Mater»-ի՝ հայկական կապելլայի մեկնաբանության մասին Վրոցլավի «Երեկոյան Վրոցլավ» թերթի ապրիլի 23-ի համարում Ռիշարդ Բուկովսկին գրեց. «Լեհաստանում խորհրդային մշակույթի օրերի շրջանակներում Կ. Շիմանովսկու «Stabat Mater» օրատորիայի կատարմամբ ելույթ ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, որը ցուցադրեց տեխնիկական և գեղարվեստական բարձր մակարդակ: Եթե նկատի ունենանք, որ Կարոլ Շիմանովսկու երաժշտությունը Հայաստանի համար իսկական մի էկզոտիկա է, ապա երգչախմբի ձեռք բերած հաջողությունները պետք է առավել քան զարմանք հարուցեն» [18]: Ընդ որում՝ «հայկական երգչախմբի առջև ծառացած ամենամեծ դժվարությունն այն էր, որ մինչև Լեհաստան գալը Շիմանովսկին բոլորովին անծանոթ էր նրանց: Այդ բանը հատկապես զգացվեց փորձերի, բայց ոչ արդեն համերգի ժամանակ: Մի բան, որ վկայում է այդ տաղանդավոր երգչախմբի հաղթանակի մասին: Այդ երգչախումբը, անշուշտ, հիասքանչ է...» [20]:

Մաեստրոյի և կապելլայի ելույթը դարձավ երևույթ լեհական երաժշտության պատմության մեջ: «Եթե որևէ մեկը Շիմանովսկու երաժշտության համաշխարհային ընկալման մասին երբևիցե երաժշտագիտական աշխատություն գրի, ապա այդ մենագրության մեջ անպատճառ պետք է հիշատակի վրոցլավյան ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի և Հովհաննես Չեքիջյանի ղեկավարած երգչախմբի մասին» [20]:

Լեհ երգչուհի, սոպրանո Ստեֆանյա Վոյտովիչը համերգից հետո նկատեց. «Մենք՝ մեներգիչներս, ուղղակի անսահման ներշնչվում ենք, երբ մեր թիկունքում զգում ենք այնպիսի մի կոլեկտիվի շունչը, ինչպիսին հայկական երգչախումբն է» [11]:

Իսկ լեհ ժամանակակից աշխարհահռչակ կոմպոզիտոր Քշիշտոֆ Պենդերեցկին իր «Stabat Mater»-ի երևանյան պրեմիերայի մասին ասաց. «Չէի պատկերացնում, որ երկս՝ «Stabat Mater»-ը, կներկայացվի այսքան խորաթափանց, այսքան վարպետորեն և գեղարվեստորեն: Զարմանում եմ, որ երգչախումբը երգեց անգիր: Երջանիկ եմ, որ արժանացա ստեղծագործությանս այսօրինակ հիանալի կատարման» [13, էջ 79]:

Ռոսինիի «Stabat Mater»-ի երևանյան պրեմիերան

Շնորհիվ Հովհաննես Չեքիջյանի՝ 1965 թվականին Ռոսինիի «Stabat Mater»-ը մուտք գործեց Երևան:

«Մայրաքաղաքի երաժշտական առօրյան այս տարի հիանալի ձևով զուգակցվում է հյուրախաղերով, այնպես որ այս տարին մենք կարող ենք համարել երաժշտական տարի: Հենց միայն թվերը՝ ռուսական երաժշտության տասնօրյակը, Անդրկովկասյան երաժշտական գարունը, բրիտենյան օրերը, երիտասադական երկրորդ փառատոնը, բազմաթիվ օպերային և էստրադային հյուրախաղերը, փաստում են այս միտքը:

Եվ ահա երևանյան երաժշտական տարին գալիս է եզրափակելու մի նոր հախուռն երաժշտական ալիք: Այն կոչվում է «Երևանյան երաժշտական օրեր»: Այս երկրորդ ֆեստիվալի օրերին ելույթներ կունենան Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը՝ նոր ծրագրով, պետական երգչախումբը, Հայֆիլհարմոնիայի կամերային անսամբլը, «Մադրիգալ» վոկալ անսամբլը՝ Լիսիցյան քույրերի մասնակցությամբ: Մենահամերգներով հանդես կգան ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, Լուսինե Զաքարյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Տիիտ Կուուզիկը (Էստոնիա), Ամերիկայի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնի մեներգիչ Ջերոմ Հայնսը: Մենահամերգով հանդես կգան Մանուկ Բարիկյանը (Անգլիայի ռադիոյի և հեռուսատեսության մենակատար) և երգեհոնահար Հարրի Գրոդբերգը: Սփյուռքահայ երգչուհի Արփինե Փեհլիվանյանն առաջին անգամ հնարավորություն ունեցավ օպերային դերերգերով բեմ ելնելու: Նրա Անուշը դասվեց լավագույնների շարքը» [10]:

Եվ ահա «Երևանյան երաժշտական օրեր» 1965 թ. երկրորդ փառատոնի ընթացքում (նոյեմբերի 15, Երևան) Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում առաջին անգամ հնչեց Ռոսինիի «Stabat Mater»-ը՝ Հայաստանի պետական երգչախմբի, վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, մենակատարներ՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Միհրան Երկաթի (բարիտոն), ՀԽՍՀ վաստակավոր արտիստուհի Գոհար Գալաչյանի (մեցցո-սոպրանո) և Իզաբելա Այդինյանի (սոպրանո) կատարմամբ: Տենորի երգամասի կատարման համար հրավիրվել էր լատիշ նշանավոր տենոր, Լատվիայի օպերայի և բալետի թատրոնի մեներգիչ Իզրաիլ Ֆեյգելսոնը (Ռիգա):

Դիրիժորն էր Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, կապելլայի գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանը:

Ի դեպ, ամիսներ առաջ մաեստրոն արժանացել էր հայրենիքում իր առաջին պատվավոր կոչմանը: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1965 թ. հունիսի 17-ի հրամանագրով երաժշտական արվեստի մի խումբ գործիչների՝ կոմպոզիտորներ Էդուարդ Աբրահամյանին, Ալեքսանդր Աճեմյանին, Գևորգ Արմենյանին, Ադամ Խուդոյանին, Կոնստանտին Օրբելյանին և խմբավար Հովհաննես Չեքիջյանին շնորհվել էր Հայկական ՍՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Համերգն ունեցավ փայլուն հաջողություն, իսկ օրը եզրափակվեց Հայֆիլհարմոնիայի դիրեկտոր Վլադիլեն Բալյանի՝ 1965 թ. նոյեմբերի 15-ին հետևյալ

հրամանով. «Ստեղծագործական մեծ նվաճումների, «Երևանյան երաժշտական օրեր» 1965 թ. երկրորդ փառատոնին ունեցած հաջող ելույթի, Ռոսինիի «Ստաբատ Մատեր» բարդագույն ստեղծագործության նախապատրաստման և առաջին կատարման համար Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանին, ինչպես նաև կապելլայի ողջ կազմին հայտնել ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ:

Այս հրամանն ընթերցել Հայֆիլհարմոնիայի բոլոր կոլեկտիվներում»:


ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԻՄ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆՇԱՆԱԿՈՎ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐՄԱԿԱՊ

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃ

ՆԻԿՈՐՈՎ ՆԵՏՍՈՒԼԱՅ

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՕՐԵՐ»
1965 Թ.

Նոյեմբերի 15-ին

ԾՐԱԳԻՐ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻՆ

ՎԱՐՈՒԱԿԱՎՈՐ ԿՈՂՄԻՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ԿԱՊԵԼԼԱՅԻՆ

Դիրիժոր՝ արվեստի վաստակավոր գործիչ՝
Կոչումով գեղարվեստական ղեկավար
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ

Մենակատարներ՝
ՀՈՒՍԻ ժողովրդական արտիստ
ՄԻՀՐԱՆ ԵՐԿԱԹ
(բարիտոն)

ՀՈՒՍԻ վաստակավոր արտիստուհի
ԳՈՀԱՐ ԳԱԼԱՉՅԱՆ
(մեցցո-սոպրանո)

ԻԶԱԲԵԼԼԱ ԱՅԴԻՆՅԱՆ
(սոպրանո)

ԻՍՐԱԵԼ ՆԵՏՍԿԱՅԱ (Դիպա)
(ալտնար)

ԱԲԱՍԻԹԻ ԲԱԺԻՆ

ՈՌՈՍԻՆԻ

STABAT MATER

(սոսափի կատարում).

1. Մեսդոդոմիթիա
2. Ուրիա
Մենակատար՝ Ի. Ֆեյգինան
3. Դանա
Մենակատարներ՝ Ի. Ալդինյան,
Գ. Գալաչյան
4. Ուրիա
Մենակատար՝ Մ. Երկաթ
5. Խաչիկ և սիլոատաֆ
Մենակատար՝ Մ. Երկաթ
6. Նվարանա
Մենակատարներ՝ Ի. Ալդինյան, Գ. Գալաչյան,
Ի. Ֆեյգինան, Մ. Երկաթ
7. Տոմիանիս
Մենակատար՝ Գ. Գալաչյան
8. Ուրիա և խմբերգ
Մենակատար՝ Ի. Ալդինյան
9. Խմբերգ
10. Ֆինալ

ԻՍՐԱԵԼԻ ԲԱԺԻՆ

ՀՈՒՍԻԼՏ—Կանանաց դա մաժոր «Մարիամի հաղթանակի երգ»
Մենակատար՝
ՀՈՒՍԻ վաստակավոր արտիստուհի
ԳՈՀԱՐ ԳԱԼԱՉՅԱՆ

Համերգն ուշագրավ երևույթ դարձավ մայրաքաղաքի երաժշտական կյանքում. «Այն մեկ անգամ ևս ապացուցեց, որ Հայաստանի պետական երգչախումբն ու սիմֆոնիկ նվագախումբը բավարար չափով ունեն ներքին ուժ և պրոֆեսիոնալիզմ՝ դասական ամենաբարդ ստեղծագործությունների պատշաճ ու լիարժեք մարմնավորման համար» [7]:

Քանդակագործ Լևոն Թոքմաջյանը համերգը բնորոշեց որպես իսկական, փայլուն հաղթանակ: «Երեկոյան Երևան» թերթի նոյեմբերի 16-ի համարում լույս տեսած հոդվածում նա գրեց. «Եվ իրոք, հաղթանակ էր Հայաստանի պետական երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի, սոլիստ կատարողների և նրանց ղեկավար, արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Չեքիջյանի համար՝ երևանյան երաժշտասեր հասարակայնությանը Ռոսինիի «Ստաբատ Մատեր»-ի ցուցադրումը: Այդ գործը առաջին անգամ կատարվեց Երևանում: Կատարողների կողմից ցուցաբերվեց բարձր վարպետություն, նուրբ զգացողություն և, որ ամենակարևորն է, ռոսինյան երաժշտության դասական մեկնաբանում: Հայտնի է, որ Ռոսինին այդ ստեղծագործությունը գրել է ստեղծագործական երկար ընդմիջումից հետո: Ստեղծագործության բոլոր տասը մասերումն էլ տիրապետում է գեղեցիկ մեղեդին: Թեման, որ սկսում են սոլիստները, անցնելով նվագախմբից երգչախմբին, է՛լ ավելի է հարստանում գունային և տրամադրության առումով: Մեներգերը վարպետորեն կատարեցին սոլիստներ Գոհար Գալաչյանը (ալտ), Իզաբելլա Այդինյանը (սոպրանո) և Միհրան Երկաթը (բարիտոն), որոնք իրենց ձայնի հարուստ գույներով լրացնում էին երգչախմբին: «Ստաբատ Մատեր»-ի

կուլմինացիան ֆուգան է, որտեղ դիրիժորի հմուտ և վստահ ձեռքի շարժումներից ծնունդ էին առնում թեմայի վարիացիաները, տարբեր ձայներում և մեկը մյուսին անցնելով ստեղծում էին ֆուգային հատուկ նրբահյուս ինտոնացիաներ, երանգներ: Դահլիճը թնդում էր ծափահարություններից: Այդ օրը ռոսինյան երաժշտության հաղթարշավն էր» [3]:

Չեքիջյանի և հայկական կապելլայի ելույթն արժանացավ ոչ միայն ունկնդրի ջերմ ընդունելությանը, այլև մամուլի և երաժշտագետների արձագանքին:

«Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ «Երևանյան երաժշտական օրեր» ֆեստիվալի երրորդ համերգը: Չնայած դեռ մոտ չէ ֆեստիվալի ավարտը, և ունկնդիրները դեռևս հնարավորություն կունենան մեկից ավելի անգամ ներկա գտնվելու երաժշտության այդ տոնահանդեսի բազմաթիվ միջոցառումներին, սակայն արդեն այսօր էլ կարելի է ուրախությամբ նշել, որ ֆեստիվալը կազմակերպված է նպատակասլաց ձևով՝ նկատի առնելով մեր երաժշտասեր հասարակայնության ամենաբարձր պահանջները: Այդ բանի լավագույն ապացույցն էր երկուշաբթի օրը կայացած սիմֆոնիկ համերգը, որի ժամանակ Հայաստանի պետական երգչախումբը, սիմֆոնիկ նվագախումբը ներկայացրել էին չափազանց հետաքրքիր ու խոստումնալից ծրագիր: Համերգում պետք է կատարվեին Ռոսինիի «Ստաբատ Մատեր» ստեղծագործությունը և Շուբերտի դո մաժոր կանտատը՝ երկեր, որոնք վաղուց մտել են համաշխարհային դասական երաժշտության շտեմարան: Երաժշտասերների հետաքրքրությունը բարձրացել էր նաև այն պատճառով, որ Ռոսինիի «Ստաբատ Մատերը» Երևանում հնչելու էր առաջին անգամ: Հենց սկզբից ասենք, որ ունկնդիրները այդ երեկո դահլիճից հեռացան հոգեպես բավարարված՝ իրենց հետ տանելով Ռոսինիի ու Շուբերտի զմայլելի հնչյունների անկրկնելի աշխարհը:

Ռոսինիի «Ստաբատ Մատերը» ոգեշունչ արվեստի մի հոյակապ օրինակ է, որտեղ սքանչելի ներդաշնակությամբ միաձուլվել են երգչախմբային-սիմֆոնիկ երաժշտության բազմապիսի հնարավորությունները: Պետք է արժանին մատուցել կատարողներին՝ մեներգիչներ Գոհար Գալաչյանին, Իզաբելլա Այդինյանին, Միհրան Երկաթին և Հայաստանի պետական երգչախմբին ու սիմֆոնիկ նվագախմբին, որոնք շնորհաշատ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ կարողացան հաջողությամբ հաղթահարել ստեղծագործության տեխնիկական դժվարությունները և, ընդհանուր առմամբ, ճշտորեն բացահայտել Ռոսինիի երաժշտության գաղափարա-գեղարվեստական արժանիքները: Ռոսինիի նրբագեղ, երգային մեղեդիները, ախորժալուր հարմոնիաները, նրա երաժշտության ներքին դինամիկան ու կերպարների ընդգծված ցայտունությունը ճշտորեն էին ընկալվել կատարողների կողմից և ստացել յուրօրինակ մեկնաբանություն: …Ռոսինիի «Ստաբատ Մատերի» կատարումը, ընդհանուր առմամբ, մեծ տպավորություն թողեց և ջերմորեն ընդունվեց ունկնդիրների կողմից» [7]:

Համերգի երկրորդ բաժնում կատարվեց Շուբերտի դո-մաժոր կանտատը՝ «Միրիամի հաղթերգը», որը 1964 թվականին երևանյան ունկնդրին կրկին ծանոթացրել էր Հովհաննես Չեքիջյանը:

«Երեկոյան Երևան» թերթի 1965 թ. նոյեմբերի 19-ի համարում տպագրվեց

երաժշտագետ Արաքսի Հարությունյանի (հետագայում՝ Սարյան) ««Ստաբատ մատեր»-ը առաջին անգամ Երևանում» ծավալուն հոդվածը, որտեղ կարդում ենք. «Մի քանի օր է, ինչ սկսվել են «Երևանյան երաժշտական օրեր»-ը: Երաժշտասերները մեծ գոհունակությամբ ու բարձր հետաքրքրությամբ են ընդունում ֆեստիվալի յուրաքանչյուր նախաձեռնություն: Անհրաժեշտ է այստեղ նշել, որ ֆեստիվալն ընդհանրապես շնորհակալ և խիստ կարևոր միջոցառում է: Արդեն առաջին «Երիտասարդ ձայներ» ֆեստիվալը, որը տեղի ունեցավ անցյալ տարի աշնանը, մեծ խանդավառություն առաջացրեց և՛ երաժիշտների, և՛ երաժշտասերների մոտ: Եվ հիմա, դարձյալ նույն խանդավառությամբ իրագործվում է երկրորդ ֆեստիվալը:

Ֆեստիվալում առաջին անգամ հնչեց իտալացի հռչակավոր կոմպոզիտոր Ջոակինո Ռոսինիի «Ստաբատ մատեր» ստեղծագործությունը: Մինչ այս Ռոսինին մեր ունկնդիրներից շատերին ծանոթ էր իր օպերային գործերով: «Ստաբատ մատեր»-ի կատարումը հնարավորություն տվեց ավելի լիարժեք պատկերացում կազմելու կոմպոզիտորի ստեղծագործական անհատականության մասին: Այդ բանի համար երաժշտասերները իրենց շնորհակալական առաջին խոսքը պետք է ուղղեն տաղանդավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանին: Առաջին անգամը չէ, որ Չեքիջյանը մեր ունկնդիրներին ներկայացնում է անծանոթ, հազվագյուտ կատարվող գործեր: Դա արվեստագետի հիանալի հատկությունն է: «Ստաբատ մատեր»-ը միջնադարում մեծ տարածում ունեցած կրոնական բնույթի գրական կոմպոզիցիա է: Այն սկսվում է «Ստաբատ մատեր դոլորոսա» բառերով, որը նշանակում է «Կանգնած է ողբացյալ մայրը»: Այդ կոմպոզիցիայի առաջին բառերն էլ հենց դարձել են վերնագիրը: Միջնադարյան այս բանաստեղծությունը օգտագործվել է բազմաթիվ կոմպոզիտորների կողմից: Հայտնի են դրա հիման վրա գրված Պալեստրիանայի, Հայդնի, Շուբերտի, Վերդիի, Դվորժակի և վերջապես Ռոսինիի ստեղծագործությունները: Վերջինս բոլորովին ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել այդ գործին: Բանաստեղծության հոգևոր բովանդակությունը Ռոսինին մեկնաբանել է աշխարհիկ կենսազգացողությամբ: Ամբողջ ստեղծագործությունը հագեցած է ռոսինյան երգային և ցայտուն մեղեդիներով:

Ստեղծագործության աշխարհիկ բնույթն էլ հենց դարձել է Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանման ելակետը: Նրա ղեկավարությամբ ստեղծագործությունը հնչեց կենսահաստատ, կյանքով լի: Սրանում քիչ չէր և մեներգիչների՝ Միհրան Երկաթի, Գոհար Գալաչյանի, Իզաբելլա Այդինյանի մասնակցությունը: Նրանց հաջողվել էր միաձուլվել նվագախմբի ու երգչախմբի հետ, բացահայտել երկրային մարդու զգացումները, որ ընկած էին հոգևոր սյուժեով գրված ստեղծագործությունների հիմքում:

Լավ տպավորություն թողեց և ստեղծագործության բազմաձայն հյուսվածքի բացահայտումը: Սրանում դարձյալ երախտիքը Հովհաննես Չեքիջյանինն է:

Ռոսինիի «Ստաբատ մատեր»-ի կատարումը հաճելի նորություն էր Երևանի երաժշտասերների համար» [4]:

Այսպիսով՝ շնորհիվ Հ. Չեքիջյանի՝ «Ռոսինիի «Ստաբատ մատեր» ստեղծագործությունը, որն ավելի քան մեկ դար հուզում է աշխարհի երաժշտասերներին, վեհորեն հնչեց նաև Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում: Ներ-

կաները բուռն ծափերով վարձատրեցին կատարողներին: Մասնագետները նշեցին, որ երկու կոլեկտիվները համատեղ ջանքերով ստեղծագործական հաղթանակ տարան: Սովետական Միության ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը ասաց, որ իրեն շատ դուր եկավ երգչախմբի և նվագախմբի կատարողական կուլտուրան» [9]:

Ռոսինիի «Stabat Mater»-ի համամիութենական պրեմիերան

Հովհաննես Չեքիջյանի շնորհիվ՝ Ռոսինիի «Stabat Mater»-ն առաջին անգամ հնչեց նաև ԽՍՀՄ-ում:

Ռոսինիի «Stabat Mater»-ի երևանյան պրեմիերայից հետո տաղանդավոր դիրիժորը հարցազրույց է տալիս «Коммунист» թերթին՝ ներկայացնելով առաջիկա անելիքները:

«После концерта Государственной хоровой капеллы Армении мы встретились с ее руководителем и дирижером, заслуженным деятелем искусства Ованесом Чекиджяном, чтобы поблагодарить его за прекрасное исполнение капеллой “Stabat Mater” Россини и узнать о дальнейших планах коллектива.

- Да, конечно, “Stabat Mater” можно считать украшением нашей программы, - сказал О. Чекиджян, - в нем видно творческое лицо Россини, дыхание и глубина его чувств.

- Намерены ли Вы повторить его исполнение в ближайшем будущем?

- Сегодняшним концертом мы заканчиваем наши выступления в республике в этом году. На днях мы уезжаем в Москву, чтобы принять участие в фестивале «Русская зима». На этом фестивале будут выступать лучшие музыкальные коллективы страны. Он продлится 15 дней.

- Что Вы исполните на фестивале?

- Капелла везет лучшие номера своей программы, которые будут исполнены с Московским симфоническим оркестром: кантаты А. Арутюняна «Родина», Г. Ахиняна «Саят-Нова», Э. Мирзояна «Советская Армения», отрывки из оперы Тиграняна «Ануш», «Реквием» Моцарта, «Stabat Mater» Россини, хоровые произведения Брамса, Генделя, Шуберта, Верди, Глинки и других – всего 43 крупных произведения, часть которых исполняется впервые.

После фестиваля в Москве Государственная хоровая капелла Армении продолжит свое турне по городам Советского Союза, даст концерты в Риге, Вильнюсе, Каунасе, Тарту, Таллине, Ленинграде, Минске, Киеве, Львове, Харькове и Одессе.

Во время наших концертов в качестве солистов выступят народный артист Армянской ССР Мигран Еркат, заслуженные артистки республики Гоар Галачян, Изабелла Айдинян, Елена Микаелян, Эльвира Узунян, солист Рижской филармонии Израил Фейгельсон, солист Московской филармонии, профессор Александр Иохеллес.

Мы с волнением ждем открытия фестиваля «Русская зима». Ведь нашему коллективу впервые предстоит встретиться с такой массовой аудиторией. И мы надеемся с честью выдержать этот ответственный экзамен» [14].

1965 թ. դեկտեմբերին Խորհրդային Միության մայրաքաղաք Մոսկվայում տեղի ունեցավ երաժշտական մեծ տոնահանդես՝ «Ռուսական ձմեռ» փառա-

տոնը, որի ընթացքում Մեծ թատրոնի, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի և Կ. Ստանիսլավսկու անվան թատրոնի բեմերում պիտի հանդես գային դասական, ժամանակակից օպերային և բալետային երաժշտության կատարողներ: Մայրաքաղաքի համերգային դահլիճներում պիտի ելույթներ ունենային համաշխարհային ճանաչում ստացած խորեգրաֆիկ կոլեկտիվներ, ԽՍՀՄ ժողովրդական պարերի անսամբլը, «Բերյոզկան», ՈՒԽՍՀ ժողովրդական պարերի անսամբլը, Խորհրդային բանակի երգի-պարի կարմրադրոշ անսամբլը, Ռուսական Մ. Պյատնիցկու անվան երգչախումբը, ԽՍՀՄ սիմֆոնիկ նվագախումբը: Հայաստանից հրավիրված միակ կոլեկտիվը Հայաստանի պետական երգչախումբն էր, որը Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ Մոսկվա էր մեկնելու ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրության հրավերով:

«Ֆեստիվալային երկու համերգներին ՀՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ կկատարվեն Ռոսսինիի «Ստաբատ մատերը» (ՍՍՌՄ-ում առաջին անգամ), Բեթհովենի Ֆանտազիան, Շուբերտի Կանտատը, Գ. Հախինյանի «Սայաթ-Նովա» կանտատը, հատվածներ Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա» և Տիգրանյանի «Անուշ» օպերաներից: «Ռուսական ձմեռ» ֆեստիվալից հետո հայկական երգչախումբը համերգային երկամսյա շրջագայության կմեկնի Մերձբալթյան հանրապետություններ, Ուկրաինա, Բելոռուսիա» [8]:



1965 թ. դեկտեմբերի 27-ին և 28-ին Մոսկվայում տեղի ունեցավ Ռոսինիի «Stabat Mater»-ի համամիութենական պրեմիերան:

Սա Մոսկվա Չեքիջյանի երկրորդ այցն էր: Մաեստրոյի ղեկավարությամբ հայկական կապելլայի մոսկովյան առաջին՝ բախտորոշ ու փայլուն հյուրախա-

ղերը տեղի էին ունեցել մեկ տարի առաջ՝ 1964 թ. նոյեմբերի 24-29, որի ընթացքում Խորհրդային Միությունում առաջին անգամ Մաեստրոն կատարեց Շուբերտի «Միրիամի հաղթերգը» կանտատը:

Չայկովսկու անվան համերգային մեծ դահլիճի լեփ-լեցուն սրահում Խորհրդային Միությունում առաջին անգամ հնչեց Ռոսինիի «Stabat Mater»-ը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ՝ Հայաստանի պետական երգչախմբի և ՍՍՀՄ կինեմատոգրաֆիայի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Մենակատարներն էին Միհրան Երկաթը (բարիտոն), Գոհար Գալաչյանը (մեցցո-սոպրանո), Իզաբելլա Այդինյանը (սոպրանո) և Լենինգրադի օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեներգիչ Միխայիլ Դովենմանը (տենոր) [12, էջ 88]:

Մոսկովյան փայլուն պրեմիերայից հետո Մաեստրոյի և հայկական կապելլայի կատարմամբ «Stabat Mater»-ը շարունակեց իր հաղթարշավը՝ 1966 թ. հունվարի 24-ին Էստոնիայում՝ Տալինում (էստոնական ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբի հետ), ապա՝ Ռիգայում, 1966 թ. հունվարի 30-ին՝ Լենինգրադում (Լենինգրադի կոնսերվատորիայի սիմֆոնիկ նվագախմբի հետ), փետրվարի 5-ին և 6-ին՝ Մինսկում (Բելոռուսական ԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ), փետրվարի 10-ին՝ Կիևում...

«Stabat Mater»-ը Հայաստանի ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ու ԽՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ Մոսկվայում հնչեց 1974 թ. ապրիլի 17-ին և 18-ին, Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում: Մենակատարներն էին Լուսինե Զաքարյանը, Օլգա Գաբայանը, Վահան Միրաքյանը և Բորիս Գրեկովը:

Իսկ մինչ այդ՝ 1974 թ. ապրիլի 6-ին, Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ «Stabat Mater»-ը հնչել էր Գորկիում: Այս անգամ՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի և Գորկու պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Մենակատարներն էին կրկին Լուսինե Զաքարյանը, Օլգա Գաբայանը, Վահան Միրաքյանը և Բորիս Գրեկովը:

КРЕМЛЕВСКИЙ КОНЦЕРТНЫЙ ЗАЛ

СУББОТА 6 АПРЕЛЯ

РОССИНИ—„СТАБАТ МАТЕР“

Исполнители:

ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЧЕСКАЯ КАПЕЛЛА АРМЕНИИ

СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР ГОРЬКОВСКОЙ ГОСУДАРСТВЕННОЙ ФИЛАРМОНИИ

Дирижер — народный артист АрмССР, лауреат Государственной премии, художественный руководитель и главный дирижер капеллы

ОГАНЕС ЧЕКИДЖЯН

Солисты:

Народная артистка АрмССР

ЛУСИНЭ ЗАКАРЯН (сопрано)

Заслуженная артистка АрмССР

ОЛЬГА ГАБАЯН (меццо-сопрано)

Заслуженный артист АрмССР

ВАГАН МИРАКЯН (тенор)

Солист Армянского академического театра оперы и балета

БОРИС ГРЕКОВ (бас)

Начало в 19 час. 30 мин.

Касса Кремлевского зала открыта с 11 час.

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ Հայկական կապելլայի և Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ «Stabat Mater»-ը Մոսկվայում՝ Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի մեծ դահլիճում, հնչեց 1983 թ. հունվարի 23-ին և 25-ին: Մենակատարներ՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Նինա Իսակովա (մեցցո-սոպրանո), ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Լուսինե Զաքարյան (սոպրանո), ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Կարլ Զարին (տենոր), Մոլդավական ՍՍՀ վաստակավոր արտիստ Յուրի Ստատնիկ (բաս)... [21]

Ավանդույթին հավատարիմ՝ մոսկովյան այս հյուրախաղերի ընթացքում Մոսկվայում առաջին անգամ հնչեց Լամբերտի «Ռիո-Գրանդեն»:

МОСКОВСКАЯ ОРДЕНА ТРУДОВОГО КРАСНОГО ЗНАМЕНИ ГОСУДАРСТВЕННАЯ ФИЛАРМОНИЯ

БОЛЬШОЙ ЗАЛ КОНСЕРВАТОРИИ

ПРОГРАММА

Воскресенье, 27 января

Абонемент № 2

Сезон 1982—1983 гг.

Академический

СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР

Московской государственной

филармонии

ЗАСЛУЖЕННЫЙ КОЛЛЕКТИВ РЕСПУБЛИКИ

Государственная

АКАДЕМИЧЕСКАЯ КАПЕЛЛА АРМЕНИИ

Дирижер —

народный артист СССР, лауреат Государственной премии СССР, лауреат Государственной премии Армянской ССР, профессор

Оганес ЧЕКИДЖЯН

Солисты:

заслуженный артист РСФСР

Николай ПЕТРОВ

(фортепиано)

солистка Московского академического музыкального театра им. народных артистов СССР К. С. Станиславского и Вл. И. Немировича-Данченко, народная артистка СССР, лауреат Государственной премии РСФСР им. М. И. Глинки

Нина ИСАКОВА

(меццо-сопрано)

народная артистка Армянской ССР

Лусине ЗАКАРЯН

(сопрано)

народная артист СССР, лауреат Государственной премии Армянской ССР

Карл ЗАРИНЬ

(тенор)

солистка капеллы

Нина АКОПЯН

(меццо-сопрано)

солист Государственного академического большого театра СССР, заслуженный артист Молдавской ССР, лауреат международных конкурсов

Юрий СТАТНИК

(бас)

I отделение

РОССИНИ (1792—1868) — «Stabat Mater» для солистов, хора и оркестра

№ 1. Интродукция: Andantino moderato

№ 2. Ария: Allegro maestoso

№ 3. Дуэт: Largo

№ 4. Ария: Allegretto Maestoso

№ 5. Хор и речитатив: Andante mosso

№ 6. Квартет: Allegro moderato

№ 7. Каватина: Andante grazioso

№ 8. Ария и хор: Andante Maestoso

№ 9. Квартет: Andante

№ 10. Финал: Allegro

Солисты: Л. ЗАКАРЯН, К. ЗАРИНЬ, Н. ИСАКОВА, Ю. СТАТНИК

II отделение

ЛАМБЕРТ (1686—1964) — «Рио Гранде» для фортепиано, меццо-сопрано, хора и оркестра

(Первое исполнение в Москве)

Солисты: Н. ИСАКОВА, Н. АКОПЯН

О. ЧЕКИДЖЯН (1928) — «Весенние грезы» — вокально-симфоническая поэма для большого симфонического оркестра, хора и солистов

(Первое исполнение в Москве)

Солисты: Л. ЗАКАРЯН, К. ЗАРИНЬ

МОСКОВСКАЯ ОРДЕНА ТРУДОВОГО КРАСНОГО ЗНАМЕНИ ГОСУДАРСТВЕННАЯ ФИЛАРМОНИЯ

БОЛЬШОЙ ЗАЛ КОНСЕРВАТОРИИ

ПРОГРАММА

Вторник, 27 января

Сезон 1982—1983 гг.

Академический

СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР

Московской государственной

филармонии

ЗАСЛУЖЕННЫЙ КОЛЛЕКТИВ РЕСПУБЛИКИ

Государственная

АКАДЕМИЧЕСКАЯ КАПЕЛЛА АРМЕНИИ

Дирижер —

Народный артист СССР, лауреат Государственной премии СССР, лауреат Государственной премии Армянской ССР, профессор

Оганес ЧЕКИДЖЯН

Солисты:

Солистка Московского академического музыкального театра им. народных артистов СССР К. С. Станиславского и Вл. И. Немировича-Данченко

народная артистка СССР, лауреат Государственной премии РСФСР им. М. И. Глинки

Нина ИСАКОВА

(меццо-сопрано)

Народный артист СССР, лауреат Государственной премии Армянской ССР

Карл ЗАРИНЬ

(тенор)

Народная артистка Армянской ССР

Лусине ЗАКАРЯН

(сопрано)

солист Государственного академического большого театра СССР, заслуженный артист Молдавской ССР, лауреат международных конкурсов

Юрий СТАТНИК

(бас)

I отделение

Форе

(1845—1924)

«Реквием» — для солистов, хора и оркестра, соч. 48

Introit et Kyrie

Offertoire

Sanctus

Pie Jesu

Agnus Dei

Libera me

In paradisum

Солисты: Л. ЗАКАРЯН, Ю. СТАТНИК

II отделение

Россини

(1792—1868)

«Stabat Mater» — для солистов, хора и оркестра

№ 1. Интродукция: Andantino moderato

№ 2. Ария: Allegro maestoso

№ 3. Дуэт: Largo

№ 4. Ария: Allegretto Maestoso

№ 5. Хор и речитатив: Andante mosso

№ 6. Квартет: Allegro moderato

№ 7. Каватина: Andante grazioso

№ 8. Ария и хор: Andante Maestoso

№ 9. Квартет: Andante

№ 10. Финал: Allegro

Солисты: Л. ЗАКАРЯН, Н. ИСАКОВА, К. ЗАРИНЬ, Ю. СТАТНИК

Եզրակացություններ

Այսպիսով՝

1. շնորհիվ Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի՝ 1965 թվականի նոյեմբերի 15-ին Երևանում առաջին անգամ հնչեց Ռոսինիի «Stabat mater»-ը: Այն իր հաստատուն տեղը գրավեց հայկական կապելլայի երկացանկում, որի շնորհիվ Հայաստանում «Stabat mater»-ի համերգային կյանքը շարունակվում է մինչ օրս.

2. երևանյան պրեմիերայից անմիջապես հետո՝ 1965 թվականի դեկտեմբերի 27-ին և 28-ին, «Stabat Mater»-ն առաջին անգամ հնչեց Մոսկվայում՝ Հ. Չեքիջյանի և հայկական կապելլայի կատարմամբ իրականացվեց «Stabat Mater»-ի համամիութենական պրեմիերան.

3. մոսկովյան պրեմիերային հաջորդեցին «Stabat Mater»-ի պրեմիերաները Լենինգրադում, մերձբալթյան հանրապետություններում, Ուկրաինայում և Բելոռուսիայում.

4. Ռոսինիի «Stabat Mater»-ի չեքիջյանական մեկնաբանությունն առանձնանում է իր բարձր պրոֆեսիոնալիզմով ու անհատական ինքնատիպությամբ: Օժտված լինելով երաժշտական կատարյալ ու նուրբ լսողությամբ և ռիթմի սուր զգացողությամբ, ինչպես նաև ժեստերի միջոցով երաժշտության ողջ բովանդակության արտահայտման դիրիժորական բացառիկ օժտվածությամբ՝ Հ. Չեքիջյանը խորապես ներթափանցում է «Stabat Mater»-ի դրամատուրգիական բովանդակության մեջ, բացահայտում զարգացման կոնֆլիկտայնությունը, վարակվում ստեղծագործության հուզական տրամադրությամբ և դրանով իսկ ազդելով կատարողների վրա՝ տեսանելի է դարձնում երաժշտական կտավի ողջ ծավալումը, վերստեղծում կոմպոզիտորի մտահղացման հուզական մթնոլորտն ու ստեղծում միասնական կուռ հնչողություն, որտեղ միաձուլվում են երգչախմբի, նվագախմբի և մենակատարների պարտիաները:

Գրականություն

1. Ասատրյան Ա. Հովհաննես Չեքիջյանի ներդրումը հայ երաժշտարվեստում, «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 16-51:

2. Բաղդասարյան Ա. Հոգևոր երաժշտությունը Մաեստրո Հ. Չեքիջյանի կատարողական արվեստում, «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 52-62:

3. Թոքմաջյան Լ. Իսկական, փայլուն հաղթանակ, «Երեկոյան Երևան», 16 նոյեմբերի, 1965:

4. Հարությունյան Ա. «Ստաբատ մատեր»-ը առաջին անգամ Երևանում, «Երեկոյան Երևան», 19 նոյեմբերի, 1965:

5. Հարությունյան Ա. Հովհաննես Չեքիջյանի հյուրախաղերը Լեհաստանում, «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 117-126:

6. «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019:

7. Ղափանցյան Ա. «Ստաբատ մատերի» առաջին կատարումը, Հովհաննես Չեքիջյանի անձնական արխիվ:

8. Մելքոնյան Հ. Ձեզ կանաչ ճամփա, կարմիր հանգրվան, «Գրական թերթ», 17 դեկտեմբերի, 1965:

9. «Ստաբատ Մատերը» կատարվեց Երևանում. «Ավանգարդ», 18 նոյեմբերի, 1965:

10. Վարդանյան Վ. Երևանյան երաժշտական օրեր, «Երեկոյան Երևան», 17 նոյեմբերի, 1965:

11. Վարդանյան Ռ. Ծափահարում է Լեհաստանը (Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը), «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980:

12. Տիգրանյան Մ. Հովհաննես Չեքիջյան. մոսկովյան հյուրախաղեր, «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 85-106:

13. Аветисян Н. Эстетические взгляды Оганеса Чекиджяна, Հովհաննես Չեքիջյան – 85, գիտական նստաշրջանի նյութեր. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 70-82:

14. Вштуни М. Их ждет Москва, «Коммунист», 22 декабря, 1965, N 301.

15. Конен В. История зарубежной музыки. Москва, «Музыка», 1984.

16. Тэрьян М. Дебют талантливого дирижера, «Коммунист», 30 ноября, 1961.

17. Фраккароли А. Россини (перевод с итальянского Ирины Константиновой). Москва, «Молодая гвардия», 1987.

18. Bukowski R. Ciekawe interpretacje, “Wieczor Wroslawia”, 23 kwietnia, 1980.

19. Dzis inauguracia Dni Kultury Radzieckiej w Polsce, “Gazeta Robotnicza”, 18-20.IV.1980.

20. Kofin E. W dwa tygodnie cztery pory roku (Wroclawska Filharmonia na Zakaukaziu (2), “Wieczor Wroslawia”, 2 maja, 1980.

21. https://www.youtube.com/watch?v=6FF6f4tqoj0 (ներբեռնման օրը՝ 20.04.2022).

References

1. Asatryan A. Hovhannes Cheqijyani nerdrumy' hay erajhshtarvestum, «Hovhannes Cheqijyan–90» gitakan nstashrjani nyut'eri jhoghovac'u. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019, e'j 16-51.

2. Baghdasaryan A. Hogevor erajhshtut'yuny' Maestro H. Cheqijyani kataroghakan arvestum, «Hovhannes Cheqijyan – 90» gitakan nstashrjani nyut'eri jhoghovac'u, Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019, e'j 52-62.

3. T'oqmajyan L. Iskakan, p'aylun haght'anak, «Erekoyan Erevan», 16 noyemberi, 1965.

4. Harut'yunyan A. «Stabat mater»-y' ar'ajin angam Erevanum, «Erekoyan Erevan», 19 noyemberi, 1965.

5. Harut'yunyan A. Hovhannes Cheqijyani hyuraxaghery' Lehastanum, «Hovhannes Cheqijyan – 90» gitakan nstashrjani nyut'eri jhoghovac'u. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019, e'j 117-126.

6. «Hovhannes Cheqijyan – 90» gitakan nstashrjani nyut'eri jhoghovac'u. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019.

7. Ghap'ancyan A. «Stabat materi» ar'ajin katarumy', Hovhannes Cheqijyani and'nakan arxiv.

8. Melqonyan H. D'ez kanach tzamp'a, karmir hangrvan, «Grakan t'ert'», 17 dektemberi, 1965.

9. «Stabat Matery'» katarvec Erevanum, «Avangard», 18 noyemberi, 1965.

10. Vardanyan V. Erevanyan erajhshtakan o'rer, «Erekoyan Erevan», 17 noyemberi, 1965.

11. Vardanyan R. C'ap'aharum e' Lehastany' (Hayastani petakan akademiakan ergchaxmbi hyuraxaghery'), «Sovetakan Hayastan», 20 mayisi, 1980.

12. Tigranyan M. Hovhannes Cheqijyan. moskovyan hyuraxagher, «Hovhannes Cheqijyan – 90» gitakan nstashrjani nyut'eri jhoghovac'u. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2019, e'j 85-106.

13. Avetisjan N. Jesteticheskie vzgljady Oganesa Chekidzhjana, Hovhannes Cheqijyan – 85, gitakan nstashrjani nyut'er. Erevan, HH GAA «Gitut'yun» hrat., 2014, e'j 70-82.

14. Vshtuni M. Ih zhdet Moskva, «Kommunist», 22 dekabrja, 1965, N 301.

15. Konen V. Istorija zarubezhnoj muzyki. Moskva, «Muzyka», 1984.

16. Ter'jan M. Debjut talantlivogo dirizhera, «Kommunist», 30 nojabrja, 1961.

17. Frakkaroli A. Rossini (perevod s ital'janskogo Iriny Konstantinovoj). Moskva, «Molodaja gvardija», 1987.

«STABAT MATER» ДЖОАККИНО РОССИНИ В ИНТЕРПРЕТАЦИИ ОГАНЕСА ЧЕКИДЖЯНА
(посвящается 180-летию создания «Stabat Mater» Россини и 85-летию Национальной академической хоровой капеллы Армении)

АННА АСАТРЯН*

Для цитирования: Асатрян, Анна. ««Stabat Mater» Джоаккино Россини в интерпретации Оганеса Чекиджяна». *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 79-100. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-79

31-го марта 2022 г. в концертном зале Арама Хачатуряна состоялся концерт Национального героя РА, Народного артиста СССР Оганеса Чекиджяна и Национальной академической хоровой капеллы Армении. Прозвучал «Stabat Mater» (1842) Россини (1792-1868) в исполнении Национальной академической хоровой капеллы Армении и Национального филармонического оркестра Армении, солистов Софьи Саядян (сопрано), Кристине Саакян (меццо-сопрано), Микаела Григоряна (тенор) и Погоса Биазбекяна (бас).

За дирижерским пультом стоял Оганес Чекиджян.

В данной статье впервые в армянской музыкологии представлена роль Оганеса Чекиджяна в концертной биографии «Stabat Mater» Россини в Армении и Советском Союзе. Благодаря Оганесу Чекиджяну и Национальной академической хоровой капелле 15 ноября 1965 г. в Ереване был исполнен «Stabat Mater» Россини, занявшее свое прочное место в репертуаре капеллы, и начатая с тех пор концертная жизнь данного произведения продолжается по сей день. Сразу же после ереванской премьеры, 27 и 28 декабря 1965 г. состоялась всесоюзная премьера «Stabat Mater» в Москве в исполнении армянской капеллы под управлением О. Чекиджяна. Вслед за московской премьерой последовали премьеры «Stabat Mater» в 1966 г. в Ленинграде, в прибалтийских республиках, Украине и Белоруссии. Чекиджяновская интерпретация «Stabat Mater» Россини отличается высоким профессионализмом и самобытностью.

Ключевые слова: Оганес Чекиджян, Джоаккино Россини, «Stabat Mater», ереванская премьера, Москва, всесоюзная премьера, 1965-ый год.

---

* И.о. директора Института искусств НАН РА, заведующая отделом музыки, доктор искусствоведения, профессор, заслуженный деятель искусств Армении, вице-президент Академии проблем гуманизма, председатель Фонда Тигран Чухаджян, член Совета Союза композиторов Армении, член Правления Союза композиторов Армении, annaasatryan2013@gmail.com, статья представлена 20.04.2022, рецензирована 25.04.2022, принята к публикации 20.05.2022.

"STABAT MATER" BY GIOACCHINO ROSSINI IN THE INTERPRETATION OF OHANNES TCHEKIDJIAN
(dedicated to the 180th anniversary of the creation of Rossini's "Stabat Mater" and the 85th anniversary of the foundation of the National Academic Choir of Armenia)

ANNA ASATRYAN*

For citation: Asatryan, Anna. «"Stabat Mater" by Gioacchino Rossini in the Interpretation of Ohannes Tchekidjian (dedicated to the 180th anniversary of the creation of Rossini's "Stabat Mater" and the 85th anniversary of the foundation of the National Academic Choir of Armenia)», N 1 (2022): 79-100. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-79

On March 31, 2022, the concert of RA National Hero, USSR People's Artist Ohannes Tchekidjian and the National Academic Choir of Armenia took place in the Aram Khachatryan Concert Hall. "Stabat Mater" (1842) by Rossini (1792-1868) was performed by the National Academic Choir of Armenia and the National Philharmonic Orchestra of Armenia, soloists Sofia Sayadyan (soprano), Christine Sahakyan (mezzo-soprano), Mikayel Grigoryan (tenor) and Poghos Biazbekyan (bass). Ohannes Tchekidjian was near the conductor's panel.

The study reveals for the first time in Armenian musicology the role of Ohannes Tchekidjian in the concert biography of Rossini's "Stabat Mater" in Armenia and the Soviet Union. Thanks to O. Tchekidjian and the National Academic Choir of Armenia in 1965, on November 15, Rossini's "Stabat Mater" was played for the first time in Yerevan. It had its permanent place in the repertoire of Armenian a cappella, thanks to which the concert life of "Stabat Mater" in Armenia continues up today. Immediately after the Yerevan premiere, on December 27 and 28, 1965, "Stabat Mater" was played for the first time in Moscow – the all-union premiere of "Stabat Mater" was performed by O. Tchekidjian and the Armenian a cappella. The Moscow premiere was followed by the premieres of "Stabat Mater" in 1966 in Leningrad, the Baltic republics, Ukraine and Belarus. The Tchekidjian interpretation of Rossini's "Stabat Mater" stands out for its high professionalism and originality.

Key words: Ohannes Tchekidjian, Gioacchino Rossini, "Stabat Mater", Yerevan premiere, Moscow, All-Union premiere, 1965.

---

* Acting Director of NAS RA Institute of Arts, Head of the Music Department, Honored Art Worker of the RA, Vice President of the Academy of Humanism Problems, President of the Dikran Tchouhadjian Foundation, Member of the Council of the Composers Union of Armenia, Member of the Board of the Composers Union of Armenia, Doctor of Sciences (Arts), Professor, annaasatryan2013@gmail.com, The article was submitted on 20.04.2022, reviewed on 25.04.2022, accepted for publication on 20.05.2022.

ՀՏԴ : 783(479.25) + 281.6
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-101

ԶՄՄԱՌՈՒ ՎԱՆՔԻ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

ԵԴՈՒԱՐԴ ԹՈՐԻԿԵԱՆ* (Լիբանան, Բեյրութ)

Հղման համար. Թորիկեան, Եդուարդ: «Զմմառու վանքի ծիսական երգին տարբերակը: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 101-115. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-101

Զմմառու վանքին ծիսական երգին տարբերակը, որ բերուած էր Սիսէն, երեք դարերէ աւելի ապաստանած ու պաշտպանուած է Լիբանան, արաբական երկրի մը մէջ, անշուք գիւղակի մը անկիւնը, շա՜տ հեռու Հայաստանէն, Կոստանդնուպոլսէն և հայկական Երուսաղէմէն ու Վենետիկէն: Զմմառեան կղերականները բացարձակապէս անհաղորդ մնացած էին ԺԹ. և Ի. դարերու հայ շարականերգութեան կարգաւորման «արդի» տեսութիւններուն, ի մասնաւորի՝ անոնք ոչինչ գիտէին Ն. Թաշճեանի հայկական արդի խազագրութեամբ շարականներու ձայնագրութենէն, ազդակներ՝ որոնք կրնային խեղաթիւրել իրենց աւանդութեան փոխանցման հարազատութիւնը: Հետեւաբար, Զմմառեան տարբերակը արժանի է դասուելու որպէս «անտեսուած» Կիլիկիոյ հարազատ շարականերգութեան աւանդութեան հազուագիւտ ժառանգորդներէն և ուշագրաւ նմոյշներէն մին: Այս աւանդական տարբերակը, փոխանցուած ու պահպանուած է առաւելաբար բերանացի կերպով և, ինչ որ աւելի հաւաստի կը դարձնէ զայն՝ ան հաւաքական աւանդութիւն մըն է, առաւե՛լ քան անհատական մեկնաբանութիւն մը:

Ստորեւ կը ներկայացնենք Զմմառեան տարբերակի պատմական ընթացքին կարեւոր փոլերը, անոր հաստատումը, փոխանցման կերպերն ու պարագաները, անոր ներկայ վիճակը, և վերջապէս անոր բնորոշ առանձնայատկութիւններուն ամփոփ ցուցակ մը:

Բանալի բառեր՝ Աբրահամ Ա. Արծիւեան, Սիս, Զմմառու վանք, Զմմառեաններ, Հայ Անտոննեաններ, Լեւոնեան Ք. Վարժարան, շարականերգութիւն:

Ներածութիւն

Զմմառ[1] կը գտնուի Լիբանանի Քէսրուան կոչուած լեռնային շրջանին մէջ, Պէյրութէն մօտ 30 քիլոմեթր դէպի արեւելք, 900 մեթր բարձրութեան վրայ: Հոն հիմնուեցաւ «Զմմառեան» կամ - վերջերս կոչուած - «Արծիւեան» Հայ Կաթողիկէ Միաբանութեան Վանքը 1749-ին: Յօդուածագիրս՝ եղած է այդ վանքին մէջ ուսանող-ժառանգաւոր (կամ «*նորընծա*», ինչպէս որ այդտեղ սովոր է կոչել) 1966-1972 տարիներուն: Հոն՝ երաժշտական և երգեհոնի նուագի տարրական գիտութեան տիրացանք և թրծուեցանք Զմմառեան երգեցողութեան աւանդութեամբ: Յետագային, մասնագիտանալով երաժշտագիտութեան մէջ, Լիբանանի Քասլիքի Սուրբ Հոգի Համալսարանին մէջ, որպէս դոկտորական Աւարտաճառ ներկա-

---

* Լիբանանի մէջ, Քասլիքի Ս. Հոգի Համալսարանի Արուեստից և Գիտութեանց Ֆագուլթեթի Երաժշտութեան Ամպիոնի Երաժշտական Բարձր Ուսմանց Վարիչ, Երաժշտագիտութեան Դոկտոր, Ասսօշիէյթ փրոֆէսոր, դասախօս, արաբական եւ ասորական երաժշտութեանց բազմաձայն դաշնաւորող, արաբական երաժշտութեան միջազգային գիտաժողովներու զեկուցող, գեղարուեստական ղեկավար և խմբավար հայ կաթողիկէ պատրիարքական Կռունկ երգչախումբին (1991-2016), edouardtorokian@usek.edu.lb և edytoriguian@yahoo.fr, հոդվածը ներկայացնելու օրը՝ 02.03.2022, գրախոսելու օրը՝ 20.04.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

[1] Լիբանանցիներ զայն կ'անուանեն «Պզոմմառ», այսինքն՝ *զիմմար* (զուռնայի տեսականի) փչողին բնակարանը [22]:

յացուցինք, ֆրանսերէնով, *«Հայ ծիսական*[2] *երգին ընդհանրական բնութագրումն ու Զմմառու վանքի տարբերակին առանձնայատկութիւնները»* խորագրով մեծածաւալ աշխատասիրութիւն մը (մօտ 800 էջ, երեք հատորներէ բաղկացեալ), 2004 թուականին:

Երկար տարիներ ուսումնասիրելով հայ հոգեւոր երգին վերաբերեալ պատմաբանական և երաժշտագիտական բնութագրական մի քանի տասնեակ աշխատասիրութիւններ[3], ինչպէս նաեւ ձեռք բերելով շարականներու նօթագրութիւններ Էջմիածնէն, Կոստանդնուպոլսէն, Անթիլիասէն, Վենետիկէն եւ անհատական տարբերակներէն[4], սկիզբները մեզի այնպէս մը կը թուար թէ Զմմառեան տարբերակը խիստ հեռու էր հայկական ընդհանուր աւանդութենէն, մեկնելով անոր պարզութենէն ու փոքրաքանակութենէն, այդ օրերու իր «անորոշ ու կոստեան մատնուած» վիճակէն, և տեսականօրէն՝ իր օտարոտի հանգամանքէն:

Սակայն, հետզհետէ սկսանք նշմարել սկզբնական մեր կարծիքին անտեղի ըլլալը: Սկսանք տեսնել թէ ինչպէս Զմմառի միաբանները, մօտ երեք դարեր ամբողջ, անփոփոխ կերպով իւրացուցած, պահած ու փոխանցած էին իրենց աւանդուած եղանակային տարբերակները, ի հեճուկս Ի. դարու այլասերման հոսանքներուն: Նկատեցինք թէ՝ հայկական բնիկ աւանդութիւն մը ներկայացնելու համար՝ նախապայման չէր որ Զմմառեան տարբերակը հարիւր առ հարիւր համապատասխաներ հայ երաժշտածիսական աւանդական դարձած դրոյթներուն կամ բնութագրումներուն, որոնք ի վերջոյ գործնականէ աւելի՝ սովորոյթ դարձած երգաստեղծական յետ-տեսութիւններ են, հաւանականօրէն ենթակայ՝ փոփոխութեան, տարբեր մտայղացումներու դիրքորոշմամբ:

Ոստի, այս առաջին յօդուածով, ՀՀ ԳԱԱ արվեստի Ինստիտուտի *Արվեստագիտական Հանդես*-ին մէջ, կը ներկայացնենք Զմմառեան տարբերակի պատմական ընթացքին կարեւոր փուլերը, անոր հաստատումը, փոխանցման կերպերն ու պարագաները, անոր արդի վիճակը և վերջապէս անոր բնորոշ առանձնայատկութիւններու համառօտ ցուցակ մը:

1. Աբրահամ-Պետրոս Ա. Արծիւեան և Կիլիկեան տարբերակը

Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան, Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, ծնած է Այնթապ 1649-ին, ուր ստացած է եկեղեցական չորս փոքր աստիճանները 12 տարեկանին, իր «բնական գեղեցիկ ձայնին շնորհիւ» [16, 13, էջ 43-47, 8, 5, 6, 1]: Տասնութ տարեկանին եղած է Մարտին՝ Մելքոն Վրդ. Թազպազեանին քով (Հռոմի մէջ ուսանած), որմէ վեց տարուան ընթացքին սորված է գրականութիւն, հռետորութիւն, փիլիսոփայութիւն և աստուածա-

[2] «Ծիսական» եզրը կը գործածենք որպէսզի զայն զանազանենք «հոգեւոր» եզրէն, որ կրնայ նշանակել կրօնական որեւէ տեսակի երգ, պաշտօնական ծիսակատարութեան պատկանող կամ ոչ:

[3] Ի միջի այլոց՝ Ե. Տնտեսեան, Կոմիտաս, Ռ. Աթայեան, Ն. Թահմիզեան, Մ. Բրուտեան, Ա. Արեւշատեան... իսկ ֆրանսերէնով՝ Պ. Ութթիէյ, Ա. Քերովբեան եւ այլք:

[4] Ինչպէս՝ Ե. Տնտեսեան, Կ. Զօհրապեան, Ա. Պատմագրեան, Ն. Սերգոյեան, Ա. Քերովբեան եւ այլք:

բանութիւն: Փոխարէնը՝ Արծիւեան ծառայած է ծիսական արարողութիւններու պաշտօներգութեամբ որովհետեւ, ինչպէս որ յիշուած է, Թազպազեան ո՛չ քաջատեղեակ էր հայ ծէսին, ո՛չ ալ բաւականին վարպետ դպիրներ ունէր, այդ պատճառներով ան ծաղրանքի առարկայ դարձած էր ժողովուրդին եւ հայրենասէր քահանաներուն կողմէ [3, էջ 31, 17]:

Վերադառնալով ծննդավայր, Արծիւեան ներկայանացած է Սիսի Պետրոս Պիծակ կաթողիկոսին որ սիրով ընդունած է զինք իր քով եւ երեք տարի ետք (1706-ին) քահանայ ձեռնադրած[5]: Մեր կարծիքով՝ այս երեք տարուան «*սուղ ժամանակի*» ընթացքին է որ Արծիւեան աբեղան վերջնականապէս իւրացուցած է Սիսի Կիլիկեան բազմադարեան հայ ծիսական երգեցողութիւնը[6]:

Յետագային ալ, երբ արդէն կաթողիկոս էր, և Հռոմի Աթոռին հաւատարմութիւն յայտնած, Արծիւեան կառչած կը մնար հայկական ծէսին և աւանդութիւններուն: Ստորեւ մէջբերում մը՝ Մխիթար Աբբահօր ուղղուած իր մէկ նամակէն (1741): «*Մեք* […] *դաւանիմք յօժար կամօք զամենայն ինչ գրեալ կայ ի սուրբ Հաւատամքն:* […] *Հաւատամք և դաւանիմք՝ պահելով զամենայն զբարի և զգովելի և զառաքինական զաւանդութիւնս,* ***և ոչինչ փոփոխելով առնիցեմք զնորաձեւութիւնս ինչ ընդդէմ Հայաստանեայց աւանդութեանց****, որ ոչ է ի դէմ Սրբոյ Հաւատոյ*» [10, էջ 127-128, 3, էջ 187-188]:

2. Արծիւեանի աւանդութեան փոխանցումը Հայ Անտոնեաններուն

Լիբանանի մէջ հայ կաթողիկէ համայնքին պատմութիւնը սկսած է 1721 թիւին, երբ Խազէն մարօնիթ ընտանիքը իրենց Քրէյմի հողերէն մաս մը (Քէսրուանի շրջանէն) նուիրեցին Մուրատեան (կամ՝ Յովսէփեան) հալէպահայ չորս եղբայրներուն որպէս զի այդտեղ շինեն իրենց վանքն ու եկեղեցին [10, էջ 127-128, 3, էջ 187-188]: Այսպէսով անոնք կազմեցին նոր միաբանութիւն մը, Անտոնեան Հայ Միաբանութիւնը: Անոնցմէ առաջինը և աւագը, Յակոբ (ապագային՝ Արծիւեանի յաջորդ կաթողիկոսը), նախապէս կրօնաւոր էր մարօնիթներու պատկանող Քոզհայայի Ս. Անտոն վանքը. Արծիւեան զայն քահանայ ձեռնադրած էր 1720-ին զայն վարժեցնելէ ետք հայ ծէսին, որուն բնաւ ծանօթ չէր ան: Շուտով (1722-ին) Արծիւեան միացաւ անոնց խմբակին, անոնց սորվեցուց հայկական ծիսական աւանդութիւնները (անշուշտ շատ հաւանաբար նաև՝ իր գիտ-

[5] Ինքնակենսագրութիւն Արծիւեան Ա. Կաթողիկոսի. «*և յանտի ի քաղաքն Սիս. իսկ Պետրոս Կաթողիկոսն յոյժ սիրով ընկալաւ և արար զիս իւր գրագիր, գանձապահ և խորհրդակից, և եւ ինձ կիսասարկաւագութիւն և ձեռնադրեաց աւագ սարկաւագ. և յետ սուղ ժամանակի քահանայ ձեռնադրեաց և աբեղայ, ի մասնաւորի իշխանութիւն, և կոչեաց վարդապետ ի Սիս քաղաքի*» [1]:

[6] Կիլիկեան աւանդութեան հայկական հարազատութեան գաղափարը մատնանշուած կ'երեւի Կոմիտասի կողմէ իր մէկ կարծիքով զոր յիշատակած է Գաստուե Ամէդէ (1873-1943) ֆրանսացի երաժշտագէտը. «*Բայց ինքն էր* [Կոմիտաս Վարդապետը] *ինձ ասում, որ փաստել է, թէ առավել զուտը Արեւելյան Հայաստանի, Վանի և Սեվանի լճերից անդին բնակվող, Եփրատից հիւսիս և Պարսկաստանում բնակվող հայերի ավանդոյթն է, հին ձեռագրերին ավելի հարազատ*» [7, էջ 262]:

ցած մեղեդիներով)[7] և առաջնորդեց անոնց հասարակական կեանքը մինչեւ 1739-ին, յաճախակիօրէն ճամբորդելով առաքելավայրեր, Սուրիա, Արեւմտեան Հայաստան ու Կոստանդնուպոլիս, ուր կ'ուղղարկուէին Հայ Անտոնեանները որպէս քարոզիչներ ու հոգեւոր հովիւներ: Այդ ժամանակներուն՝ անոնց թիւը կը հաշուէր 32 միաբան[8]:

Բացի Քրէյմէն, Հայ Անտոնեանները երկրորդ վանք մը կառուցին կրկին Քէսրուանի մէջ, Պէյթ Խաշպո կոչուած, ապա՝ Հռոմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքը և հուսկ՝ Նորընծայարան մը (Ժառանգաւորաց տուն) Կոստանդնուպոլսոյ մէջ, ամէնուր տանելով նաև, բնականաբար, հայ ծիսական աւանդական երգեցողութեան Կիլիկիոյ-Արծիւեանի տարբերակը: Սակայն անոնք շատ երկար չդիմացան. 1925-ին, վերջին երեք Հայ Անտոնեանները իրենց նիւթական ժառանգութիւններէն մաս մը եւ ամբողջ դիւանային գրութիւնները փոխանցեցին Զմմառու վանքին, իսկ Մարոնիթները տիրացան Լիբանանի մէջ անոնց իրե՛նց շինած, բնակած ու ծաղկեցուցած երկու հարիւր տարուան վանքերուն:

3. Արծիւեանի աւանդութեան փոխանցումը Զմմառեան կղերին

Իր կաթողիկոսական ընտրութենէն անմիջապէս ետք, 1744-ին, Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան, Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, ստացաւ, Սեպտեմբեր 1749-ին, Զմմառու մէջ հողի մը սեփականութեան ընծայման գիրը, ձեռամբ Մարոնիթ Պատրիարք Սիմոնի [11, էջ 92, 24, 50]: Իր մահէն առաջ (1 Հոկտեմբեր 1749), ան իր օծած եպիսկոպոսներուն (որոնք բոլորն ալ Հայ Անտոնեաններ էին) պատուիրեց Զմմառի մէջ վանք կառուցել ու հոն բնակելով նոր պատրիարքութեան Աթոռի կեդրոնը դարձնել:

Յակոբ Պետրոս Բ. Յովսէփեանի առաջին գործն եղաւ Զմմառի վանքին հիմնարկութիւնը, ըստ Արծիւեանի փափաքին, և որ բնակելի դարձաւ մէկ տարին չլրացած[9]. համեստ մատուռ մը, պատրիարքին գրասենեակն ու իր խցիկը, և երեք այլ խցիկներ անոր ընկերակիցներուն համար[10]: Յաջորդ կաթողիկոսները շարունակեցին կառուցել նոր բաժիններ, վանքին սկզբնական սահմանները ընդարձակելով: Առաջին նորընծայարանը շինուեցաւ 1791-ին, տասը խցիկներով. մինչ այդ՝ Զմմառեան նորընծաները Քրէյմի վանքը կը հաճախէին ուսումնառութեան

---

[7] Դժբախտաբար ընդհանրապէս պատմական նամականիներուն և յետագայ գրութիւններուն մէջ՝ երգի ու եղանակի փոխանցումներուն մասին բնաւ յիշատակութիւն չկայ. գուցէ որովհետեւ երգը ծէսի մէկ անբաժան մասը կը նկատուէր:

[8] Անոնց ժառանգաւոր սաներու ցանկին մէջ, մօտ 1858 թուականին, կը գտնուի նաև Մաղաքիա Օրմանեանի անունը (յետագային՝ Պոլսոյ Հայոց Պատրիարք): Անոր լուսանկարին հանդիպեցանք, Անտոնեան Մեծաւորներու կողքին [16, էջ 134]:

[9] «Կերտեցաւ վանս գերափայլ ձեռամբ Պատրիարքին մաքրափայլ Յակոբ Կաթողիկոս կոչեցեալ յանուն Աստուածածնին կառուցեալ ՌՁԽԹ-1749». այս արձանագրութիւնը կը գտնուի Զմմառու վեհարանին արեւելեան դրան վրայ:

[10] Այս երեք անձերը Անտոնեան հայ կրօնաւորներ էին. Սահակ Բարսեղեան (Քիլիսի Եպիսկոպոս), Բարսեղ վ. Աւգատեան (Դ. Կաթողիկոս) և Թովմաս վ. Կարապետեան [16, էջ 153]:

համար (ինչ որ կը վկայէ Զմմառեան և Հայ Անտոնեան աւանդութեանց համամիութեան մասին): 1810-ին՝ «*վանքը ծաղկաւէտ էր. 52 հոգի կը բնակէին այնտեղ. 4 եպիսկոպոսներ, 4 վարդապետներ, 10 քահանաներ և նորընծաներու բազմութիւն մը*» [16, էջ 153]: 1963-ին Կարդինալ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան կառուցանել տուաւ մեծ ընծայարան մը ուր 70 աշակերտներ կ'ապրէին[11]:

Գալով ծիսական երգեցիկ արարողութիւններու հերթականութեան, յիշատակումները շատ հազուագիւտ են այդ մասին, երբեմն ալ հակոտնեայ կարծիքներով: Այսուհանդերձ՝ «երգ»ի ուսուցման վերաբերեալ միշտ պատշաճ կարեւորութիւն տրուած է նորընծայարանէն ներս [4, էջ 28, 12, էջ 92]: Այսպէս, վանքի առաջին օրերուն համար՝ Անդրանիկ Վրդ. Կռանեան կը գրէ Զմմառու հասարակական կեանքին մասին. «*Միաբան վարդապետները կը զբաղէին ուսումով, դասաւանդութեամբ, քարոզներով, հասարակական աղօթքներով, երգեցողութեամբ, կանոնաւոր ժամասացութեամբ, իրենք զիրենք պատրաստելով այն առաքելութիւններուն համար, ուր զիրենք պիտի ուղղարկէր Աբբահայր-Պատրիարքը*» [14, էջ 41]: Իսկ աւելի ուշ. «*Հայ Կաթողիկէ Թեմերուն մէջ անհատական ժամասացութիւնը կղերականներուն պարտաւորիչ չէր, ինչպէս նաև հասարակաց ժամասացութիւնը Զմմառու վանքին մէջ*» [15, էջ 28]:

Յիրաւի, թեմերուն մէջ Զմմառեան կղերականներուն կամ հայ Անտոնեաններուն թիւը բաւականին չըլլալուն և անոնց առաքելական բազմազբաղութեան պատճառներով, ընդհանրապէս հասարակաց պաշտօներգութիւն չէին կրնար կատարել, բացի երբեմնի կիրակմտից երեկոյեան ժամերգութենէն և առաւելաբար կիրակի և տօնական օրերու պատարագներէն[12]: Մինչ այդ, թէև Զմմառէն ներս որոշ չափով հասարակաց ժամասացութիւնը կանոնաւոր էր, այսուհանդերձ ան նոյնանման չէր բոլոր հայ կաթողիկէներուն մօտ, այսինքն՝ Զմմառու կղերին, Հայ Անտոնեաններուն, Մխիթարեաններուն, Պոլսոյ կղերին և լատինացած հայերուն մօտ: Ընդհանուր կանոնաւորումը իրագործուեցաւ 1898-էն ետք, հրատարակութեամբ մեծղի ժամագիրքի մը, կոչուած՝ «*Կարգաւորութիւն Հասարակաց աղօթից Հայաստանեայց Եկեղեցւոյ*», Վենետիկ, Ս. Ղազար, 1898, որ կը պարունակէ բոլոր ժամերգութիւնները, ինչպէս նաև տարւոյն բոլոր օրերու շարականները, տպագիր խազագրուած:

Սեպտեմբեր 1912-ին, Օգոստինոս Եպս. Սայեղեան, Պատրիարքական Այցելու ի Զմմառ, կը գրէր այսպէս. «*Դասերը վերսկսած են սովորականին պէս ճիշդ ժամուն, ամէնուրէք կը տիրեն կարգ ու կանոնը: Զանգերը կը հնչեն որոշեալ ժամերուն, երբեմն աղօթքի, երբեմն ճաշի կամ հանգիստի համար: Առ-*

[11] Անոնցմէ մին էինք մենք անձամբ 1966-ին, և մեր հագուստներուն ու պիտոյքներուն վրայ կը կրէինք 62 թուանշանը:

[12] Այս առումով իրաւացի է Տնտեսեան Եղիա. «Շարականներու փոյթ չտանելով միայն պատարագի երգերուն հետեւիլը՝ աւելի մեր հոովմէական ազգայնոցմէ սկսած է. որոց մէջ թէև գտնըւած են միշտ շարականի և ժամակարգութեանց մասին մեծ փափագ ունեցողներ, բայց իրենց մեծամասնութիւնը երբեմն նոյն սէրը չունենալով Հայաստանեայց եկեղեցւոյ արարողութեանց վերայ, իբր առ հարկի հետեւած են միայն Ս. պատարագի երգոց» [21, էջ 177, տողատակի նշում]:

տուները և իրիկունները, ամէն օր, ժամերգութիւնները կը կատարուին ջերմեռանդութեամբ և լուրջ կանոնաւորութեամբ: Այս Միաբանութիւնը կը վարուի աշխարհի բոլոր Կաթողիկէներուն հետ ըստ Հայոց Սուրբ Հայրերու հոգւոյն մաքուր և իսկական սկզբունքներուն» [23, էջ 78-79]:

Ստորև յաւելեալ կենդանի վկայութիւններ Հ. Յակոբ վ. Ղարիպեանէն[13].

- «*1935-ին գացի* [Զմմառ], *մինչև 46 շարականապետ եղայ: Ամէն ուրբաթ շարականի փորձ կար, ամէ՛ն ուրբաթ:* [...] *Ամէն շաբաթ իրիկուն՝ Երեկոյեան, ամէն կիրակի՝ Առաւօտեան կամ Գիշերային: Ամէն կիրակի իրիկուն՝ Երեկոյեան* [...] *Յետոյ՝ Արեւագալի կ'ընէինք, Խաղաղական կ'ընէինք:* [...] *Գիտե՞ս, բոլոր վարդապետները շարական չէին գիտեր: Շարական գիտցողները՝ Մանուշեանը, Տէր Պետրոս Յարութիւնեանը, Քատէեանը... Կար նաև Խաչերեանը, Քերովբէ... Տէր Սարուխանեանը, Պօղոս Պզտիկեանը... Ասոնք բոլորն ալ միասին կ'երգէին մեծ հաճոյքով և ախորժակով, լաւ վարժուած. երգի համար խենթ էին*»:

Սակայն այս մեղեդիական հարազատ ու աւանդական փոխանցումը պիտի ենթարկուէր յեղաթիւրումի, կամ նոյնիսկ՝ մոռացութեան, քսաներորդ դարի կէսերուն, երբ Զմմառու աւագ ժառանգաւորները սկսան, բարձրագոյն ուսումներու համար, յաճախել Հռոմի Քահանայապետական Լեւոնեան Վարժարանը:

4. Զմմառեան-Լեւոնեան միածոյլ տարբերակը

1833 թուականին, Լէոն ԺԳ. Սրբազան Քահանայապետի նուիրապետութեամբ, Հայ Կաթողիկէ Պատրիարքութիւնը տիրացաւ կեդրոնի մը Հռոմի մէջ ու զայն անուանեց «Լեւոնեան Քահանապետական Վարժարան»[14]: «*Այդ յարկին տակ Լուսաւորչի զաւակները պէտք էին կրթուիլ ըստ հայրենի լեզուին, ծէսին և աւանդութեանց*» [20, էջ 24]: Այդտեղի տասնըմէկ մեծաւորներէն (1883-1981) ընդհանրապէս ինը հոգի Պոլիսէն կամ անոր շրջակայքէն էին [20, էջ 69-91], իսկ Սարգիս Արք. Տէր Աբրահամեանը (1921-1932) և Ֆրանչիսկոս Վ. Աղաճանեանը[15] (1932-1938) Արեւելեան Հայաստանէն էին: Զմմառեան երէց ժառանգորդներ, մեծ թիւով, սկսան հոն յաճախել 1934-էն ետք, փիլիսոփայութիւն և աստուածաբանութիւն ուսանելու համար իտալական համալսարաններու մէջ, իւրաքանչիւր աշակերտ՝ մօտ վեց տարի: Այդ միջոցին, անոնք պարտական էին հնազադիլ Լեւոնեանի Մեծաւորներուն և համակերպիլ անոնց ուղեգծին ու ցուցմունքներուն, ինչ որ կը նշանակէ Զմմառեանէն տարբեր աւանդութեան մը հետեւիլ:

Բախումը կը սրէր յատկապէս երբ Զմմառեան ժառանգաւորներէն կը պահանջուէր մոռնալ Զմմառու աւանդական երգեցողութիւնը և որդեգրել Լեւոնեանի «յատուկ» մեղեդիները: Այս խնդրին յստակացման համար մենք յատուկ ձայնա-

[13] **Ղարիպեան** Յակոբ վ. (1922-2000), բնիկ Յունաստանէն, Զմմառ ուսանած է 11 երկար տարիներ և գրեթէ անգիր կերպով իւրացուցած է Զմմառեան երգեցողութիւնը: Ապա, երեք տարիներ միայն ուսանած է Լեւոնեան վարժարանին մէջ, Հռոմ: Անոր հետ բաւական երկար ու շահաւէտ հարցազրոյց ունեցած ենք 3-7 Մարտ 2000-ին, իր վախճանումէն կարճ ժամանակ առաջ:

[14] Հասցէ. Pontificio Collegio Armeno, San Nicola da Tolentino, via Veneto, Roma.

[15] Յետագային՝ Գրիգոր Պետրոս ԺԵ. Կաթողիկոս (1937-1962) և Կարդինալ:

գրութիւն-հարցազրոյցներ կատարեցինք Զմմառեան մի քանի կղերականներու հետ, որոնք այդ ժամանակաշրջանին Լեւոնեան յաճախած էին, ի մասնաւորի Հ. Յակոբ վ. Ղարիպեանի և Հ. Անդրանիկ վ. Կռանեանի հետ[16]: Անոնք կը պատմեն թէ ինչպէ՛ս «պայքարած» էին 1946-1954 տարիներուն Լեւոնեան Վարժարանին մէջ, Պետրոս Արք. Քէտիճեանի (պոլսահայ) մեծաւորութեան շրջանին, Հ. Յովսէփ վ. Քաֆթանճեանի[17] դէմ, որպէսզի հո՛ն ալ, Լեւոնեանի՛ մէջ, շարունակեն երգել ըստ Զմմառու երկու հարիւրամեայ աւանդութեան, մինչ Քաֆթանճեան կը պարտադրէր «Լեւոնեան» կոչուած հազիւ յիսուն տարին բոլորած «յատուկ աւանդութիւնը» տարածել: Իսկ 1960-էն սկսեալ մինչեւ 1981, Ներսէս Եպս. Սեթեանի (կրկին պոլսահայ) երկարամեայ շրջանին, Զմմառեան նոր ժառանգաւորները, այլևս ոչ միայն չեն հակաճառեր, այլ հլու հնազանդութեամբ կը հետեւին Լեւոնեան Վարժարանի ուսուցումներուն: Սեթեան և Քաֆթանճեան կը պատրաստեն ու կ'ընդհանրացնեն ձեռագիր եւրոպական նօթագրութեամբ ձայնագրեալ պատճենատիպ շարակնոցներ [9, 18, 19]:

Այսպէս՝ վարագոյրը քաշուած կը սեպուէր Զմմառու աւանդութեան վրայ. այլևս Զմմառեան կղերականները ընդհանրապէս չէին գիտակցեր թէ իրենք սեփական աւանդութիւն մը ունէին, և այս անորոշ վիճակը ժխտականօրէն կ'ազդէր նաև իրենց պատկանելիութեան գիտակցութեան վրայ: Միայն իմ երգեհոնի ուսուցիչս, 1970-ի ատենները[18], Հայր Ղեւոնդ վարդապետ Տէր Մինասեան[19] պարբերաբար ինծի կը յիշեցնէր (և բնականաբար՝ նաև ուրիշներու), թէ Զմմառ ունի աւանդական եղանակներ որոնք կը տարբերին Լեւոնեանէն և զորս հարկ էր վերակենդանացնել:

---

[16] **Կռանեան** Անդրանիկ վ. (1929-2017), բնիկ Լիբանանէն. վեց տարի Զմմառ մնալէն ետք կ'անցնի Լեւոնեան վարժարան (1946-1954): 2000-2001 տարիներուն բազմաթիւ անգամներ հանդիպում-հարցազրոյց ունեցած ենք իր հետ, գրեթէ ամբողջ ծիսական տարւոյն երգերը արձանագրած ենք իր ձայնով և իր դիպուկ խրատներով մեզ ուղղած ու քաջալերած է սոյն աշխատասիրութեան ընթացքին:

[17] **Քաֆթանճեան** Յովսէփ վ. (1908-1988), բնիկ Կոստանդնուպոլսէն. Լեւոնեանի մէջ աշակերտած է վերոնշեալ Աբրահամեան Արքեպիսկոպոսին, ապա երկու անգամոան համար՝ երկար տարիներ Լեւոնեանի մէջ շարականի երգեցողութեան ուսուցիչ կարգուած է (1938-1953 և 1960-1988):

[18] Այդ թուականներուն՝ ես Զմմառի Նորընծայարանի աւագ աշակերտ մըն էի:

[19] **Տէր Մինասեան** Ղեւոնդ Վ. (1894-1977), ծնած՝ Մալաթիա, տասներկու տարեկանէն իվեր՝ գրեթէ իր ամբողջ կեանքը Զմմառու վանքին մէջ անցուցած էր: 27 տարեկանին սկսած էր երգեհոն (harmonium) նուագել սորվիլ: Իր երգեհոնիկը ապսպրած էր Իտալիայէն 1920-ին եւ իշու վրայ բարձած՝ Զմմառ հանել տուած էր: Լիբանանի մէջ գրեթէ առաջիններէն էր որ երգեհոն մը բերել կու տար: Բացի վանքի իր աշակերտներէն, լիբանանցի բազմաթիւ այլ կրօնաւորներ Հ. Ղեւոնդին քով կու գային նուագել սորվելու համար: Անոնց թիւին կը պատկանէր նաև 1972-2010-ի Քասլիքի Ս. Հոգի Համալսարանի Երաժշտութեան Ֆագուլթեթի հիմնադիր և Ամպիոնի Վարիչ՝ Հ. Լուի Հաժժ: Վանքէն ներս՝ Հ. Ղեւոնդ նորընծաներուն, ինչպէս Հ.Յ. Ղարիպեանին և Հ.Ա. Կռանեանին, կը դասաւանդէր գրաբար և շարականներու երգեցողութիւն:

Արդ, մեր աշխատասիրութեան միջոցաւ կարելի եղաւ երեւան հանել Զմմառեան և Լեւոնեան երգեցողութեան տարբերակներու միջև տիրող ո՛չ միայն մեծ նմանութիւնը, այլ նաև անոնց միևնոյնութիւնը: Արդարեւ, երկուքն ալ նոյն ու միակ աղբիւրէն սկիզբ առած են, Արծիւեան Ա. Կաթողիկոսի Կիլիկիայէն բերուած տարբերակը: Մին՝ Արծիւեանէն փոխանցուած է Հայ Անտոնեաններուն և անոնցմէ Զմմառու Կղերին, միւսը նոյնպէս՝ Արծիւեանէն Հայ Անտոնեաններուն և անոնցմէ՝ Պոլսոյ Հայ Կաթողիկէ Կղերին որոնք իրենց կարգին մինչև Հռոմի Լեւոնեան Վարժարանը հասցուցած են:

Վերեւ նշուած Հ. Ղեւոնդ վ. Տէր Մինասեանի ձեռագիր նօթագրած Յարութեան կիրակիներու ութ ձայն Ճաշու շարականները, իրենց յատուկ փոխերով («*Տէր թագաւորեաց*»), ըստ Զմմառեան նախկին աւանդութեան, մեզի համար բաւական էր ապացուցանելու Զմմառեան և Լեւոնեան տարբերակներու նման-օրինակութիւնը. իսկ զանազանութիւնը կը կայանար միայն մի քանի աննշան և առաւել զարդարանքներով պաճուճուած Լեւոնեան տարբերակին մէջ: Աւելին՝ այս զոյգ տարբերակները իրարու շատ աւելի մօտիկութիւն ցոյց կուտային, քան այն հեռաւորութիւնը զոր կը ցուցադրէին միասնաբար՝ հայկական այլ տարբերակներու նկատմամբ (Էջմիածին, Վենետիկ եւ այլք, բացի Անթիլիասէն որ յաճախակի նմանութիւններ ունի Զմմառեանին հետ, գուցէ որովհետեւ անոր արմատնե՛րն ալ պատմականօրէն հարկ է որ պատկանէին Կիլիկիոյ աւանդութեան):

Առ ի բաղդատութիւն, ստորեւ կը ներկայացնենք Յարութեան Կիւրակէից Ճաշու ԴԿ շարականը չորս տարբերակներով.

- Վերէն առաջինը՝ (Մին.) նոթագրուած է Հ. Ղեւոնդ վ. Տէր Մինասեանի կողմէ, մօտաւորապէս 1973-ին: Երբոր երգեցինք զայն Զմմառու կղերականներուն առջեւ՝ բոլորն ալ խորթ զգացին, որուհետեւ չէին լսած այս եղանակները, այլև կ'երգէին միայն ինչ որ սորված էին Լեւոնեան Վարժարանին մէջ:
- Երկրորդը՝ (Սթ.) նոթագրուած է Լեւոնեանի Մեծաւոր Հ. Ներսէս վ. Սեթեանի կողմէ (*Շարականք և մեղեդիք Լեւոնեան Վարժարանի*, Հռոմ, 1964, էջ 42-48):
- Երրորդը՝ (Քֆթ.) ձեռագիր նոթագրութիւն մըն է Հ. Յովսէփ վ. Քաֆթանճեանի ստորագրութեամբ, 1980 թուականը կրող: Սա կը թուի անհատական պատշաճեցում մըն ըլլալ, Զմմառեան ու Լեւոնեան աւանդութիւնները միախառնելու ձգտումով:
- Չորրորդը՝ (Անթ.) Հայ Առաքելական Եկեղեցւոյ Անթիլիասի աւանդութիւնը ներկայացնող օրինակ մըն է, մեզի յանձնուած զայն ձեռագրող Զարեհ Արք. Ազնաւուրեանի կողմէ, 1999 թուականին:


Ճաշու շարական - ԴԿ
Փոխ
Միհ.
Տէր թա- գա - ւոր - եաց վա - յե - լ-չու-թիւն ըզ - գե - ցա - ւ:
Սթ.
Քֆթ.
Անթ.
Ա. Հանար
Որ ան - բա - ւե - լի յաղ - թող զօ - րու - թեամբ
թա - գա-ւոր ես երկ - նի և երկ - րի Քրիս-տոս Աս - տը - ւած.



Որպէս զարտուղի յատկանիշեր, Զմմառեան և Լեւոնեան տարբերակներու աւանդութիւնները գրառումները միասնաբար և միա՛յն անոնք՝

1. Կարգաւորման սկզբունքային աւանդական տարբերութեան մը կը կառչին ԱԿ ձայնեղանակին առընչութեամբ. անոնք ԱԿ բուն ձայնեղանակ կը դասաւորեն այն ձայնեղանակը որ ԱԿ դարձուածք կը համարուի հայկական ընդհանրացած դասակարգութեամբ և փոխադարձաբար հակառակը[20]:

[20] Այս հարցով զոյգ մը յիշատակում-կարծիքներու հանդիպած ենք: 1. Տնտեսեան Ե., նշ. աշխ., էջ 132. «Որ Նախիմաց *երգին ձեւը 'ի սկզբան շատ քիչ գործածուած և յետոյ ընդարձակուած է, որպէս կ'երեւի յետին դարերու մէջ յօրինուած ԱԿ. երգերէն*»: Իսկ տողատակով կ'աւելցնէ. «*ԱԿ եղանակի այս ձեւը դարձուածք կը համարուէր, թէ և ըստ երաժշտական օրինաց բուն ԱԿ եղանակ պէտք է համարուի սա*» [21, էջ 132]: 2. «*Եղել է կարծիք այն մասին, որ ժամանակի ընթացքում Ա կողմի և նրա «դարձվածքի» երգերը փոխադարձաբար խառնվել են և, որ այժմ Ա կողմ են անվանվում իրականում այդ ձայնի «դարձվածքի» երգերը և հակառակը*»: [Հոս կ'ակնարկէ Տնտեսեանին]: Ապա կը հանգչի հետեւեալ եզրակացութեան. «*Այս բոլորից հետեվում է, որ ԱԿ պէտք է անվանել ոչ թէ փոյուգիական հնչյունաշար ունեցող լադը և այդ լադի երգերը, այլ՝ ԱԿ «դարձվածք» համարվող էոլական հնչյունաշար ունեցող լադը և նրա երգերը*» [2, էջ 225-226]: Սոյն եզրակացութեամբ Աթայան իրաւունք կու տայ Զմմառեան-Լեւոնեան դիրքորոշման, որովհետեւ անոնց ԱԿ բուն ձայնը էոլական բնոյթ ունի: Ի վերջոյ, Անթիլիասի շարականներու

2. Կը գործածեն «*Դարձուկ*» եզրը փոխանակ *Դարձուած, Դարձուածք* կամ *Դարձ* եզրերուն:

3. Բացառապէս միայն մէկ *Դարձուկ* մը սովորութիւն ունին յատկացնելու երգուած ու գրառուած Ութ-ձայն Փոխերու ցանկին մէջ, այն ալ ԱԿ ձայնին:

4. Ընդհանրապէս քիչ թիւով Ստեղի եղանակներ ունին և անոնք գրեթէ միատեսակ են: Որպէս օրինակներ՝ *Սրբուհի Մարիամ սափոր ոսկի*, *Արծաթսիրութեամբ* և *Եկայք հաւատացեալք*, որոնց եղանակները հաւանաբար բերուած են Արեւելեան Հայաստանէն, Սարգիս Եպս. Աբրահամեանի միջոցաւ ըստ Յակոբ վ. Ղարիպեանի[21]:

Վերոնշեալ յատկանիշերուն կ'աւելցնենք վկայութիւն մը, նոյն Յ.վ. Ղարիպեանէն, ուր կը բացայայտնուի թէ Զմմառեանք բնաւ չեն ազդուած շարականներու կանոնաւորութեան տեսական դրոյթներու «արդի» (ԺԹ. և Ի. դարերու) անհատական ձեռնարկներէ, և ոչ իսկ դոյզն կերպով կը ճանչնային այլ հայ ծիսական տարբերակներ:

- «*Հիմա որովհետեւ այսօր կայ Պոլսոյ եղանակները, Մխիթարեաններունը, կայ էջմիածինը, չեմ գիտեր... Մերն ալ Զմմառեան կ'ըլլայ կոր: Յետոյ այս խազերը... Տէր Ղեւոնդը ոչ մէկ բացատրութիւն կրցաւ տալ:* [...] *Գոնէ բացատրէ՛ր: Բայց մենք խազերուն վրայէն կրնայինք երբեմն գուշակելով երգել: Անկէ վերջ, գոնէ քանի մը եղանակներ բերէր մեզի – Մխիթարեան, Պոլսական, Էջմիածնի- և բաղդատական մը ընէր... ո՛չ մէկը ըրաւ*»:

Եզրակացութիւններ

Մեր Ներածութեան մէջ յայտնած էինք թէ, մեր Աւարտաճառին սկիզբնեռուն՝ Զմմառեան ծիսական երգին տարբերակը օտարոտի հանգամանք մը ունէր, և թէ ան խիստ հեռու կ'երեւէր հայկական ընդհանուր աւանդութենէն: Սակայն ի վերջոյ պարզուեցաւ, որ արժանի էր արդար գնահատման, որովհետեւ ան կը ներկայացնէր երեք դարէ աւելի հին, մեծամասնութեամբ բերանացի կերպով պահպանուած, հայ շարականերգութեան հաւաքական

ձեռագիր նօթագրութիւնները թերթատելով, նշմարած ենք որ յաճախ այդտեղ ալ որոշ շփոթ մը կայ այս հարցին մէջ:

[21] Մէջբերումներ Հ. Յ. վ. Ղարիպեանի հետ մեր հարցարոյցներու պատասխաններէն. «*Աբրահամեանը, կրնայ ըլլալ, այո՛, Հայաստանէ՛ն: Անոր, զոր օրինակ՝ «Արծաթսիրութեամբ»ը* [...] *մանաւանդ «Սրբուհի Մարիամ սափոր ոսկի»* [...] *Այսքանը կը կարծեմ որ՝ Լեւոնեանը Հայաստանէն եկած է: Զմոռնաս որ իրենց ամենամեծ կղերականները Հայաստանէն են. Աղաճանեան, ուրիշ շատեր...* [Հ. Ղարիպեան չէր ուսումնասիրած Լեւոնեան Վարժարանի կատարեալ պատմականը: Վերը մենք նշեցինք թէ Լեւոնեան վարժարանի 11 մեծաւորներէն միայն երկուքը Հայաստանէն եկած էին, իսկ մնացեալները Պոլսոյ շրջանակէն էին] ...*Մանաւանդ Սարգիս Տէր Աբրահամեան: Ասիկա սարսափելի շարականներու խենթ էր, անգամ մը որ երգելու սկսէր՝ օ՜հ, կը քաշէ՜ր, կը քաշքշէր: Աւագ Ուրբաթ օրուան Թաղման ծանր եղանակը, ստեղին, «Եկայք հաւատացեալք»ը սարսափելի կը քաշքշէր: «Ասի, -ինծի ըսաւ Տէր Աբրահամեանը- էջմիածին աճուրդի կը հանէին-միայն ասիկա: Ան որ աւելի կը վճարէր՝ ա՛ն կ'երգէր: Օ՜օհ,այս երգը ամէնէն հիանալին է մեր ամբողջ շարականներուն մէջէն»: Ինքը երբոր կ'երգէր՝ աղուոր մը կ'երկնցներ...»:*

աւանդութիւն մը, որուն ակունքները կ՚երկարին մինչև ուշ միջնադարեան Կիլիկեան պաշտօներգութիւնը: Աւելին՝ Լիբանանեան-արաբական երկրի մը մէջ ապաստանելով, Զմմառի պէս անշուք գիւղակի մը անկիւնը, շա՜տ հեռու Հայաստանէն, Կոստանդնուպոլսէն և հայկական Երուսաղէմէն ու Վենետիկէն, բացարձակապէս անհաղորդ մնալով ԺԹ. և Ի. դարերու հայ շարականներգութեան կարգաւորման «արդի» տեսութիւններուն և յատկապէս Ն. Թաշճեանի հայկական նոր խազանիշերով շարականներու ձայնագրութեան շնորհաշատ աշխատութեան, Զմմառեան ծիսական երգին տարբերակը արժանի է դասուելու որպէս «անտեսուած» կիլիկեան հարազատ շարականներգութեան աւանդութեան հազուագիւտ ժառանգորդներէն և ուշագրաւ նմոյշներէն մին:

Այս յօդուածին մէջ նշուած տեղեկութիւններուն, Զմմառու աւանդ տրուած Աբրահամ Ա. Արծիւեանի Կիլիկեան տարբերակին, անոր փոխանցումներուն Հայ Անտոնեաններուն, Զմմառեան և Լեւոնեան կղերին, անոր ներկայ վիճակին լայն ու խորացուած ուսումնասիրութիւնները՝ վերեւ, Ներածականին մէջ յիշուած մեր Աւարտաճառին մէկ կարեւոր մասը կը գրաւեն:

Զմմառեան ծիսական երգեցողութեան տարբերակին աւանդական յատուկ բնութագրերը ի յայտ բերելէ ետք, վերլուծական, բաղդատական և լսողական միջոցներով, մեր գործը շարունակեցինք պատրաստելով «*Ձայնագրեալ Շարակնոց Ըստ Զմմառու Վանքին Աւանդութեան-Եւրոպական Նօթագրութեամբ*» հաստափոր ժողովածուն (հրատարակուած՝ Զմմառ-Լիբանան, 2007, 846 էջ):

Այս Շարակնոցին ապաւինելով է որ այժմ Զմմառեան կղերականները կը կատարեն իրենց պաշտօներգութիւնը Զմմառու վանքին մէջ թէ ի սփիւռս աշխահի, և բնականաբար նաեւ Հայաստանի մէջ[22]: Երկրորդ հատոր մը ևս պատրաստած ենք, Զմմառու աւանդական ծիսական անփոփոխ երգերու ամբողջական հաւաքածոյ մը, որ սակայն տպարան յանձնուած չէ ցարդ:

Գրականություն

1. Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան Կաթողիկոսի համառօտ ինքնակենսագրութիւնը, Դիւան Զմմառու, թիւ 93:
2. Աթայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959:
3. Աթանասեան Խ., Աբրահամ Պետրոս Ա. Կաթողիկոսը, Պէյրութ, 1959:
4. Աղեքսանդրեան Ա., Համառօտ պատմութիւն Կիլիկիոյ տասներկու Կաթողիկոսներու, Վենետիկ, 1906:
5. Անտոնեան Դիւան (ի Զմմառ), արկղ Դ:
6. Աստուածատուրեան Միքայէլ Եպիսկոպոս՝ Ընդարձակ վարք և պատմութիւն Աբրահամ Կաթողիկոսի, 1820, Դիւան Զմմառու, թիւ 207:
7. Գաստուե Ա., Զեկուցում հայկական երաժշտական արվեստի պատմության մասին, ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ 2, Երևան, 1981, էջ 261-262:
8. Դիւան Զմմառու, արկղ Ա:
9. Երգեցողութիւնք Ժամերգութեան, Աւանդական Եղանակներ Ք.Լ. Դպրոցի որ ի Հռոմ, Վենետիկ, Ս. Ղազար, 1964:

[22] Հասցէ. Հայ Կաթողիկէ Ժողովրդապետության Կենտրոն, Երեւան, Քանաքեռ, Թբիլիսեան մայրուղի, 1/3:

10. Զմմառու Ձեռագրատուն, թիւ 33:

11. Թերզեան Մեսրոպ վ. Le Patriarcat de Cilicie et les Arméniens Catholiques (1740-1812), Dissertatio ad lauream in Facultate Iuris Canonici, Pontificiae Universitatis Gregorianae, Beyrouth, Bzommar, 1955:

12. Թերզեան Մ. Եպս., L'Institut Patriarcal de Bzommar (յետ մահու), Պէյրութ, 1983:

13. Թէքէեան Վարդան վ., Համառօտ կենսագրութիւն Աբրահամ Պետրոս Ա. Կաթողիկոսի, «Յուշամատեան Զմմառու Տիրամօր Վանքին հիմնարկութեան, 250-ամեակ», Լիբանան, 2001, Բ. Մաս:

14. Կոանեան Անդրանիկ Վ., Զմմառու վանքին Մեծաւորները, Զուարթնոց (Զմմառու վանքի պարբերաթերթ), 14, 1993:

15. Կոանեան Անդրանիկ Վ., Ծիսական հարցեր հայ կաթողիկէ առաջին պատրիարքներու ատեն, Զուարթնոց, 15, 1994:

16. Մոմճեան Միքայէլ Վարդապետ, Ուսումնասիրութիւն նուիրուած Աբրահամ Պետրոս Ա. Արծիւեան Կաթողիկոսի ծննդեան 300-ամեակին, Պէյրութ, 1979:

17. Ներսէսեան Գրիգոր վ. (կոչեցեալ՝ Նեփոտ, Արծիւեանի զարմիկը), Յուշեր, Զմմառու ձեռագրատուն, Քրէյմի Անտոնեաններու Դիւան, Արկղ 21, թիւ 1:

18. Շարականք և Մեղեդիք, Լեւոնեան Վարժարան, Հռոմ, 1964:

19. Շարականք ըստ Լեւոնեան Վարժարանի աւանդութեան, հինգ հատորներ, 1973:

20. Սեթեան Ներսէս Վ., Յուշամատեան Ք. Լեւոնեան Հայ Վարժարանի 1883-1958, Ս. Ղազար-Վենետիկ, 1958, Դիւան Լեւոնեան վարժարանի, թիւ 148:

21. Տնտեսեան Ե., Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, «Պատմական ակնարկութիւն մը եկեղեցական եղանակաց վերայ», Բ-տպ., Պոլիս, 1933, էջ 177, տողատակի նշում:

22. Ֆրէյիա Ա., Բառարան լիբանանեան քաղաքներու և գիւղերու (արաբերէն), Բ. տպ., Պէյրութ, 1972:

23. Echo Catholique (Կաթողիկէ Արձագանգ), Փարիզ, Գ. տարի:

24. Raphael P. Le rôle des Maronites dans le retour des Eglises d'Orient, Beyrouth, 1935.

References

1. Abraham Petros A. Arc'iwean Kat'oghikosi hamar'o't inqnakensagrut'uny', Divan Zmmar'u, t'iv 93.

2. At'ayan R'., Haykakan xazayin notagrut'yiny', Erevan, 1959.

3. At'anasean X., Abraham Petros A. Kat'oghikosy', Pe'yrut', 1959.

4. Agheqsandrean A., Hamar'o't patmut'yun Kilikioy tasnerkov Kat'oghikosnerov, Venetik, 1906.

5. Antonean Divan (i Zmmar'), arkgh D.

6. Astuac'aturean Miqaye'l Episkopos՝ Y'ndard'ak varq ev patmut'yun Abraham Kat'oghikosi, 1820, Divan Zmmar'u, t'iv 207.

7. Gastue A., Zekucum haykakan erajhshtakan arvesti patmut'yan masin, KOMITASAKAN 2, Erevan, 1981, e'j 262-262.

8. Divan Zmmar'u, arkgh A.

9. Ergecoghut'yunq Jhamergut'ean, Avandakan Eghanakner Q.L. Dproci or i Hr'om, Venetik, S. Ghazar, 1964.

10. Zmmar'u D'er'agratun, t'iv 33.

11. T'erzean Mesrop v. Le Patriarcat de Cilicie et les Arméniens Catholiques (1740-1812), Dissertatio ad lauream in Facultate Iuris Canonici, Pontificiae Universitatis Gregorianae, Beyrouth, Bzommar, 1955.

12. T'erzean M. Eps., L'Institut Patriarcal de Bzommar (yet mahu), Pe'yrut', 1983.
13. T'e'qe'ean Vardan v., Hamar'o't kensagrut'yun Abraham Petros A. Kat'oghikosi, «Yushamatean Zmmar'u Tiramo'r Vanqin himnarkut'ean, 250-ameak», Libanan, 2001, B. Mas.
14. Kr'anean Andranik V., Zmmar'u vanqin Mec'avornery', Zvart'noc (Zmmar'u vanqi parberat'ert'), 14, 1993.
15. Kr'anean Andranik V., C'isakan harcer hay kat'oghike' ar'ajin patriarqneru aten, Zvart'noc, 15, 1994.
16. Momtwean Miqaye'l Vardapet, Usumnasirut'yun nvirovac' Abraham Petros A. Arc'ivean Kat'oghikosi c'nndean 300-ameakin, Pe'yrut', 1979.
17. Nerse'sean Grigor v. (kocheceal` Nep'ot, Arc'iveani zarmiky'), Yusher, Zmmar'u d'er'agratun, Qre'ymi Antoneanneru Divan, Arkgh 21, t'iv 1.
18. Sharakanq ev Meghediq, Levonean Varjharan, Hr'om, 1964.
19. Sharakanq y'st Levonean Varjharani avandut'ean, hing hatorner, 1973.
20. Set'ean Nerse's V., Yushamatean Q. Levonean Hay Varjharani 1883-1958, S. Ghazar-Venetik, 1958, Divan Levonean varjharani, t'iv 148.
21. Tntesean E., Nkaragir ergoc Hayastaneayc S. Ekeghecvoy, «Patmakan aknarkut'yun my' ekeghecakan eghanakac veray», B-tp., Polis, 1933, e'j 177, toghataki nshum.
22. Fre'yha A., Bar'aran libananean qaghaqneru ev giugheru (arabere'n), B. tp., Pe'yrut', 1972.
23. Echo Catholique (Kat'oghike' Ard'agang), P'ariz, G. tari.
24. Raphael P. Le rôle des Maronites dans le retour des Eglises d'Orient, Beyrouth, 1935.

РАЗНОВИДНОСТЬ ЛИТУРГИЧЕСКОГО РАСПЕВА МОНАСТЫРЯ БЗОММАР

ЭДВАРД ТОРИКЯН* (Ливан, Бейрут)

Для цитирования: Торикян, Эдвард: "Разновидность литургического распева монастыря Бзоммар". *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 101-115. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-101

Армянский литургический распев монастыря Бзоммар, перенятый из Сиса, на протяжении более чем трех веков был распространен в Ливане, в ничем не примечательном сельском уголке, вдали от Армении, Константинополя, армянского Иерусалима и Венеции. Бзоммарское духовенство не было знакомо с «современными» теориями армянских богослужебных песнопений XIX и XX веков, особенно с записью Н. Ташчяна гимнов в новоармянской системе нотации, что могло бы изменить подлинность передачи их традиции. Следовательно, варианты литургических песен монастыря Бзоммар могут быть причислены

* Заведующий музыкальной кафедрой факультета искусства, науки, музыки Ливанского университета Св. Духа, доктор музыкологии, профессор, участник международных конференций по арабской музыке, художественный руководитель и дирижер капеллы «Крунк» армянского католического патриархата. edouardtorokian@usek.edu.lb и edytoriguian@yahoo.fr, статья представлена 02.03.2022, рецензирована 20.04.2022, принята к публикации 20.05.2022.

к уникальным образцам шараканов Киликии, которые сохранились благодаря устной традиции, что указывает на их бóльшую достоверность.

В статье представлены основные этапы исторического развития Бзоммарского распева, а также их современное состояние и характерные особенности.

Ключевые слова: Абраам I Арцивян, Сис, монастырь Бзоммар, бзоммаряне, колледж Левонян, литургические песни, шараканы.

BZOMMAR MONASTERY'S VERSION OF THE ARMENIAN LITURGICAL CHANT

EDWARD TORIKIAN* (Lebanon, Beirut)

For citation: Torikian, Edward. "Bzommar Monastery's version of the Armenian liturgical chant", *Journal of Art Studies,* N 1 (2022): 101-115. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-101

The version of Armenian liturgical chant of the Bzommar monastery, imported from Sis, was sheltered and protected in Lebanon, an Arab country, at the corner of a humble village, quite far away from Armenia, Constantinople, the Armenian Jerusalem and Venice for more than three centuries. The Bzommarian clergy were completely unaware of the 19th and 20th centuries "modern" theories of the Armenian liturgical chant existence, especially of N. Tashjian's recording of the hymns with the new Armenian system of notation, that could have been altered the authenticity of the transmission of their tradition. Therefore, the Bzommarian version deserves to be considered one of the rare and attractive legatees and specimens of the "neglected" hymn tradition of Cilicia. This tradition was mostly orally preserved and transmitted, and it is a community tradition, rather than individual's interpretation, which makes it more reliable.

Here we are presenting the main stages of the Bzommarian's version historical course: its establishment, its transmission modes and circumstances, its current *status quo* and finally a brief inventory of its characteristic features.

Key words: Abraham I Ardzivian, Sis, the monastery of Bzommar, Bzommarians, the Antonine Armenians, the P. Leonine College, hymn chant.

* Head of Higher and Specialized Music Education programs in the School of Music & Performing Arts Faculty of Arts & Sciences, Holy Spirit University of Kaslik-Lebanon, Polyphonic arranger of Arabic and Syriac music, Arabic Music International conferences' Lecturer, Armenian Catholic Patriarchate Groong Choir's Artistic Director (1992-2016), Doctor of Arts, Associate Professor, edouardtorokian@usek.edu.lb & edytoriguian@yahoo.fr. The article was submitted on 02.03.2022, reviewed on 20.04.2022, accepted for publication on 20.05.2022.

ՀՏԴ : 78(479.25) + 681.3
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-116

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ (ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ*

Հղման համար. Շախկուլյան, Տաթևիկ: «Երաժշտության վերլուծության նոր մեթոդներ և հեռանկարներ (հայ երաժշտության օրինակով)»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 116-127. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-116

Հոդվածում քննարկվում է հայոց «Սասնա ծռեր» էպոսի՝ բանավոր ավանդույթով պահպանված երգերը համակարգչային վերլուծության ենթարկելու մի փորձ: The *Humdrum Toolkit* համակարգչային ծրագիրը հնարավորություն է տալիս վերլուծելու էպոսի երգերը և նոր մոտեցումներով պարզաբանելու որոշ հարցեր: Վերլուծությունը կատարվել է հոդվածի հեղինակի (երաժշտագետ), համակարգչային ինժեներ Էրիկա Բիսեզիի և երաժշտական հոգեբան Ռիչարդ Փարնկուտի գիտական համագործակցությամբ: Էպոսի երգերի հիմքում ընկած հնչյունաշարերը ներկայացնում են կցվող կվարտաներ տոնիկական հնչյունի վրա (Ռե[1]-Սոլ[1]-Դո[2]՝ Ռե տոնիկայի պայմաններում): Այսպիսի կառուցվածքը լիովին համապատասխանում է Կոմիտաս Վարդապետի՝ հայ ավանդական երաժշտության վերաբերյալ առաջադրած տեսությանը: Կոմիտասն իր տեսությունը ներկայացրել էր ավանդական երաժշտագիտության մոտեցմամբ՝ կիրառելով հայ երաժշտության էությանը համապատասխան վերլուծության նոր մեթոդներ, իսկ համակարգչային վերլուծության մեթոդը ենթադրում է մաթեմատիկական հաշվարկ: Հոդվածի հեղինակը կարևորում է այս մոտեցմամբ հայ երաժշտության վերլուծությունը, քանի որ արդի համաշխարհային երաժշտագիտական ուղղություններում համակարգչային հաշվարկը համարվում է «գիտական»՝ ի հակադրություն դասական վերլուծական մեթոդների:

Հայ երաժշտական երգացանկի ծրագրային վերլուծությունը լիովին ապացուցում է Կոմիտասի տեսության իրավացիությունը: Ակնհայտ է, որ այս մեթոդը թույլ կտա բացահայտել հայ երաժշտության վերլուծության նոր հեռանկարներ:

Բանալի բառեր՝ «Սասնա ծռեր», էպոս, թվային տեխնոլոգիաներ, համակարգչային վերլուծություն, «Համդրամ», Կոմիտաս, հայ երաժշտության տեսություն:

Ներածություն

Թվային տեխնոլոգիաների և համակարգչային միջոցների զարգացման ընթացքը վերջին տասնամյակներում հանգեցրել է երաժշտության հետազոտությունների նոր մեթոդների, որոնք մի կողմից կարող են ավանդական երաժշտագիտական հետազոտական մեթոդների առնչությամբ փոխլրացնող դեր ունենալ, բայց մյուս կողմից կարող են զանազան հակադիր հարցադրումներ առաջադրել: Եթե ավանդական երաժշտագիտության մեջ հետազոտող և վերլուծություններ կատարողն անմիջականորեն մարդն է, ապա թվային տեխնոլոգիաների պարագայում մարդը խնդիրը սահմանողն է, իսկ հետազոտությունը և վերլուծությունն իրականացնում է համակարգչային ծրագիրը՝ մարդու առաջադրած

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ղեկավար, արվեստագիտության թեկնածու, shakhkulyan@yahoo.com, institute@komitasmuseum.am, հոդվածը ներկայացնելու օրը՝ 15.10.2021, գրախոսելու օրը՝ 22.10.2021, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

հարցադրումների շրջանակներում: Այսպիսով՝ մարդ – համակարգիչ փոխգործակցությունը և՛ փոխհակադիր է, և՛ փոխլրացնող:

Անգամ այսպես կոչված համակարգային երաժշտագիտության (systematic musicology) մեջ ընդունված է, որ առաջին դեպքում հետազոտությունների արդյունքները սուբյեկտիվ են, քանի որ կախված են անհատի մոտեցումներից, մինչդեռ երկրորդն առաջադրում է օբյեկտիվ արդյունքներ՝ լինելով համակարգչային հաշվարկի ամփոփում: Ամենևին չհամաձայնելով այս տեսակետին՝ առիթ ընձեռվեց մասնակցելու համակարգային երաժշտագիտական հետազոտական մի ծրագրի, որի շրջանակներում հետազոտեցինք հայոց «Սասնա ծռեր» էպոսի երգվող հատվածները: Խոսքը վերաբերում է էպոսի՝ բանավոր ավանդույթով պահպանված ժողովրդական երգերին, որոնք հարյուրամյակներ, գուցեև հազարամյակներ սերնդեսերունդ փոխանցվելով, հասել են արդի ժամանակներ: Կոմիտաս Վարդապետն առաջինն է գրառել էպոսի առանձին հատվածներ, իսկ նրանից հետո գրառումներ են կատարել իր աշակերտները՝ Միհրան Թումաճանը [2, էջ 129], Սպիրիդոն Մելիքյանը [8, էջ 57 և 7, էջ 205], ապա նաև Արամ Քոչարյանը [11, էջ 54-86], Ալինա Փահլևանյանը [10, էջ 117-122] և այլք: Առաջ անցնելով՝ նշենք, որ ուսումնասիրությունները հաստատեցին հայ երաժշտության կառուցվածքային էության այն բնութագրիչները, որոնք ձևակերպված են Կոմիտասի աշխատություններում [4, էջ 153-164 և 5, էջ 120-132] և գիտականորեն ապացուցված են այլ երաժշտագետների ուսումնասիրություններում նույնպես [12]:

Համակարգչային ծրագիր

Թվային մեթոդով վերլուծություններ կատարող ծրագիր է Դեյվիդ Հյուրոնի ստեղծած «Համդրամը» (Humdrum), որը գոյություն ունի տասնամյակներ ի վեր և լայն տարածում է ստացել արևմտյան երաժշտագիտության ժամանակակից ուղղություններում [17 և 16, էջ 11-26]: Ծրագրին կարելի է «հանձնարարել» զանազան հաշվարկներ, համեմատություններ ու կարգավորումներ, այդ թվում՝

- ✓ փնտրել (որոշակի մոտիվ, կադենցիա և այլն),
- ✓ հաշվել (տվյալ ինտերվալի հաճախականությունը և այլն),
- ✓ դասավորել (օրինակ՝ լայն և նեղ դասավորությամբ ակորդներ),
- ✓ համեմատել (օրինակ՝ նույն գործի տարբեր խմբագրումները) և այլն:

Բոլոր պարագաներում խնդիրը, հարցադրումը, պահանջը ձևակերպողը հետազոտողն է:

Կոմիտասի՝ հայ երաժշտության հնչյունաշարերի վերաբերյալ տեսությունը

Հայ բանահավաք, երաժշտագետ, կոմպոզիտոր Կոմիտաս Վարդապետը (1869-1935) իր գործունեության բոլոր ոլորտներում հանդես է եկել որպես նորարար, հայտնագործող՝ բառի լիարժեք իմաստով: Կոմիտասը, հիմնվելով հազարավոր ժողովրդական և հոգևոր երգերի վերլուծության արդյունքների վրա, ձևակերպել է հայ ավանդական երաժշտության հնչյունաշարերի կառուցվածքային էությունը:

Ինչպես հայտնի է, ըստ նրա տեսության՝ հայ երաժշտության հիմքում ընկած հնչյունաշարերը բաղկացած են կցվող, այլ ոչ թե հարևանությամբ գտնվող քառալարերից (տետրախորդներից): Այսպես, եթե արևմտաեվրոպական երաժշտության մաժոր-մինորային համակարգի և դրան պատմականորեն նախորդած այսպես կոչված «միջնադարյան լադերի» հիմքում ընկած հնչյունաշարերի երկու քառալարերից առաջինի վերջին և երկրորդի առաջին հնչյունները հարևանությամբ են գտնվում, ապա հայ երաժշտության պարագայում երկրորդ քառալարի առաջին հնչյունը համընկնում է առաջինի վերջին հնչյունին: Ավելին, պայմանական երկրորդ քառալարի վերջին հնչյունից սկսվում է երրորդը և այսպես շարունակ: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հաջորդ քառալարի առաջին հնչյունը իր նախորդ քառալարի վերջին հնչյունի հետ նույնն է: Ստորև բերվող նոտային օրինակը տեսանելիորեն ցույց է տալիս քառալարերի հարաբերակցությունը հայ երաժշտության մեջ [1]:

Նոտային օրինակ 1

Երկու իոնական քառալարերի հարաբերակցությունը հայ երաժշտության մեջ.



Կցվող իոնական քառալարերից բաղկացած հնչյունաշար



Քառալարերի ներքին կառուցվածքը կարող է լինել տարբեր: Այսպես, հայ երաժշտության մեջ հանդիպում են իոնական, դորիական, փոյուգիական, ինչպես նաև մեծացված սեկունդայով քառալարերից կազմված հնչյունաշարեր, որտեղ մեծացված սեկունդան կարող է գտնվել քառալարի ներքևում, մեջտեղում կամ վերևում: Գործնականորեն նույն երգի կամ երաժշտական միավորի մեջ կարող են հանդիպել մեկից ավելի տեսակի քառալարեր, ինչպես, օրինակ, դորիական և մեծացված սեկունդայով քառալարերը:

Քառալարերի «կցման» սկզբունքն ի հայտ է բերում ինքնատիպ կառուցվածքային նկարագիր և հետևաբար նաև ինքնատիպ երաժշտական նյութ: Այս իրողությունը հետազոտվել և պարզաբանվել է մի շարք երաժշտագետների աշխատություններում, այդ թվում՝ Կոմիտասի [4 և 5], Ք. Կուշնարյովի [12], Մ. Բրուտյանի [1], Է. Փաշինյանի [14, էջ 194-212]: Ամփոփելով երաժշտագետների հետազոտությունները՝ ստորև թվարկենք առանձնահատկություններից մի քանիսը:

✓ Միևնույն հնչյունը օկտավային տարբեր տեղակայումներում հանդիպում է բնական և ալտերացված տարբերակով: Մեր օրինակում համատեղ գոյություն

ունեն փոքր օկտավի սի և առաջին օկտավի սի բեմոլ հնչյունները, փոքր օկտավի ֆա դիեզ և առաջին օկտավի ֆա հնչյունները, առաջին օկտավի մի և երկրորդի մի բեմոլ հնչյունները և այլն:

✓ Միևնույն հնչյունը տարբեր օկտավներում տարբեր գործառութային դեր ունի: Օրինակ, եթե տոնիկան առաջին օկտավի դո-ն է, որը քառալարի առաջին հնչյունն է, ապա երկրորդ օկտավում դո-ն տվյալ քառալարի երկրորդ հնչյունն է, այսինքն՝ խիստ անկայուն աստիճան է:

✓ Հնչյունաշարը ունենում է միայն մեկ կենտրոնական հնչյուն՝ տոնիկա: Օրինակ՝ առաջին օկտավի դո տոնիկայի պայմաններում այլ օկտավներում դո-ն տոնիկա չէ:

✓ Քառալարերի տվյալ համակարգն առաջ է բերում կայուն-անկայուն աստիճանների բոլորովին այլ համակարգ: Կվարտա ինտերվալը ձեռք է բերում առաջատար նշանակություն, իսկ երկու կցվող կվարտաներից գոյացած սեպտիմա ինտերվալը դրսևորվում է որպես «ոչ անկայուն»:

✓ Եթե արևմտաեվրոպական երաժշտության մեջ հարևան քառալարերի գումարը առաջ է բերում օկտավայնություն, ապա այս պարագայում կցվող քառալարերի գումարից գոյանում է փոքր սեպտիմա ինտերվալը, որը, փաստորեն, յուրահատուկ դիրքում է հայտնվում:

Հայ երաժշտության կառուցվածքային այսպիսի նկարագիրը բնորոշ է ավանդական ժանրերի բոլոր տեսակներին՝ ներառյալ հայոց «Սասնա ծռեր» էպոսի երգերին: Պահպանված և գրառված ավելի քան 40 երգերը, որոնք հետազոտողները համարում են երգվող հատվածներ [13, էջ 131], արտացոլում են հնչյունաշարերի այս սկզբունքը:

Համագործակցություն/նախապատմություն

Ավստրիայի Գրացի համալսարանի համակարգային երաժշտագիտության կենտրոնում (Zentrum für Systematische Musikwissenschaft) հետթեկնածուական հետազոտական աշխատանքի շրջանակներում հայ երաժշտության մասին դասախոսությունից հետո առաջարկ ստացա հայ երաժշտությունը հետազոտել համակարգչային ծրագրով նույնպես, քանի որ, ըստ կենտրոնի մասնագետների, անհատի (տվյալ դեպքում՝ Կոմիտասի) կարծիքի վրա հիմնվող գիտական հիմնավորումը սպառիչ չէ: Կոմիտասյան տեսության վերաբերյալ որևէ կասկած չունենալով հանդերձ՝ համաձայնեցի կատարել այդպիսի հետազոտություն՝ արևմտյան երաժշտագիտական հաստատություններում ընդունված «ոչ բավարար գիտական», «հումանիտար» չափանիշներով ներկայացված տեսությունը մաթեմատիկական ձևակերպումներով հաստատելու համար: Թեև երաժշտական լսողությունը միանգամայն տրամաբանորեն ընկալում է Կոմիտասի ձևակերպած մտածողությունը հայ երաժշտության առնչությամբ, սակայն այս դեպքում ակնհայտ էր, որ ոչ հայկական լսողության ու ընկալման համար իրողությունը միանշանակ չէր, հետևաբար մասնագետ երաժշտագետների համար լրացուցիչ պարզաբանումների, ապացույցների կարիք էր առաջանում:

Ընտրեցինք «Սասնա ծռերի» երգերը: Հետազոտական աշխատանքը ենթադրում էր տարբեր հմտությունների տիրապետող մասնագետների համագործակցություն: Ծրագրում ընդգրկվեցին համակարգչային ինժեներ Էրիկա Բիսեզին և համակարգչային երաժշտագետ, երաժշտական հոգեբան Ռիչարդ Փարնկուտը: Հետազոտական խմբով ձևակերպեցինք խնդիրներն ու առաջադրանքները և քայլ առ քայլ իրականացրինք գործընթացը:

Առաջադրանք

Մեր հետազոտական խմբի գլխավոր խնդիրն էր «ստուգել» կոմիտասյան տեսության ճշմարտացիությունը նոր տեխնոլոգիաների առաջադրած վերլուծական մեթոդներով: Խնդիրը ցանկացած հայազգի հետազոտողի (նաև իմ) դիտանկյունից անհեթեթ է թվում, սակայն ոչ հայազգի հետազոտողների համար էլ, ընդհակառակը, անհասկանալի է Կոմիտասի գործունեության նկատմամբ անմնացորդ վստահությունը: Ահա թե ինչու կարևորեցի նման մեթոդով հայ երաժշտության ինքնատիպության «վավերականացումը»: Նշված խնդիրը լուծելու նպատակով «Սասնա ծռեր» էպոսի երգերի առնչությամբ ծրագրին տվեցինք մի քանի առաջադրանք.

1) հաշվել ողջ երաժշտական զանգվածի մեջ հնչյունային քանակական գերակայությունը, այսինքն՝ յուրաքանչյուր հնչյունի դրսևորման քանակը.

2) հաշվել այն հնչյունների քանակական ցուցանիշը, որոնք հանդիպում են մեկ քառորդ և ավելի տևողություններով.

3) հաշվել ինտերվալային կազմի դրսևորումները, այսինքն՝ դուրս բերել, թե որ ինտերվալը քանի անգամ է հանդիպում տվյալ երկացանկում:

Главный дирижер Государственного симфонического оркестра Армении Сергей Смбатян ждал эту симфонию. Будучи верным интерпретатором симфонических произведений композитора и ознакомившись с ней, он решил, не откладывая, записать ее на видео. Симфония записывалась в Зале Концертно-спортивного комплекса имени Карена Демирчяна в режиме закрытого исполнения. Дирижер решил придать записи характер концерта, и, соответственно, внес в видеозапись элементы театрализации. Это выглядит так: музыканты выходят из-за кулис с двух сторон сцены и занимают свои места; их выход сопровождается аплодисментами (магнитофонная запись); в центр оркестра выходит концертмейстер – первая скрипка, чтобы подать тон; затем на сцену выходит дирижер, и музыканты, стоя, приветствуют его; слышны аплодисменты зала (магнитофонная запись)...

Ключевые слова: Эдуард Айрапетян, Симфония № 4, Сергей Смбатян, оркестр, исполнение, дирижер, посвящение.

Вступление

Четвертая симфония Эдуарда Айрапетяна была создана композитором в 2016 году. Ее отделяло от предыдущей симфонии – Третьей, 16 лет. Шестнадцать лет, наполненных работой, путешествиями, летними месяцами, проводимыми в любимом Дилижане, большими успехами на композиторском поприще как у себя в стране, так и за ее пределами. Радовали неожиданные сообщения об исполнении произведений то в странах Прибалтики, то в Германии, то в России...

---

* Ведущий научный сотрудник отдела музыки Института искусств НАН РА, доктор искусствоведения, заслуженный деятель искусств Армении, rukhkyan.margarita@gmail.com, статья представлена 25.01.2022, рецензирована 25.02.2022, принята к публикации 20.05.2022.

Концертная жизнь в Армении имела свой график и свой темп. Большую роль в развитии концертной культуры последних двадцати лет сыграла деятельность талантливого музыканта – скрипача и дирижера Сергея Смбатяна. Организованный им оркестр, в котором собрались молодые консерваторцы, начал активную концертную деятельность уже в 2005 году. В 2018 году Молодежному оркестру было присвоено звание Государственного симфонического оркестра Армении. На новом этапе деятельности пришли и новые идеи. Были задуманы и осуществлены целый ряд фестивалей, посвященных именитым армянским композиторам, где исполнялась и музыка юбиляров, и новая музыка, принадлежащая представителям молодого поколения. На глазах возникала картина развития и роста. Многие произведения получили на этих концертах путевку в жизнь, приобрели известность. Знаменитое недавнее прошлое – симфонии Александра Арутюняна, Дживана Тер-Татевосяна, Эдварда Мирзояна, Авета Тертеряна чередовались с исполнением произведений, только что вышедших из – под пера композиторов. Становилась ясна установка Сергея Смбатяна – представить музыкальной общественности и широкому слушателю картину полновесной жизни современной армянской музыки, сочетая произведения прошлых десятилетий и музыку сегодняшнего дня. Дирижер уделяет также место музыке, любимой массовой аудиторией. Он посвящает концерты музыке кино, исполняет лучшие ее образцы, уже в симфонической разработке.

Особое место в программах Сергея Смбатяна занимает творчество Эдуарда Айрапетяна. Дирижер включает его сочинения в гастрольные выступления, в большие фестивали, заказывает ему произведение, которое станет обязательным для большого Международного фестиваля-конкурса, посвященного молодым дирижерам.

Изложение основного материала исследования

Конечно, современная армянская симфония – это феномен культуры. Давно уже жанр симфонии перестал быть главным инструментом выражения чувств и мыслей композиторов на Западе, родине этого жанра. В Армении же, начиная с XX века, со времени приобщения армянской музыки к европейской симфонической традиции, симфония стала ведущим жанром армянской современной музыки. Почти все армянские композиторы обратились к написанию симфоний. Романный по существу, этот жанр стал вместилищем историй и повествований об Армении, исполненных драматическими событиями, вечной борьбой за свои идеалы, за свою веру. Строительная концепция жанра симфонии, изначально основанная на сонатном аллегро и отражающая энергию жизни, борьбу разнохарактерных начал, добра и зла, духовности и материальности впоследствии получила широкоформатность, которая вмещала в себя разные оттенки настроений и чувств в их противопоставлении и слиянии – рациональное и романтическое, созидательное и разрушительное, общественное и глубоко личное. Всё это многообразие состояний нашло яркое и драматургически насыщенное

отражение в симфониях Эдуарда Айрапетяна, как и в сопутствующих им инструментальных концертах.

Творчество Эдуарда Айрапетяна, композитора третьего поколения армянских симфонистов, заслуженно привлекает к себе интерес музыкальной критики, исполнителей и широкой аудитории слушателей. Автор почти тридцати инструментальных концертов, написанных для разных духовых инструментов и струнного оркестра, для ударных и струнного оркестра, для виолончели и симфонического оркестра, для скрипки и симфонического оркестра, для скрипки и камерного струнного оркестра, для фортепиано и симфонического оркестра, для двух солирующих инструментов и струнного камерного оркестра, он подошел к жанру симфонии во всеоружии средств и техники их применения.

Его Третья симфония, написанная по роману Меружана Симоняна «Большая огненная бабочка», определила в армянской музыке пантеистическую тему, выраженную с большим вдохновением. Тема природы и ее главенства в жизни человека предстала в симфонии Айрапетяна – наполненная глубоким смыслом, призывом не только видеть красоту природы, но и слышать ее. Пантеизм современный, напрягающий человека, выдвигающий нравственные вопросы, а не расслабляющий и убаюкивающий его, это новое направление современного искусства нашло в творчестве Айрапетяна свое, самобытное отражение. Не застылость очарованного ока, а движение и борьба за жизнь отражена в музыке симфонии, описывающей приключения «Большой огненной бабочки». Поэтичность романа Меружана Симоняна и подробная событийность мира природы, описанная в нем, вели композитора к более выразительному отражению, и симфония преобразилась в балет, либретто которого написал сам композитор в ожидании балетмейстера [2, с. 41-50].

И вот написана Четвертая симфония. Создавалась она в трудные времена, переживаемые Арменией и ее народом. Запись симфонии состоялась за неделю до Второй Арцахской войны.

Что возвещает она? Ведь романный жанр симфонии всегда и чувствовал глубже всех искусств, и предвещал. Главный дирижер Государственного симфонического оркестра Армении Сергей Смбатян ждал эту симфонию, будучи верным интерпретатором симфонических произведений композитора, и ознакомившись с ней, он решил, не откладывая, записать ее на видео. Симфония записывалась в Зале Концертно-спортивного комплекса имени Карена Демирчяна в режиме закрытого исполнения. Дирижер решил придать записи характер концерта, и, соответственно, внес в видеозапись элементы театрализации. Это выглядит так: музыканты выходят из-за кулис с двух сторон сцены и занимают свои места; их выход сопровождается аплодисментами (магнитофонная запись); в центр оркестра выходит концертмейстер – первая скрипка, чтобы подать тон; затем на сцену выходит дирижер, и музыканты, стоя, приветствуют его; слышны аплодисменты зала (магнитофонная запись)... Сдержанный кивок дирижера

в сторону зала и дружественный жест, обращенный к музыкантам. Оркестр готов к исполнению.

Эта картина полна смысла, она тонко и эстетично передает настроение исполнительского коллектива, собравшегося представить слушателям новую симфонию. Во всей этой картине, сделанной в приглушенном свете, притаилось таинство действия, где каждая деталь полна смысла. Эта прелюдия, предваряющая исполнение Симфонии, воспринимается как спектакль, хотя, если подумать – здесь нет ничего необычного. Мы видим картину, которая нам хорошо знакома, которую десятки и сотни раз мы наблюдали на сцене филармонии. И все же здесь все по-другому. Мы ловим каждый штрих видеоряда, движение каждого исполнителя, крупные планы музыкантов с их инструментами, общие планы оркестра, ловим настроение дирижера, выступающего в этой записи в роли самого себя…

Я снова и снова просматриваю на компьютере эту сценическую прелюдию и с восхищением отдаю должное идее дирижера, которая, конечно же, родилась из его проникновенного погружения в музыку композитора. Он ее хорошо знает, играет произведения Эдуарда Айрапетяна уже два десятилетия. Когда же зазвучала музыка, значительность этой «прелюдии» возросла. Она стала частью симфонии, точно так же, как день, который сохраняется в нашей памяти в связи со знакомством с ярким художественным произведением, становится для нас частью этого произведения.

Симфония начинается с тихого, приглушенного звучания струнных, медленная вдумчивая переменность гармонических вертикалей, торжественность и мелодизм напоминают хорал. Затаенность и глубокая грусть настроения этого вступления готовит слушателей к восприятию тех откровений, которыми композитор собрался поделиться со слушателями. Он озвучивает в этом вступлении музыкальную символику, которая олицетворяет духовные основы жизни, ставшие традицией. Образ хорала будет занимать в симфонии место ведущей идеи. В тихой торжественной «мессе» струнных слышится высокая проповедь, обращенная к миру. И не зря: едва утихли звуки хорала, как оркестр заволновался. Спонтанность звуковой суеты и диссонантность резко прозвучавших аккордов у духовых инструментов возникли, словно, по чужому плану, вызывая к жизни силы, стоящие на стороне хаоса. Оркестр открывает противоречивый мир, одна сторона которого выступает против другой.

Но вот зазвучали флейты и кларнеты как посланники живой природы, ее естественной красоты. Эти образы в творчестве композитора постоянны. Природа с ее звуковой средой, пасторальными мотивами, бесшумным созвучием полей и лесов, однако, внятным композиторскому слуху, с издалека зазвучавшей пастушеской свирелью, с передразниванием птичьих голосов, с раздавшемся в горном ущелье эхом и другими звуковыми красотами звучат в каждом произведении Эдуарда Айрапетяна. Эти образы и мотивы в творчестве Айрапетяна обладают силой противостоять образам хаоса, захватившим современное искуст-

во. Но здесь, в Четвертой симфонии в противоборстве хаосу и злу выступает также и образ хорала как символа христианского миросозерцания. Образы природы находят подтверждение в вере. Духовные размышления оказываются созвучны красоте. Здесь пересекаются главные темы классического искусства, и композитор сталкивает их с образами современного мира, стремясь разрешить конфликт с помощью архитектоники симфонического жанра, изначально рассчитанного на победу светлых начал. Поэтому его симфония трехчастна. Чистая форма расширенного сонатного аллегро дает картину борьбы противоречивых сил и естественного хода событий, которые неминуемо приведут к осознанию величия духовной мысли и естественной связи с природой.

Симфония растет и вверх, и вширь. Драматизм ее содержания выражается в учащенном пульсе музыкального действия, в диссонантных аккордах, идущих чередой с резкой окраской тритона и яркими секундовыми слияниями. И в этом «хаосе» звуков образ хорала сохраняется, возникая сквозь чередование диссонантных аккордов, поддержанных активным участием большого барабана.

Как часто звуки симфоний, как новых, так и классических, формируют для меня образ, созданный современным бразильским писателем и поэтом Пауло Коэльо, образ Воина Света. Этот обобщенный образ, отражающий бескомпромиссность высоких идеалов, выраженных в искусстве, восходит к временам устных преданий. Его романтическая сущность не отрицает реалий жизни. Так построены и народные эпосы, соединяющие вымысел и жизненную правду. Этот «замес» свободной фантазии и жизненной конкретики дал всходы большим современным жанрам литературы и музыки, сформировал их строительную технику, соединил инструменты в ансамбли, которые выросли в оркестр, отшлифовал гениальную логику сонатного аллегро, на котором проросла симфония, сущность которой символична; ее можно трактовать как мир в многообразии, как сложную дорогу к правде, как путь, ведущий к гармонии и миру.

Характер первой части симфонии можно было бы определить как смятение. Признаться в этом чувстве было естественно в тот момент, когда страна Армения как бы теряла над собой власть. Все шло по инерции, которая напоминала наклонную плоскость. Убывали героические призывы, уходили в прошлое патриотические речи и песни, но Армения величественно возвышалась над современностью своей историей, своими храмами, своими жертвами во имя веры, поручая им, молчаливым свидетелям, свою судьбу. В который раз? Вопрос так и носится над звуковыми массивами симфонии. Ее аура, обуреваемая идеей Красоты, то гаснет, то светится в аккордовых параллелях кварто-квинтового круга в поисках другого, иного пути. Автор переходит на позицию наблюдателя и как бы отпускает оркестр на волю, и звуки снижают силу интонационной речи. Движение музыки отдается естественному ходу развития, звуковая ткань тает, и подголоски своими тихими голосами формируют гармоническое заключение, на какой-то миг вспоминая хорал и устанавливая передышку действию.

Вторая часть симфонии по традиции жанра – это иная сфера чувствований вокруг все той же темы, тех мотиваций, ради которых рожден симфонический опус.

Здесь «напрашивается» общая характеристика армянской симфонии как явления, раскрывающего глубокий и, может быть, тайный смысл армянского симфонизма. Почему тайный? Потому что армянская история всегда нуждалась и нуждается в справедливых комментариях. Былое величие Древней Армении всегда аккумулировалось величием и ценностью армянской культуры, как древней, так и современной. Романный жанр симфонии осуществил мечту армян сделать историю народа пропетой, услышанной другими народами. Отсюда такое огромное значение в армянской симфонии имел народный музыкальный материал, часто играющий главную роль и в драматургии, и в характере мелодического изложения. Каждая новая симфония становилась в ряд предшествующих, создавая единое музыкальное направление, символизирующее живое чувство истории и жизни.

Симфоническая драматургия, имея свой инструментальный театр, стала независимой, неизмеримо расширив свои внутренние ресурсы. В каждой большой симфонии театр представлен в самом широком понимании этого явления – и как сценический рассказ, и как спектакль с главными и побочными персонажами, с линией сюжета, стремительно ведущего к разрешению конфликта, и как «театр звука».

Психологизм, привнесенный в симфонию в эпоху романтизма, расширил аспекты авторского присутствия, личного сопереживания, сделав автора героем симфонии. Вот этот романтический героизм, примеренный к современнику и взятый на себя, отмечает новый этап симфонического творчества во второй половине XX века. Открываются исповедальные лики симфонических произведений Гии Канчели, «распрощавшегося» после 7-ой Симфонии с жанром симфонии, но пишущего масштабные симфонические произведения свободного мелотематического построения; возникают поэтические откровения странника, ушедшего в народ, – Третья, Пятая, Шестая и Седьмая симфонии Авета Тертеряна. Наконец, острое чувство современности, беспокойство по поводу событий в мире, горячее желание принять участие в упорядочении народной жизни, расширить тематику симфонических и инструментальных произведений, овеянных несокрушимым романтизмом – ведь это тоже бой, – эти черты самоотверженного, идущего как бы на плаху творчества, мы отмечаем в симфонизме армянских композиторов конца XX начала – XXI века, в произведениях Рубена Саркисяна, Ерванда Ерканяна, Вардана Аджемяна, Ваче Шарафяна, Эдуарда Айрапетяна.

После первой части симфонии мы ждали или скерцо, традиционную часть симфонии, ритмически отражающую энергию жизни и участия в ней, или медленную – в темпе адажио, напоминающую нам о возможности уйти в медитацию, в свободное размышление о теме, которая стала главной для композитора и для нас. Нам нужно было выйти к более глубокому пониманию тайны данной

симфонии. Тайной я называю стимул. Стимул в искусстве должен быть оправдан драматургически, в смысловом и содержательном планах. Поэтому вторая часть симфоний всегда особенно значительна как часть архитектуры жанра. Да, симфония – это театр, но театр опоэтизированный, в котором народное, карнавальное начало приобрело символические формы, способные продлить то самое искусство, которое Бахтин называет целостным, когда «все телесное и внешнее одухотворено и интенсифицировано в нем, все духовное и внутреннее (с нашей точки зрения) – телесно и овнешнено» [1, с. 286], что и формирует глубоко содержательный, гармонично осмысленный образ человечества в классическом искусстве в естественном проявлении его народных, национальных черт.

Вторая часть симфонии Айрапетяна пробует нашу сосредоточенность. Мы прониклись драматизмом первой части симфонии, оказались покоренными природной красотой поэтических высказываний флейты, гобоя, высокого кларнета, группы деревянных, неожиданных энергичных выступлений ударных в форме монолога, ожидали реакции на них всего оркестра, который, однако, уводил музыку с открытой сцены действий в тень размышлений. Здесь, во второй части симфонии композитор ищет ответы на поставленные им же вопросы. Поэтическое настроение автора выражается в спонтанно возникающих коротких мотивах, словно прерванных чужой волей. Один из них, прозвучавший мимолетно и пронесшийся в оркестре словно на гребне волны воспоминаний, живо напомнил нам известную историю путешествия композитора в Италию в 1990 году. Его визит к мхитаристам на остров Лидо в тот год отсчитывал 200 лет с той поры, когда здесь побывал Байрон. И вот живительный ветер ассоциаций отдался романтическим эхом. Да, музыка это может – осветить в мгновение ока проходящей интонацией целый мир, образ страны, характер народа, чувство любви. Одной интонацией, одним мазком, одной линией, одним словом – как часто мы слышим это и в отношении других искусств... И мне захотелось процитировать Байрона, стихотворения которого легли в основу прекрасного вокального цикла Эдуарда Айрапетяна для голоса и 10 инструментов, написанного в 1990 году, – после возвращения из Италии, – «Менестрель, мне хочется плакать...»:

Гибель прошлого, все уничтожа,
Кое в чем принесла торжество:
То, что было всего мне дороже,
По заслугам дороже всего.

Есть в пустыне родник, чтоб напиться,
Деревцо есть на лысом горбе,
В одиночестве певчая птица
Целый день мне поет о тебе.

Стансы к сестре Августе «Когда время мое миновало»
(Перевод Б. Пастернака) [2, с. 94]

Богатая подголосочная ткань оркестра помогает найти верный, скорее, ясный путь к темам первой части, к образу хорала, к тревогам сегодняшнего дня. Драматургический план жанра симфонии неумолимо ищет рациональное разрешение конфликта. Неожиданно возникший романтический запев флейты, вызвавший у нас ассоциации с вокальным циклом композитора и образом Италии, казалось бы, призывает к мелодическому распеву, к романтической пространной интерлюдии, но композитор ограничивает себя в этом, на первый план выдвигая спонтанность появления голосов и интонаций из мира природы, из небесной сферы, созвучных его творческой идее и открывающих зеленую дорогу к финалу.

Долгое завершение 2-ой части симфонии оправданно. Оркестр «добывает» завоеванное чувство устойчивости, гармонии, правды. Инструменты самостоятельно нащупывают этот путь, время от времени выступая соло со своими «предложениями», – то флейта, то гобой, то кларнет – они так волнующе прекрасны в своих мотивных интонациях и так выразительны и дружественны к другим инструментам, формируя в процессе своего общения главную тему Симфонии. Достигнутая глубоким старанием всего оркестра, она возникает в виде тонического мажорного устоя на ноте До! Мажорное созвучие на До выпевается низкими трубами и валторнами, оставляя в арсенале аккорда tutti диссонантные отзвуки для еще большего оттенения той силы и уверенности, которые оно несет. Здесь нет чувства победы, это тема сегодняшнего дня, продолжающая «симфонический разговор».

Третья часть симфонии создает симметрию формы. Снова тишина и звучащий в струнных образ хорала. Но оркестр уже таит в себе огромную энергию борьбы, завоеванной и сердцем, и интеллектом, и затаенным чувством красоты, для которой, кажется, не время. Но нет, именно время, поэтому и пишется эта музыка, а вслед за ней напишутся и стихи... Мечта композитора. Он всегда мыслил не только звуками своей музыки, но и стихами, комментирующими его музыку.

Короткий мотив гобоя звучит как сигнал к завершению, но впереди еще много откровений! Оркестр волнуется как море, издалека звучит челеста, из прошлого, из детства, как упражнения на фортепиано, давая повод оркестру и музыке и вспомнить, и проникнуться своими воспоминаниями. Музыканты оркестра выглядят как поэты, каждый со своим инструментом. Вот что сделал Эдуард Айрапетян с ними, включая и дирижера. Его летящие руки и пальцы, выразительно рисующие над головой линию задуманной формы, это что-то новое из его дирижерской техники. Здесь явно видно пережитое им вдохновение, и это подтверждение силы музыкальных впечатлений.

Валторны мягко, но уверенно возвращают нас к реальности и предлагают новый путь к постижению истины, которая, конечно же, больше и значительнее, чем тема, найденная композитором и разгаданная дирижером и оркестрантами. Истина разгадана не до конца, но путь нащупан, услышан, представлен... Это главное, об этом говорят все большие произведения искусства, предлагаю-

щие человечеству идти с ними вровень. И вот, в конце третьей части появляется новая тема симфонии, которая успокаивает оркестр, вдохновляет дирижера, вселяет в нас надежду: гаммы хрустально бегут вверх, исполненные челестой в стремлении остаться на достигнутой высоте. Маленькая зацепка в виде короткого повтора последних двух нот – и они остаются, как человеческий голос, внезапно пробужденный к пению.

Размышления о неувядаемой аутентичности жанра симфонии опять же приводят нас к рассуждениям Бахтина. «Изучение романа как жанра отличается особыми трудностями, – пишет он. – Это обусловлено своеобразием самого объекта: роман – единственно становящийся и еще не готовый жанр. Жанрообразующие силы действуют на наших глазах: рождение и становление романного жанра совершаются при полном свете исторического дня. Жанровый костяк романа еще далеко не затвердел, и мы еще не можем предугадать всех его пластических возможностей» [1, с. 447]. Бахтин это писал в 1941 году. Действительно, впереди жанр романа ожидали пики расцвета, с ним поднимались из эпосов и сказок разные национальные литературы, засверкали имена великих романистов XX века…

Заключение

Для армянской музыки XX век оказался временем расцвета большой симфонической формы, обогащенной содержанием и многообразностью настроений, исходящих из зрительных и духовных впечатлений. Современная армянская симфония продолжает процесс создания национального современного эпоса. И в этом «эпосе» не нужно искать присущей данному жанру публичности, особой торжественности, громкости и временной масштабности. Размышления о многообразии современного мира, любование прекрасным, что крайне актуально для современного искусства, творческое претворение традиций симфонизма, романтические воспоминания о его вершинах, что прибавляет вдохновение современному искусству, – этот круг размышлений и тем глубоко и талантливо отражается в творчестве Эдуарда Айрапетяна.

Четвертая симфония явно начинает новый период в творчестве Айрапетяна. Думается, это период обобщенного осмысления событий, включающих современную историю. Эта тема, давно освоенная в жанре симфонии, сегодня особенно актуальна, и композиторское участие в ее разработке в масштабах больших симфонических форм повысит градус национально-патриотического духа.

Литература

1. Бахтин М. Вопросы литературы и эстетики. Исследования разных лет, Москва, «Художественная литература», 1975.
2. Рухкян М. Врема Эдуарда Айрапетяна, Ереван, «Гитутюн», 2020.

References

1. Bahtin M. Voprosy literatury i jestetiki. Issledovanija raznyh let, Moskva, «Hudozhestvennaja literatura», 1975.
2. Ruhkjan M. Vrema Jeduarda Ajrapetjana, Erevan, «Gitutjun», 2020.

ԷԴՈՒԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. ՍԻՄՖՈՆԻԱ № 4

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌՈՒԽԿՅԱՆ*

Հղման համար. Ռուխկյան, Մարգարիտա: «Էդուարդ Հայրապետյան. Սիմֆոնիա № 4»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 140-151. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-140

Էդուարդ Հայրապետյանի Չորրորդ սիմֆոնիան (2016) վառ վկայությունն է կոմպոզիտորի ստեղծագործական վարպետության և տաղանդի բարձր մակարդակի: Այստեղ կենտրոնացավ փորձությունների շեմին գտնվող ժողովրդի՝ կյանքի զգացողությունը: Կոմպոզիտորը համակ ունկնդիր է կյանքին: Նա փնտրում է հոգևոր հենարան, որը և գտնում է արվեստի, երաժշտության դերի խոր գիտակցման մեջ: Երաժշտական ստեղծագործության, սիմֆոնիկ երաժշտության և սիմֆոնիայի ժանրի հարուստ ավանդույթները հայ երաժշտության անհերքելի նվաճումներն են: Կոմպոզիտորը կատարելապես տիրապետում է այդ գործիքակազմին: Նրա Չորրորդ սիմֆոնիան հայ երաժշտական մշակույթի նոր նվաճումն է:

Այս երկն ակնհայտորեն նոր շրջան է բացում Հայրապետյանի ստեղծագործության մեջ: Թվում է, թե սա ժամանակակից պատմության իրադարձությունների ընդհանրացված իմաստավորումն է: Սիմֆոնիայի ժանրում վաղուց յուրացված այս թեման այսօր առավել քան արդիական է, և մեծ սիմֆոնիկ ձևերի մասշտաբներում նրա մշակման մեջ կոմպոզիտորական մասնակցությունը բարձրացնում է ազգային-հայրենասիրական ոգու աստիճանը:

Չորրորդ սիմֆոնիան ստեղծվեց Հայաստանի և հայ ժողովրդի պատմության համար դժվարին ժամանակահատվածում: Դա ձայնագրվեց Արցախյան երկրորդ պատերազմից մեկ շաբաթ առաջ:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանն սպասում էր այս սիմֆոնիային և, լինելով կոմպոզիտորի սիմֆոնիկ ստեղծագործությունների հավատարիմ մեկնաբանը, ծանոթանալով սիմֆոնիա-

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, rukhkyan.margarita@gmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 25.01.2022, գրախոսելու օրը՝ 25.02.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

յին, որոշեց չհետաձգել և տեսագրել այն: Սիմֆոնիան տեսագրվեց Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի համերգային դահլիճում: Դիրիժորը որոշեց տեսագրությանը հաղորդել համերգային կատարման բնույթ՝ ներմուծելով թատերայնության տարրեր: Երաժիշտները կուլիսներից մտնում են բեմ և զբաղեցնում տեղերը: Նրանց մուտքն ուղեկցվում է ծափահարություններով (մագնիտոֆոնային ձայնագրություն): Նվագախմբի կենտրոն է գալիս կոնցերտմայստերը՝ առաջին ջութակը՝ տոնը տալու: Այնուհետև դուրս է գալիս դիրիժորը, և երաժիշտները հոտնկայս ողջունում են, դահլիճից լսվում են ծափահարություններ (մագնիտոֆոնային ձայնագրություն)…

Բանալի բառեր՝ Էդուարդ Հայրապետյան, Սիմֆոնիա № 4, Սերգեյ Սմբատյան, նվագախումբ, կատարում, դիրիժոր, նվիրում:

EDUARD HAYRAPETYAN: SYMPHONY № 4

MARGARITA RUKHKYAN*

For citation: Rukhyan, Margarita. "Eduard Hayrapetyan: Symphony № 4", *Journal of Art Studies,* N 1 (2022): 140-151. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-140

Eduard Hayrapetyan's Symphony № 4 (2016) confirmed the high level of the composer's creative skills and talent. In it, new perception of the nation's existence in the time of hardships is concentrated. The composer listens carefully to life. He looks for and finds spiritual mainstay in profound understanding of the role of art, music in his case. Rich traditions in music – symphony music and the genre of symphony – are inalienable achievements of Armenian art. The composer has mastered that toolkit to perfection. His Symphony № 4 is a new accomplishment of Armenian musical culture.

Symphony № 4 definitely marks a new period in Hayrapetyan's creative work. It is a period of generalized comprehension of events, modern history included. That theme, long ago integrated in the genre of symphony, is particularly actual today, and the composer's endeavor to develop it in the form of a large-scale symphony is to elevate the national-patriotic spirit of his compatriots.

Symphony № 4 was written when Armenia was going through difficult times – and recorded a week before the Second Artsakh War.

Chief conductor of the State Symphony Orchestra of Armenia Sergey Smbatyan awaited it, and, as a dedicated interpreter of the composer's symphony pieces, upon

* Leading Researcher at the Music Department of NAS RA Institute of Arts, Honored Art Worker of the RA, Doctor of Sciences (Arts), rukhkyan.margarita@gmail.com, The article was submitted on 25.01.2022, reviewed on 25.02.2022, accepted for publication on 20.05.2022.

familiarizing himself with the work at issue, decided to undertake video recording without delay. It was recorded during a closed performance in the Karen Demirchyan Sports and Concerts Complex. In order to convey the impression of a concert, the conductor resorted to certain theatrical devices. Here is how it looks: the musicians come on stage from the wings and take their seats, their entrance accompanied by applause (tape recording); the concertmaster – first violin – sets the tone, then the conductor comes out, the musicians stand up to greet him; welcoming applause is heard (tape recording)…

Key words: Eduard Hayrapetyan, Symphony № 4, Sergey Smbatyan, orchestra, performance, conductor, dedication.

ՀՏԴ : 929:792(479.25) Սարգսյան + 809.198.1 + 93(=919.81)
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-152

ՇԱՀԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «ԱՐՄԵՆ» ԹԱՏԵՐԱԽՄԲԻ ՀԻՄՆԱԴԻՐ (ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ՝ ՍՓՅՈՒՌՔԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ)

ԱՆԱՀԻՏ ՉԹՅԱՆ*

Հղման համար. Չթյան, Անահիտ: «Շահեն Սարգսյանը՝ «Արմեն» թատերախմբի հիմնադիր (հայոց լեզուն՝ սփյուռքի թատերական համակարգում)»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 152-165. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-152

Շահեն Սարգսյանը (1910-1966) 1938 թվականից ապրել և աշխատել է Թեհրանում, տարիներ շարունակ վարել «Ժուռնալ դը Թեհրան» ամսագրի արվեստի բաժինը՝ համագործակցելով «Ֆիրդուսի» և «Սաադի» թատրոններին, «Անահիթա» ռադիոկայանին: 1956-ին նա հիմնեց «Գրուհը Հոնարը Մելլի» թատերախումբը: Իր տեսակի մեջ բոլորովին նոր մի կառույց, որը, ամփոփելով անցյալ դարասկզբից երկրում խմորվող նախափորձերը, ճանաչվեց որպես Իրանի ազգային թատրոնի հիմնադիր թատերախումբ: Շուտով, հեռանալով իրանյան թատրոնից, Շահեն Սարգսյանը հայ մշակութային «Արարատ» կազմակերպությանը կից ստեղծեց «Արմեն» թատերախումբը:

Շահեն Սարգսյանը, 1960-ականներին հիմնելով «Արմեն» թատերախումբը, Թեհրանի թատերական կյանքը հարստացրեց նշանակալից իրադարձություններով: Միաժամանակ, տարվելով գեղագիտական նորամուծություններով, Սարգսյանը պատշաճ ուշադրությամբ չվերաբերվեց լեզվին առնչվող հարցերին: Հարցեր, որոնց Սփյուռքում և հատկապես Իրանի հայ համայնքում վերաբերվում են հատուկ խստապահանջությամբ: Նրա շուրջ ստեղծվեց մի բարդ իրավիճակ, որը նա չկարողացավ հաղթահարել: Ժամանակ էր պետք, որ համայնքի թատերական գործիչները, լեզվի անաղարտության հարցին տալով առաջնահերթ նշանակություն, զարգացնեին Սարգսյանի նորարարական գաղափարները՝ դրանով իսկ պահպանելով այն նշանակալից ավանդը, որ ռեժիսորն ունեցավ Իրանի հայ թատրոնում:

Բանալի բառեր՝ թատերախումբ, լեզու, գեղագիտական, նորամուծություն, ներկայացում, բեմ, ազգային:

Ներածություն

1950-60-ական թվականներին Իրանի հայ թատրոնը, հաղթահարելով հերթական ճգնաժամը, թևակոխեց ստեղծագործական նվաճումներով լի մի ժամանակահատված: Ասպարեզում հայտնվեցին թատերական գործիչներ, որոնք, տեղի բեմարվեստը պարզապես աշխուժացնելուց բացի, թատրոնը հասցրին որակական մի նոր մակարդակի: Մուշեղ Հովհաննիսյանը (1902-1957) Թավրիզից, իսկ Շահեն Սարգսյանը (1910-1966) Փարիզից Թեհրանում հաստատվելուց հետո իրենց հիմնած ԹԵԱԹ (1949) և «Արմեն» (1960) խմբերի ուժերով կարճ ժամանակամիջոցում համայնքի մշակութային կյանքը հագեցրին նշանակալից և վառ իրադարձություններով:

---

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, anahit.anahit.art@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 04.10.2021, գրախոսելու օրը՝ 11.10.2021, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

«Արմեն» թատերախմբի գործունեության սկիզբը

Շահեն Սարգսյանը 1938 թվականից ապրել և աշխատել է Թեհրանում, տարիներ շարունակ վարել «Ժուռնալ դը Թեհրան» ամսագրի արվեստի բաժինը՝ համագործակցելով «Ֆիրդուսի» և «Սաադի» թատրոններին, «Անահիթա» ռադիոկայանին: 1956-ին նա հիմնեց «Գրուհը Հոնարը Մելլի» թատերախումբը: Իր տեսակի մեջ բոլորովին նոր մի կառույց, որը, ամփոփելով անցյալ դարասկզբից երկրում խմորվող նախափորձերը, ճանաչվեց որպես Իրանի ազգային թատրոնի հիմնադիր թատերախումբ [15, էջ 118][1]: Շուտով, հեռանալով իրանյան թատրոնից, Շ. Սարգսյանը հայ մշակութային «Արարատ» կազմակերպությանը կից ստեղծեց «Արմեն» թատերախումբը, որի առաջին իսկ՝ «Զվարճալիք» ներկայացմամբ (հեղ. Արթուր Շնիցլեր, 1961), խախտվեց անհեռանկարային այն իրավիճակը, որը երկար ժամանակ տիրում էր Իրանի հայ բեմում: Անվանի նկարիչ և թատրոնին անմիջականորեն առնչվող արվեստագետ Հարություն Մինասյանը (1910-2002) իր թատերախոսականում թերևս տվեց «Զվարճալիքի» թողած տպավորության առավել սպառիչ նկարագրությունը: Սովորաբար զուսպ և պահանջկոտ հեղինակի հիացական հոդվածից կարելի է եզրակացնել, որ Շահեն Սարգսյանի մուտքն իրանահայ թատրոն հերթական իրադարձության սահմաններից դուրս մի երևույթ էր. դա պարզապես մի հեղաշրջում էր՝ բոլոր առումներով: Նախ՝ ներկայացումն սկսվեց ճիշտ ժամանակին: Անսովոր մի փաստ, եթե հաշվի առնենք, որ անճշտապահությունը հավասարապես հատուկ էր ինչպես հանդիսատեսներին, այնպես էլ դերասաններին: Անսովոր էին նաև ամենուրեք տիրող մաքրությունն ու կարգուկանոնը: «Սրահում նստած շոյում էր մեր աչքը, պատվի էր մեր ինքնասիրությունը, չէինք վիրավորվում, մեզ խաբված ու ծաղրված չէինք զգում» [1], - գրեց Մինասյանը՝ դահլիճում և նախասրահում տիրող մթնոլորտը գնահատելով բեմում ընթացող գործողություններից ոչ պակաս կարևոր:

Հանդիսատեսը, այսպիսով, նախապատրաստված էր պատշաճ գնահատական տալու նաև ճաշակավոր բեմահարդարմանը, որը, հաճելիորեն զարմացնելով իր քաղաքակիրթ տեսքով, ներկաներին կարծես տեղափոխում էր իր իսկ՝ հեղինակի հայրենի քաղաք. «Վիեննայում... ո՛չ Թեհրանում, ո՛չ Արարատի սրահում, այլ Վիեննայում - Արթուր Շնիցլերի հայրենիքում» [1] էին իրենց զգում հանդիսատեսները վարագույրի բացվելուն պես: «Այո՛, անթերի նույնիսկ սինեմայի կարիքները բավարարող» [1], - գրում է Հարություն Մինասյանը՝ ի դեմս բեմահարդար Արբի Հովհաննիսյանի (ծնվ. 1942)՝ կռահելով ապագա կինոռեժիսորին:

Ներկայացնելով իր առաջին տպավորությունները՝ Հարություն Մինասյանն անցնում է դերասանական խաղին: «Դժվարին պիեսներ» բեմադրողի [1] համարումն ունեցող Շահեն Սարգսյանը հաստատեց, որ նա իրավացիորեն ճանաչված էր նաև որպես դերասան պատրաստող ռեժիսոր: Հետևելով «յուրաքանչ-

[1] 1934 թվականին Վահրամ Փափազյանը հյուրախաղերով գտնվում էր Իրանում: Արտասահմանում մասնագիտական կրթություն ստացած մի խումբ պարսիկ դերասանների ուժերով նա բեմադրեց Շեքսպիրի «Օթելլոն»՝ գլխավոր դերը կատարելով ֆրանսերենով: Ըստ «Վերածնունդ» թերթի՝ 1934 թ. փետրվարի 16-ը՝ Թեհրանի «Պալաս» թատրոնում տրված «Օթելլոյի» ներկայացման օրն էլ համարվեց պարսից թատրոնի սկիզբ [23, 12, 25]:

յուր դերակատարի բոլոր խաղերին,- գրում է հեղինակը,- միզանսցենին, խմբական կամ անհատ կացությանց, պաուզաներին և ընդհանուր զարգացման հաջորդականության, բացահայտ կերպով զգում էինք ռեժիսորի ներկայությունը յուրաքանչյուր պահին» [1]: Առաջնորդվելով անսամբլային խաղի սկզբունքներով՝ բեմադրիչը, չնսեմացնելով դերասանի ստեղծագործական մտահղացումները, հասավ նրանց հավաքական խաղը բնութագրող հատկանիշների բացահայտմանը: Աշոտ Հաճյանը՝ Թեոդորի, իսկ Համլետ Քարամյանը՝ Ֆրիցի դերերում առանձնացան կիրթ շարժուձևով և վայելուչ կեցվածքով: Ըստ թատերախոսի գնահատականի՝ ռեժիսորը կարողացավ «պրոֆեսիոնալ դերասանների անսամբլին վայել մի թատերգություն բեմադրել»: Կիրառվեցին ամբողջովին նոր մոտեցումներ, որոնք ինքնին մերժեցին նախկինում ընդունված կեղծ ու պաթետիկ խաղաոճը, որը, նշենք, թատրոնի առաջընթացը կասեցնելուց բացի, դարձավ նաև հանդիսատեսին վանելու հիմնական պատճառներից մեկը: Շատերի համար տարիներ շարունակ անտեսանելի այս ընթացքը միանգամից դարձավ ակնհայտ՝ ընդգծելով միայն մեկ ներկայացումից հետո համայնքի բեմարվեստում կայացած դրական տեղաշարժերը: «Եվ այդ գիշեր, մեկեն զգացինք, - գրում է Հարություն Մինասյանը,- որ այլևս հոգնել ենք «դերասանություն» դիտելուց, այլևս կշտացե՛լ - գալարումների անհարկի միմիկաներ ու բազմաշարժ գիմնաստիկա ըմբոշխնելուց: Այդ գիշեր իմացանք, որ թատերական հասարակությունը, որ խռով հեռացել էր մեր թատրոնից - պիտի վերադառնա, այլևս պետք է, որ վերադառնա» [1]:

Հանդիսատեսն, իրո՛ք, վերադարձավ թատրոն: «Արմեն» թատերախմբի առաջին իսկ ներկայացմամբ ստեղծվեց հուսադրող մի տրամադրություն, մարդկանց ներշնչելով, որ «նոր և թարմ ուժերով նոր թատերախումբը» կստեղծի նաև «նոր թատրոն», և նրանք կդիմավորեն «թեհրանահայ թատրոնի վերածնունդը» [1]:

Խմբի հաջող սկիզբն ունեցավ նույնքան հաջող շարունակություն: «Զվարճալիքին» հաջորդեց Ալեքսանդր Շիրվանզադեի «Արմենուհին» (1961): Դերասանական խաղից բացի, նորովի էին կառուցված նաև ռեժիսոր-բեմահարդար հարաբերությունները: «Արմենուհին» հաստատեց, որ նրանք դարձել էին ներկայացման համահեղինակներ՝ երբ մեկի ստեղծած բեմական միջավայրը հիմք էր ծառայում մյուսի բեմադրած գործողությունների ընթացքի համար: Շահեն Սարգսյանի և Արբի Հովհաննիսյանի համագործակցությունը դարձավ համախոհ-արվեստագետների միասնության այն տեսակը, որը բեմարվեստի շրջադարձային փուլերում դառնում է առանձնապես նշանակալից (Կոնստանտին Սերգեևիչ Ստանիսլավսկի - Վլադիմիր Իվանովիչ Նեմիրովիչ-Դանչենկո, Գևորգ Զմշկյան - Գաբրիել Սունդուկյան, Լևոն Շանթ - Գասպար Իփեկյան և այլք): Չսահմանափակվելով միայն ստեղծագործականով՝ Շահեն Սարգսյանն ու Արբի Հովհաննիսյանը նույն հաջողությամբ համագործակցեցին նաև մշակույթի կազմակերպչական ոլորտում: 1962-ին նրանց անմիջական մասնակցությամբ «Արարատ» կազմակերպության կառույցներում կյանքի կոչվեց Թատերական միություն, որի հովանու ներքո գործեց և «Արմեն» թատերախումբը [2]: Արբի Հովհաննիսյանը, որպես խորհրդական, ընդգրկվեց միության վարչության կազ-

մում: Նշենք, որ Թատերական միությունը, չսահմանափակվելով համայնքի շրջանակներով, իր գործունեությունը ծավալեց երկրի թատերական կյանքին համաքայլ: 1963-ից Իրանը դարձավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի թատերական խորհրդի անդամ, և մարտի 27-ը երկրում պաշտոնապես սկսեց նշվել որպես Թատրոնի միջազգային օր: «Արարատի» Թատերական միությունը, ինչպես նաև «Արմեն» թատերախումբն անմասն չմնացին այդ իրադարձությանը: Երկրում առաջին անգամ կազմակերպվեց թատերական հագուստի, դեկորացիաների և մակետների ցուցահանդես, տպագրվեց ժամանակակից բեմարվեստի ականավոր գործիչներին ներկայացնող մի գրքույկ, հրատարակվեց նաև հայ թատրոնի հակիրճ պատմությունը: «Արմեն» թատերախումբը, իր հերթին, բեմադրեց Ալեխանդրո Կասոնայի «Այգաբացի կինը» և Անտոն Չեխովի «Քեռի Վանյան»: Ապրիլի 26-ից սկսած՝ դրանք պարբերաբար պետք է ներկայացվեին «Արարատի» բեմում:

Այսպիսով, «Արմեն» թատերախումբը, համայնքի թատերական կյանքում գրավելով առաջատար դիրք, իր գործունեությունը ծավալեց հյուրընկալ երկրի բեմարվեստի համատեքստում: Ավելին՝ թատրոնը դիտարկելով որպես հայ և իրանյան մշակույթները մերձեցնող կարևոր կառույց՝ Շահեն Սարգսյանը, նախապատվությունը տալով համաշխարհային արժեք ունեցող թատերգություններին, փորձեց որոշ առումով հաղթահարել նաև տարբեր ժողովուրդների միջև եղած պատնեշները: Իր իսկ խոսքերով՝ «առաջընթաց թատրոնի նմուշ գործերը» [2] ոչ միայն բարձրացնում էին «մարդկային մտածողության մակարդակը» [2], այլև նպաստում ազգերի փոխըմբռնմանը: Ընտրելով համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակների գործեր՝ ռեժիսորը հաստատում էր, որ մարդիկ, ապրելով տարբեր երկրներում, ունեն շատ ընդհանրություններ ինչպես անձնական, այնպես էլ հասարակական կեցության խնդիրներում: «Կարծում եմ, - ասել է Շահեն Սարգսյանն իր հարցազրույցներից մեկում, - յուրաքանչյուր մարդ աշխարհի որ մասում էլ գտնվի, մարդ է, Չեխովի ստեղծած տիպերն էլ համամարդկային են, նրանք կարող են գոյություն ունենալ ամեն մի ազգի մեջ» [2]:

Այս համոզմունքն ունեցող ռեժիսորը կարողացավ ինչպես բեմի դերասաններին, այնպես էլ դահլիճի հանդիսատեսներին ոչ թե սոսկ հետաքրքրել, այլ, ինչպես գրեց «Ալիքը», պարզապես վարակել չեխովյան շնչով [3]: Թերթը, անդրադառնալով ներկայացումներին, ընդգծեց, որ թատերախումբը, առաջնորդվելով իր ղեկավարի ցուցմունքներով, «հետևում է արդի թատրոնի ուսմունքներին»: Բեմահարդարումը և զգեստավորումը՝ Արբի Հովհաննիսյանի հեղինակությամբ, այս անգամ էլ անթերի էին և «կրում էին խնամքի և ճաշակի դրոշմ» [3]: Դերասանները նույնպես աչքի ընկան իրենց հղկված խաղով: Խմբում ձևավորվում էին նաև նոր, վառ անհատականություններ, և Լորիկ Հովսեփյանը, անվանի դերասան Արմանի՝ (1921-1980) Արամայիս Հովսեփյանի [17, էջ 125-140] դուստրը, «Այգաբացի կինը» ներկայացման մեջ իր Տելիայի դերակատարումով դարձավ օրվա հայտնությունը [17, էջ 125-140]:

«Արմեն» թատերախմբի անկման շրջանը

Թվում է, համայնքի բեմարվեստի դժվարին ժամանակները ոչ միայն հաղ-

թահարվեցին, այլև ստեղծվեցին բոլոր նախադրյալները դրա կայուն զարգացման համար: Նշմարվող դրական միտումները, սակայն, մթագնվեցին որոշ բացասական երանգներով: Համամարդկային խնդիրներ արծարծող պիեսները, հակառակ Շահեն Սարգսյանի սպասումների, արժանացան աճող անտարբերության՝ դիտարկվելով լոկ որպես օտարազգի հեղինակների գործեր: «Ալիքի» հոդվածագիրը, անդրադառնալով այս փաստին, գրեց. «Որպես խորհուրդ նշենք, որ ցանկալի կլիներ, եթե թատերախումբը բեմադրեր նաև մեր կյանքին, մեր պատմությանը վերաբերող պիեսներ, որոնք հարազատ են մեր հասարակության և որ կարող են առիթ ծառայել և հնարավորություն տալ, որ վերացվի ցուցաբերված անտարբերությունը» [3]:

Մի քանի օր անց «Ալիքում» տպագրվեց Հարություն Մինասյանի թատերախոսականը, որը, ընդհանուր առմամբ, իր գնահատականներում համընկնում էր նախորդի հետ: Դրա հետ մեկտեղ՝ հեղինակի հիացական վերաբերմունքը նկատելիորեն փոխվել էր՝ տեղը զիջելով շատ ավելի զուսպ տոների, իսկ հոդվածի վերջում ներկայացումներում առկա լեզվական վրիպումները Մինասյանը դիտարկում է որպես դրանց մյուս արժանիքները նսեմացնող կարևոր թերություն. «Ընդհանրապես, ինչպես տեսանք, - գրում է հեղինակը, - մեծ պակաս կար առոգանության ճշտության և արտասանության լեզվական հնչականության մեջ, որ հաճախ հայերեն չէր: Իսկ տոների և ինտոնացիայի թերությունները բավական զգալի էին: Այս խնդիրներին պրն. դերուսույց Սարգսյանը մեծ ուշադրություն պիտի դարձնի, անշուշտ դերուսույցը պետք է հայերեն լավ առոգանություն, արտասանություն ունենա և հայերեն իմանա» [4]:

Եվ սա միայն սկիզբն էր այն հրապարակումների, որոնց հեղինակը հետևողականորեն և աճող անհանդուրժողականությամբ քննադատում էր Շահեն Սարգսյանի մյուս աշխատանքները: Ռեժիսորը, իր հերթին, չշեղվելով ընդունված հունից, նույն հետևողականությամբ խմբի խաղացանկը հարստացնում էր նորանոր գործերով: Շ. Սարգսյանը 1963-ին բեմադրեց Ավգուստ Ստրինդբերգի «Ուժեղը», Անտոն Չեխովի «Կարապի երգը» և Յուջին Օ'Նիլի «Նախաճաշից առաջ» պիեսները: Փոքրածավալ երկերից կազմված մի ներկայացում, որը դարձավ նրա եռամյա գործունեության յուրօրինակ հանրագումար, իսկ խմբի համար՝ ստեղծագործական մի նոր ձեռքբերում: Այսուհանդերձ, խրախուսելու փոխարեն ընդհանուր դժգոհությունը ձեռք բերեց ավելի խիստ երանգներ: Հարություն Մինասյանը, իր կոշտ դիրքորոշման մեջ մնալով անդրդվելի, գրեց մի թատերախոսական, որտեղ ինքն իրեն հակասելով, կետ առ կետ հրաժարվեց նախկինում արտահայտած գնահատականներից: Եթե արվեստագետը հաճելիորեն զարմացած էր ներկայացումների արտաքին նկարագրով, ապա այս դեպքում ընդունեց որոշակի վերապահումով: Ըստ հեղինակի՝ մոդեռնի կողքին նատուրալիստական դետալները ոչ միայն պատճառաբանված չէին, այլև խախտում էին ներկայացման ամբողջականությունը: Մինասյանի համար խորթ երևույթը թերևս գալիս է հետպատերազմյան ֆրանսիական իրականությունից, երբ մոդեռնիստական ուղղությունը, հայտարարելով ռեալիզմը հնացած, դարձավ արվեստի և գրականության, նույնիսկ կաթոլիկ գրականության գեղագի-

տական մեթոդ, չնայած դա պաշտոնապես դատապարտել էր Վատիկանը [24, էջ 168]: Եթե ռեժիսորը ձգտում էր հետևել եվրոպական ժամանակակից թատրոնին, ապա, ըստ հեղինակի, նրա համարձակ փորձերը, անհամատեղելի ոճերի համադրումը հավակնոտ էին և չհաջողված: Այդ առումով Հ. Մինասյանը գրում է հետևյալը. «մոդեռնում որքան որ հեռանում ենք իրականությունից, այնքան պայմանականությունն է խոսում, բայց շատ հանդգնելով հասնում ենք մի կետի, որից այն կողմ արդեն պարապությունն է և անկում» [5]: Այսուհանդերձ, Արբի Հովհաննիսյանի բեմահարդարումն ուներ նաև հաջողված լուծումներ, և, ի վերջո, դա չէր, որ հուզում էր հեղինակին: Մինասյանի քննադատության թիրախը դերասանական խաղն ու պիեսների ռեժիսորական մեկնաբանումն էին՝ հարուցելով հեղինակի վրդովմունքն ու զայրույթը. «…Ինչ գրել, բայց ինչո՞ւ կեղծել, մեր սիրելի սիրողներին՝ որոնցից ոմանց հետ բարեկամ-գործակից ենք կյանքում, ինչո՞ւ չասել ճշմարտությունը, որ խաղարկությունը թույլ էր, շատ թույլ, առաջին շարքում անգամ ոչինչ չէինք հասկանում: Տիկին Իքս-ը խոսում էր ֆիզիկական մեծ ճիգով, ապրումներ տալու նպատակով, խոսում էր ուժ գործադրելով, բառերն ու հնչյունները ատամների տակ փշրելով կամ ձայնը ներս քաշելով՝ խեղդելով ամեն խոսք» [5]: Այդ ամենը, ըստ Մինասյանի, «հետևանք է ամենազոր առոգանության պակասի, հայերեն շեշտերի անճիշտ կիրառման, հայերեն ձայնական ելևէջումների պակասի ու սխալի […]» [5]:

Իր դժգոհության բուն պատճառը, այսուհանդերձ, հեղինակն արտահայտում է հոդվածի վերջում՝ թերացումների համար մեղադրելով ռեժիսորին: Շահեն Սարգսյանը, տարվելով ստեղծագործական խնդիրներով, անտեսեց ինչպես դերասանների, այնպես էլ հանդիսատեսի համար հավասարապես կարևոր բեմական խոսքը: «Ուրեմն, - գրում է Մինասյանը, - ամենից առաջ և ամենից վերջ՝ ռեժիսորն է որ պետք է լավ գիտնա այն լեզուն, որով բեմադրվում է պիեսը: Իսկ ձեր ռեժիսորը դժբախտաբար հայերեն չգիտե, հայերենից անգրագետ է» [5]:

Թվում է, թե ավելի ծանր վիրավորանք մի արվեստագետ մեկ ուրիշին չէր կարող հասցնել: Մինչդեռ Մինասյանը, չբավարարվելով այսքանով, գրում է հետևյալը. Մենք «չգիտենք, թե պ-րն Շահենը ի՞նչ է ուզում այդ խեղճ Չեխովից, որ ձեռք չի քաշում… և ընդհանրապես մեծերից: Արդյոք գիտե՞, որ Շեքսպիրից հետո, կարելի կլինի դասել Չեխովին» [5]:

Շարունակելով այս միտքը՝ Հարություն Մինասյանը գրում է, որ հանճարեղ գրողների ստեղծագործությունների և սկսնակների ուժերով այդ գործերի մեկնաբանությունների միջև շփման և ոչ մի եզր չի կարող լինել: Եվ, դարձյալ դիմելով ռեժիսորին, թատերախոսը հարցնում է, թե արդյոք նա չի գիտակցում, որ դրանով նա դերասաններին «դնում է անհարմար և ծիծաղելի վիճակի մեջ, որ մենք ցածում նստած, մեր աչքերը հառած իր վրա, իսկ ինքը վերևում - Աստված գիտե թե ինչեր է անում…» [5]:

Համանման իրավիճակներ այլ երկրների հայ համայնքներում

Այս անխնա քննադատությունը, իր համոզիչ փաստարկներով հանդերձ, զարմացնում է իր կոշտ դիրքորոշմամբ և առաջին հայացքից թվում է սուբյեկ-

տիվ, գուցե և թելադրված անձնական դրդապատճառներով: Սակայն Հ. Մինասյանը արվեստագետի իր ազնիվ նկարագրով երբեք մամուլը չէր օգտագործի սեփական հարցերը լուծելու համար: Իրականում արտաքնապես այս սուբյեկտիվ ելույթն ուներ ավելի քան օբյեկտիվ հիմքեր: Այստեղ գործեցին Սփյուռքի թատրոնում օրինաչափության ուժ ստացած շարժառիթները, որոնք տարբեր գաղութներում և տարբեր ժամանակներում ունեցան դեպքերի զարգացման գրեթե նույն ընթացքը: Շ. Սարգսյանը այս առումով բնավ բացառություն չէ: Անցյալ դարասկզբին եգիպտահայ համայնքում ստեղծվեց շատ նման մի իրավիճակ, երբ, ի թիվս պոլսահայ այլ արվեստագետների, Եգիպտոս եկան Թովմաս Ֆասուլյաճյանը (1843-1901) և Սերովբե Պենկլյանը (1838-1903): Տեղի հայ համայնքի սկսնակ դերասանների ուժերով նրանք բեմադրեցին Վիկտոր Հյուգոյի «Թագավորը զվարճանում է» («Արքայն զբոսնու») և Ֆ. Դյումանուարի և Ա. դը Անըրիի «Դոն Սեզար դը Բազան» դրամաները (1900, Կահիրեի «Եգիպտական թատրոն») Կոստանդնուպոլսի հանդիսատեսի համար միանգամայն ընդունելի լեզվով՝ թուրքերենով: Դրա հետևանքով նրանց շուրջն ստեղծվեց խիստ անբարյացակամ մթնոլորտ, որին ի պատասխան՝ Թովմաս Ֆասուլյաճյանը տպագրեց «Երկու ներկայացումներե վերջ» խորագրով հոդվածը, որում արվեստագետը թատերախմբի և անձամբ իր հանդեպ եղած վերաբերմունքը հակված էր բացատրելու թշնամիների նյութած «էնթրիկներով» [10]: Այլապես ինչպես կարող էր նրա Թրիբուլեն, որն ըստ ներկայացման մասնակից Գևորգ Սիմոնոֆի վկայության, գերազանցում էր Էժեն Սիլվենի նույն դերակատարմանը [22, էջ 344], արժանի գնահատականի փոխարեն հարուցեր հանդիսատեսների և քննադատության վրդովմունքը:

Արվեստագետները, կռահելով խմբի նկատմամբ հետաքրքրության նվազումի բուն պատճառը, բեմադրեցին «Ավարայրի արծիվը կամ Վարդանանք» ողբերգությունը (1900, Կահիրեի «Եգիպտական թատրոն»)՝ Սմբատ Բյուրատի հեղինակությամբ: Պատմական ներկայացում, անշուշտ, հայերենով, որը, ճիշտ է, չշտկեց, սակայն որոշ առումով մեղմեց նրանց շուրջ ստեղծված ճնշող մթնոլորտը:

Նշենք, որ իրանահայ համայնքում նույնպես, ի պատասխան Հարություն Մինասյանի ««Արմեն» թատերախմբի երեկոն» հոդվածի, լույս տեսան Հարփիկ Թամրազյանի «Ինչու այդքան կրքոտ» («Ալիք», 1963, 24 հուլիսի) և Զորա Բժշկյանի «Երկու խոսք «Արմեն» թատերախմբի մասին» («Ալիք», 1963, 29 հուլիսի) հրապարակումները, որոնց հեղինակները նախ փորձում են հասկանալ Մինասյանի խիստ վերաբերմունքի պատճառը և ապա ներկայացնել թատերախմբի կատարած աշխատանքի օբյեկտիվ պատկերը: «Հոդվածն իր ամբողջությամբ մի նիզակ էր ուղղված խմբի ղեկավար պրն. Շահեն Սարգսյանի դեմ, - գրում է Հարփիկ Թամրազյանը և շարունակում, - […] արդյոք պրն. Մինասյանի ցուցաբերած այդքան ուժեղ հակազդեցությունը ինքնին դրական նիշ չէ՞ «Արմեն» թատերախմբի համար» [6]: Զորա Բժշկյանը, իր հերթին, նշելով, որ թատերախումբը, ի հակակշիռ ուծացման վտանգի, կարևոր դեր ուներ հատկապես երիտասարդների դաստիարակման գործում, գրեց որ մի խումբ երիտասարդներ, ծառայելով հայ մշակույթին, «իրենց նպաստն են բերում հային հայ պա-

հելու, կամ ինչպես միշտ հոլովում ենք ազգապահպանման վսեմ գործին» [7]:

Հեղինակները, իրավացիորեն նշելով Շահեն Սարգսյանի շնորհիվ իրանահայ բեմում տեղի ունեցած առաջընթացը, միանգամայն անտեսում էին, որ «հային հայ պահելու» համար բեմից պետք է հնչեցնել գրագետ հայերենը, և որ Հարություն Մինասյանը այդ մտահոգությամբ էր գրել իր «կրքոտ» հոդվածը: Սա Սփյուռքի հայ թատրոնի համար առաջնային կարևորության հարց է և ոչ թե «մատի փաթաթան» կամ նրա «միակ թույլ կետը, որին անխնա հարվածում են հաճախ» [6]: Հենց «ազգապահպանման վսեմ գործին» ծառայող Սփյուռքի հայ թատրոնը չի հանդուրժում այդ ճանապարհից և ոչ մի շեղում: Այլ դեպքում օտար լեզվով կամ թերի հայերենով բեմադրությունները և թատերական գործիչները, որպես օտար մարմին, դուրս են մղվում թատերական միջավայրից, չխնայելով և ոչ մի հեղինակություն: Թատերական գործիչները, ինչպես մեկ այլ առիթով նշվեց եգիպտահայ մամուլում, պետք է «գաղթականության մեջ մեռնելու վտանգին ենթարկված մայրենի լեզուն կենդանացնեին բեմից, օտար լեզվով հանդես գալու, հետևաբար՝ այն անուղղակիորեն տարածելու փոխարեն» [11]:

the Holy Land. Many of the Jewish people concluded that their only salvation was the return to the homeland of their ancestors, after being scattered around the world for centuries. This idea of repatriation to the "promised land" had started since the 16th century. However, the peak of Jewish influx into Palestine occurred in the 1930s. This group had to resist both anti-Semitist ideologies and anti-Jewish sentiments.[12] Elia Kahvedjian's photograph representing Jews praying at the Western Wall expresses all of these ideas and thoughts. Such a photograph speaks to the hearts of many Jews who survived the Holocaust. Being a Genocide survivor himself, Kahvedjian knew and felt what were his Jewish friends were going through during the same period. It was a dark moment for everyone. Survivors of the Armenian Genocide still had not recovered from the Turkish criminal acts committed upon them. Jews were now about to face the same persecutions that the Armenians had faced.

Conclusion

These Armenian photographers, along with their works and productions, are an inseparable treasure of Jerusalem. Their production can be considered as important historical documents describing the lifestyle of Jerusalem during the late 19th and early 20th centuries. The analysis of these three images from three different Armenian photographers revealed important knowledge. First of all, it showed the presence of an important humanitarian organization, the American Colony of Jerusalem and its contribution to the expansion of photography in the region. Also considered in this analysis are the various thoughts and approaches to modernity at the time of the British Mandate after the First World War was understood through the portraits of wealthy Europeanized Jerusalemites dressed as peasants and Bedouins. And finally, this discussion uncovered the rise of Jewish nationalism during the decade preceding the Second World War, a crucial time for the Jewish people. The role of the Armenian photographers of Jerusalem is undeniably one of the important contributions to the history of Jerusalem.

The Armenian Quarter, although the smallest of the four districts, continues to be an important contributor to the Old City, through its unique Church, through the arts and crafts practiced by Armenian Jerusalemites, and through the heritage left behind by the Armenian pioneers of photography in the Middle East. Armenians of Jerusalem relate the story of their ancestors with that of their Jewish compatriots: both nations were conquered and ruled by different foreign powers; both endured many difficulties when they were faced with certain death; and both of them witnessed a wide-scale state-organized Genocide. And yet, in the end, both nations survived and continue to exist up till this very day, side by side, by practicing their religions in a city that brings them next to each other.

References

1. Jacob Neusner. From Mithridates I to Orodes II, Ca. 140-40 B.C.E, in *A history of the Jews in Babylonia*, 2nd printing rev. ed. Leiden: E.J. Brill, 1969, pp. 26-27.

2. Victor Azarya. Introduction, in *The Armenian Quarter of Jerusalem: urban life behind monastery walls*. Berkeley: University of California Press, 1984, pp. 1-5.

3. Bezalel Narkiss, Michael E. Stone, and Avedis K. Sanjian, The Armenian Communities of Jerusalem, in *Armenian art treasures of Jerusalem*. New Rochelle: Caratzas Bros., 1979, pp. 11-13.

4. Badr El-Hage. The Armenian Pioneers of Middle Eastern Photography. *Jerusalem Quarterly* 31, 2007, pp. 22-26.

5. Badr El-Hage. Khalil Raad, Jerusalem Photographer, *Jerusalem Quarterly* 11-12, 2001, pp. 36-38.

6. Badr El-Hage. The American Colony Photography Department: Western Consumption and "Insider" Commercial Photography, *Jerusalem Quarterly* 31, 2007, pp. 28-32.

7. Issam Nassar. Familial Snapshots: Representing Palestine in the Work of the First Local Photographers, *History and Memory* 18, 2006, pp. 141, 145-147.

8. Badr El-Hage. Khalil Raad, Jerusalem Photographer, *Jerusalem Quarterly* 11-12, 2001, pp. 34-39.

9. Victor Azarya. The Armenians in History, in *The Armenian Quarter of Jerusalem: urban life behind monastery walls*. Berkeley: University of California Press, 1984, p. 42.

10. JERUSALEM: National Geographic ARMENIAN GENOCIDE, YouTube, n.d., video, accessed November 24, 2013, http://www.youtube.com/watch?v=P2uo U-6gDOQ.

11. The finest photographs of early 20th century Palestine, shuttered in controversy. *Haaretz.com*, accessed November 24, 2014, http://www.haaretz.com/print-edition/features/the-finest-photographs-of-early-20th-century-palestine-shuttered-in-controversy-1.411086.

12. The return of the Jews to the promised land. *BBC News*, posted April 20, 1998, accessed November 24, 2013, http://news.bbc.co.uk/1/hi/events/israel_at_50/history/78597.stm.

ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ. ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԷԼԻԱ ՔԱՀՎԵՋՅԱՆ

ՀԵՐԱԳ ՀԵՐԿԵԼԵԱՆ* (Կանադա, Մոնրեալ)

Հղման համար. Հերկելեան, Հերագ: «Երուսաղեմը հայ լուսանկարիչների աչքերով. Կարապետ Գրիգորյան, Հովհաննես Գրիգորյան և Էլիա Քահվեջյան»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 256-264. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-256

Հոդվածը նվիրված է Երուսաղեմում լուսանկարչության արվեստի զարգացմանը, որի հիմքը հայերն են դրել: Ներկայացված երեք լուսանկարներն արտացոլում են Երուսաղեմի բնակիչների առօրյա կյանքի դրվագներն ու իրողությունները XX դարի առաջին կեսին՝ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը: Հեղինակներն են Կարապետ Գրիգորյանը, Հովհաննես Գրիգորյանը և Էլիա Քահվեջյանը: Հայ լուսանկարիչների ստեղծագործությունն առանձնահատուկ վավերագրական նյութ է XIX դարի վերջի - XX դարի սկզբի Երուսաղեմի մասին՝ դառնալով կարևոր ներդրում Երուսաղեմի պատմության մեջ: Նրանք Մերձավոր Արևելքի լուսանկարչության ռահվիրաներն են: Երուսաղեմի հայերն

* Արվեստաբանության և արվեստի պատմության բակալավր, հնագիտության և հին աշխարհի պատմության բակալավր, Royal Bank of Canada, hergelian@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 21.02.2022, գրախոսելու օրը՝ 28.03.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

իրենց պատմությունը կապում են հրեա ժողովրդի պատմության հետ, քանի որ երկու ժողովուրդներն էլ կրել են բազմաթիվ փորձություններ՝ ընդհուպ ցեղասպանություն: Սակայն երկու ժողովուրդներն էլ գոյատևեցին և շարունակում են կողք կողքի համագոյակցել իրենց մերձեցնող և միավորող Հին քաղաքում:

Բանալի բառեր՝ հայ լուսանկարիչներ, Երուսաղեմ, Կարապետ Գրիգորյան, Հովհաննես Գրիգորյան, Էլիա Քահվեջյան, Օսմանյան կայսրություն, Հին քաղաք:

ИЕРУСАЛИМ ГЛАЗАМИ АРМЯНСКИХ ФОТОГРАФОВ: КАРАПЕТ ГРИГОРЯН, ОВАНЕС ГРИГОРЯН, ЭЛИЯ КАХВЕДЖЯН

ГЕРАГ ЭРКЕЛЯН* (Канада, Монреаль)

Для цитирования: Эркелян, Гераг. “Иерусалим глазами армянских фотографов: Карапет Григорян, Ованес Григорян, Элия Кахведжян”. *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 256-264. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-256

Статья посвящена развитию искусства фотографии в Иерусалиме, основа которого была заложена армянами. Представленные в статье три фотографии имеют цель показать эпизоды и реалии повседневной жизни иерусалимских жителей в первой половине XX в., до начала Второй мировой войны. Авторами этих фотографий являются Карапет Григорян, Ованес Григорян и Элия Кахведжян. Творчество этих фотографов являет собой своеобразный документальный материал об Иерусалиме конца 19 – начала 20 веков, ставший важным вкладом в историю Иерусалима. Армянские фотографы стали пионерами фотографии на Ближнем Востоке. Армяне Иерусалима связывают свою историю с историей еврейского народа, поскольку на долю обоих народов выпало немало тяжких испытаний вплоть до геноцида. Но оба народа выжили и продолжают сосуществовать бок о бок в городе, который их сближает и объединяет.

Ключевые слова: армянские фотографы, Иерусалим, Карапет Григорян, Ованес Григорян, Элия Кахведжян, Османская империя, Старый город.

* Бакалавр искусствоведения и истории искусств, бакалавр археологии и истории древнего мира, Royal Bank of Canada, hergelian@gmail.com, статья представлена 21.02.2022, рецензирована 28.03.2022, принята к публикации 20.05.2022.

ՀՏԴ : 929:891.981 Խանջյան + 891.981
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-265

ԲՈՒՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ «ԿԵՂԾ» ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԽՈՒՄԸ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ «ՔԵԶՆԻՑ ՊՐԾՈՒՄ ՉԿԱ» ՊԻԵՍՈՒՄ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ*

Հղման համար. Մանուչարյան, Կարեն: «Բուն իրականության և «կեղծ» իրականության բախումը Գուրգեն Խանջյանի «Քեզնից պրծում չկա» պիեսում»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 265-277. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-265

Գուրգեն Խանջյանի «Քեզնից պրծում չկա» պիեսն անկախ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի անմիջական արձագանքն է: Երգիծանքի տարբեր հնարների հմուտ կիրարկումներով Գ. Խանջյանն ստեղծել է բուն իրականության և «կեղծ» իրականության բախում: Բախման այդ կերպը լայնորեն տարածված է համաշխարհային գրականության մեջ և տարբեր դրսևորումներով տեղ է գտել Ուիլյամ Շեքսպիրի «Օթելլո», Ժան-Բատիստ Մոլիերի «Տարտյուֆ կամ խաբեբան», Նիկոլայ Գոգոլի «Ռևիզոր», Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» և շատ այլ ստեղծագործություններում: Այս հանգամանքը բացում է համեմատությունների լայն դաշտ և թույլ է տալիս կատարել որոշակի ընդհանրացումներ, առանձնացնել գործառութային ընդհանրություն ունեցող կերպարների հատուկ տիպեր («սուբյեկտ»-կերպար, «թիրախ»-կերպար («օբյեկտ»), «երկփեղկվող» կերպար, «քողազերծող» կերպար): Իրականության երկփեղկումը պայմանավորում է նաև գեղարվեստական կերպարի երկփեղկում՝ ստեղծելով կերպար-«հակակերպար» երկվությունը:

Բանալի բառեր՝ Գուրգեն Խանջյան, պիես, կատակերգություն, «կեղծ» իրականություն, «քողազերծող» կերպար, բախում, էվոլյուցիա:

Ներածություն

«Քեզնից պրծում չկա» պիեսով Գ. Խանջյանն արձագանքում է արդի հայ հասարակական-քաղաքական իրողություններին: Պիեսին անդրադարձել է Արմեն Ավանեսյանը [1, էջ 126-127]: Գրականագետն այս ստեղծագործությունը դիտարկել է իբրև քաջնազարականության մերօրյա արտահայտություն [1, էջ 152]: Պիեսի գլխավոր կերպար Տիգրանի մեջ քաջնազարական և փանջունիական շերտեր է նկատել նաև Գագիկ Խաչիկյանը [6, էջ 13]: Նա անդրադարձել է պիեսի գաղափարական բովանդակությանը, կերպավորման արվեստին, արդիականությանը, հպանցիկ խոսել է նաև երգիծանքի հնարների մասին [6, էջ 11-14]:

Մեր նպատակը նշված պիեսում բուն իրականության և «կեղծ» իրականության բախումը ներկայացնելն է: Խնդիրներն են ամբոխների հոգեբանության առանձնահատկությունների հիմքով գրական ստեղծագործություններում բուն, խորքային իրականության ու «կեղծ», մակերեսային իրականության բախումների ընդհանուր կերպի և դրա արտահայտման կոմպոզիցիոն ձևերի քննությունը, «Քեզնից պրծում չկա» պիեսի կերպարային համակարգի և կոնֆլիկտի վերլուծությունը՝ ըստ առաջադիր նպատակի: Հետազոտության առարկան Գ. Խանջյանի

* Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ, 098150411@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 10.01.2022, գրախոսելու օրը՝ 20.01.2022, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

«Քեզնից պրծում չկա» պիեսն է: Հետազոտության ընթացքում կկիրառենք վերլուծության, համադրության, համեմատության և վերացարկման ընդհանուր տրամաբանական մեթոդները, մեկնաբանական և արժեքանական մեթոդները:

Ամբոխների հոգեբանության առանձնահատկությունները. բուն իրականության և «կեղծ» իրականության բախման ընդհանուր կերպը գրական ստեղծագործություններում

Ամբոխային ընկալումների գիտական բնորոշումներն ամփոփված են Գյուստավ լը Բոնի «Ամբոխների հոգեբանությունը» աշխատության մեջ: Խնդրո առարկա հարցին առավելապես առնչվում է այս աշխատության «Ամբոխների դատողությունները» ենթագլուխը: Գ. լը Բոնը համարում է, որ ամբոխների «դատողությունները» հիմնված են հապճեպ և տրամաբանորեն չհիմնավորված եզրահանգումների, երևույթների զուտ մակերեսային նմանությունների կամ փոխկապակցումների վրա [2, էջ 95]: Այսինքն՝ խորքային իմաստով ամբոխները ենթակա չեն դատողությունների ազդեցությանը: Առաջնորդների՝ ժողովրդի վրա մեծ ազդեցություն թողած ճառերի մեծագույն մասը հարմարեցված է ամբոխային ընկալումներին և ավելի շուտ ոգեկոչում է պատկերներ, քան տրամաբանական սթափ դատողություններ [2, էջ 65]: Այս աշխատության «Ամբոխների երևակայությունը» ենթագլխում շոշափվում են բուն իրականության և «կեղծ» իրականության առնչությունների ընդհանուր կերպի հոգեբանական հիմքերը. «Պատմության մեջ թվացողականը մշտապես շատ ավելի կարևոր դեր է խաղացել, քան իրականությունը: Այստեղ անիրականը մշտապես գերիշխում է իրականի նկատմամբ» [2, էջ 98]: Թույլ զարգացած դատողությունը և վառ երևակայությունը, բանականի փոխարեն պատկերային մտածողության ընդգծվածությունը խեղում են երևույթների իրական և խորքային ընկալման գործընթացը, կոծկում են իրականությունը՝ կառուցելով ու ամրագրելով անիրականը («կեղծ» իրականությունը-Կ.Մ.): Իրերի և երևույթների մակերեսային ընկալման մասին է խոսվում նաև Հ. Թումանյանի «Ձևն ու հոգին» հոդվածում. «Ամեն երևույթ ունի իր արտաքին կերպարանքը - ձևը և ներքին իմաստը - հոգին: Ապրողը, գեղեցիկը, կատարյալը դրանց ներդաշնակությունն է, բայց էդ ներդաշնակությունը, դժբախտաբար, շատ է դժվար, և մարդիկ սովորաբար վազում են հեշտին. իսկ հեշտը ձևն է» [4, էջ 266]: Ընկալման այս կերպն արժեզրկում է բոլոր բարձրարժեք գաղափարները. եկեղեցին ընկալվում է զուտ իբրև գմբեթավոր շինություն, հոգևորականը՝ երկար զգեստներ կրող և մորուքավոր անձնավորություն, ուսումնարանը՝ սովորական կառույց, գրականությունը՝ տպած գրքեր կամ անուններ [4, էջ 266-267], թատրոնն էլ՝ մի մեծ շենք, «որ բեմ ունի, մեջը տոմսակներ են ծախվում, դերասաններ են խաղում» [4, էջ 267]: Եվ ընկալման ա՛յս կերպն է գերիշխում հասարակության մեջ: Այսինքն՝ մեծ հաշվով անտեսվում է իրերի և երևույթների խորքային, գաղափարական նշանակությունը:

Այս կամ այն երևույթի մակերեսային ընկալումը մարդուն հեռացնում է բուն ճշմարտությունից: Գրականության մեջ լայնորեն դրսևորվել է կոնֆլիկտի այս կերպը, որ ներկայացնում է անհամատեղելի և հակադիր իրականությունների

առնչություն, որոնցից մեկը կառուցված է ստի, դիպվածի, թյուրընկալման գեղարվեստական հնարների օգնությամբ և ներկայացնում է բուն իրականության տրամագծային հակադրությունը: Երկու հակադիր իրականությունների տիրույթներում հակադիր բնութագրեր են ձեռք բերում նաև կերպարները. «բուն» իրականության դաշտում վախկոտության հատկանիշով բնութագրվող կերպարը «կեղծ» իրականության տիրույթում ձեռք է բերում քաջության հատկություններ, աննշանությունը կերպափոխվում է ազդեցիկության, ստորը՝ վեհի, կեղծավորությունը՝ ազնվության կամ հակառակը: Ձևավորվում է մի յուրատիպ «հակակերպար», որ ներկայացնում է կերպարի իրական հատկանիշների և գործողությունների հակադրահամակարգը: Կոնֆլիկտի կառուցման այս կերպն ստեղծում է կերպարային հատուկ տիպեր: Պայմանականորեն կարելի է առանձնացնել «սուբյեկտ»-կերպարի, «թիրախ»-կերպարի («օբյեկտ») և «երկփեղկվող» կերպարի տիպերը: «Սուբյեկտ»-կերպարը «կեղծ» իրականությունը կառուցողն է: Սովորաբար այսպիսի ստեղծագործություններում նա ամենաակտիվ գործող անձն է, գործողություններն առաջ մղող ուժը: «Թիրախ»-կերպարն այս կառույցի այն դետալն է, որին ուղղված են «սուբյեկտ»-կերպարի գործողությունները: Հենց կերպարային ա՛յս տիպի համար է կառուցվում «կեղծ» իրականությունը: «Երկփեղկվող» կերպարն այն միավորն է, որի շուրջ հյուսվում է «կեղծ» իրականությունը: Նրա շուրջ ծավալվում է կերպար-«հակակերպար» երկվությունը: Սակայն այս գործառույթները կարող են նաև համատեղվել մեկ կերպարի մեջ: «Սուբյեկտ»-կերպարը կարող է միաժամանակ լինել նաև «երկփեղկվող» կերպար, եթե «կեղծ» իրականությունը կառուցի հենց ի՛ր անձի շուրջ: «Թիրախ»-կերպարը կարող է ակամա հայտնվել նաև «սուբյեկտ»-կերպարի կարգավիճակում, եթե տրվի թյուրընկալման ալիքին և կորցնի իրականության զգացումը: «Սուբյեկտային» և «թիրախային» գործառույթները կարող են համատեղվել մի կերպարի մեջ նաև այն դեպքում, երբ կերպարը տրվել է ինքնախաբեության և հենց ի՛ր համար է խեղում իրականությունը:

Բուն իրականության և «կեղծ» իրականության առնչությունները կարող են ձևավորել և՛ ողբերգական, և՛ կատակերգական կոնֆլիկտ: Ու. Շեքսպիրի «Օթելլոյում» «սուբյեկտ»-կերպարը Յագոն է [7, էջ 185-191, 193-198, 206-209], առաջին պլանում «թիրախ»-կերպարն Օթելլոն է, իսկ «երկփեղկվող» կերպարները՝ Դեզդեմոնան և Կասսիոն: Սակայն առաջին պլանում կառուցվող «կեղծ» իրականությունն ունի նաև իր ածանցյալները: Նույն տրամաբանությամբ էլ գլխավոր «թիրախ»-կերպար Օթելլոն իր կողքին ունի ածանցյալ «թիրախ»-կերպարներ: Սա պայմանավորված է նրանով, որ «սուբյեկտ»-կերպար Յագոյի կառուցած գլխավոր «կեղծ» իրականությունը կարիք է զգում այլ «կեղծ» իրականությունների: Եվ սյուժեի զարգացման ընթացքում պարբերաբար «թիրախ» - կերպարի կարգավիճակում են հայտնվում Ռոդրիգոն [7, էջ 135-137, 164-166, 221-223, 228], Կասսիոն [7, էջ 175-177, 209-211, 230-233], Դեզդեմոնան [7, էջ 219-221], Էմիլիան [7, էջ 192-193, 232], Լոդովիկոն [7, էջ 214-215]: Նրանցից յուրաքանչյուրի համար կառուցվում է առանձին «կեղծ» իրականություն, որը «երկփեղկում» է տարբեր կերպարների: Այսինքն՝ այս ստեղծագործության մեջ «թի-

րախ»-կերպարի և «երկփեղկվող» կերպարի կարգավիճակներն ինչ-որ առումով շարժական են: Սակայն հստակ և անփոփոխ է «սուբյեկտ»-կերպարի կարգավիճակը: Այն բոլոր դեպքերում Յագոն է: Այս կառույցում պայմանականորեն կարելի է առանձնացնել «քողազերծող» կերպարի տիպը: Դրան համապատասխանում է Էմիլիան:

Լայն առումով կերպարային այս գործառույթները համապատասխանում են «ո՞վ է կառուցում [«կեղծ» իրականությունը]» («սուբյեկտ»-կերպար), «ո՞ւմ համար է կառուցում» («թիրախ»-կերպար), «ո՞ւմ մասին է կառուցում» («երկփեղկվող» կերպար) և «ո՞վ է քանդում [«կեղծ» իրականությունը]» («քողազերծող» կերպար) հարցերին:

Տարածված է նաև այս իրականությունների առնչության այն կերպը, որ ձևավորում է կատակերգական կոնֆլիկտ: Այստեղ հակադրության եզրերը դրսևորվում են երգիծանքին բնորոշ սրվածությամբ ու չափազանցություններով: «Կեղծ» իրականության կառուցման հնարները բազմազան են երգիծական ստեղծագործություններում:Կոնֆլիկտի այս կերպը որոշակի տարբերություններով դրսևորվել է Ժան-Բատիստ Մոլիերի «Տարտյուֆ կամ խաբեբան» և Նիկոլայ Գոգոլի «Ռևիզոր» կատակերգություններում: Այս երկերում տարբեր են «կեղծ» իրականության կառուցման գլխավոր հնարները. «Ռևիզորում» այն կառուցվում է դիպվածի ու պատահականության խաղի, իսկ «Տարտյուֆում»՝ միտումնավորության հնարներով: «Ռևիզորի» գլխավոր կերպար Խլեստակովը՝ «կեղծ» ռևիզորը, հենց «երկփեղկվող» կերպարն է, որ ի սկզբանե չունի ռևիզորի կարգավիճակում հայտնվելու հատուկ նպատակ: Նրան այդպիսի կարգավիճակ է հաղորդում Բոբչինսկու և Դոբչինսկու թյուրընկալումը [8, էջ 36-39]: Նրանք ակամա հայտնվում են «սուբյեկտ»-կերպարի կարգավիճակում: Բոբչինսկին և Դոբչինսկին «կեղծ» իրականության կառուցման հիմնաքարը դնող կերպարներն են: Եվ պիեսի գործողությունների ողջ ընթացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ թյուրընկալման աստիճանական աճ: «Սուբյեկտ»-կերպարի գործառույթն ակամա փոխանցվում է պիեսի գրեթե բոլոր կերպարներին: Նրանք միաժամանակ նաև «թիրախ»-կերպարներ են, քանի որ լայն առումով հենց նրա՛նց համար է վերափոխվում բուն իրականությունը: Պիեսի կերպարների գերակշիռ մասին հասու է Խլեստակովի՝ «կեղծ» իրականությանը պատկանող էությունը, միայն ծառա Օսիպն է ճանաչում իրական Խլեստակովին: Նա էլ երբեմն հայտնվում է «սուբյեկտ»-կերպարի կարգավիճակում՝ դիպվածի ու պատահականության խաղին խառնելով միտումնավորության չափաբաժին և որոշակիորեն նպաստելով իր «հակակերպարի» կառուցմանը: Փոքր-ինչ այլ է իրավիճակը «Տարտյուֆ»-ում: Կենտրոնում դարձյալ վերը նշված հակադրությունն է՝ համապատասխանեցված երգիծանքի պայմանաձևերին: Սակայն պիեսի գործողությունների սկզբնահատվածում արդեն Տարտյուֆի բուն էությունը գրեթե բացահայտված է: Կերպարների գերակշիռ մասն արդեն հասու է իրական Տարտյուֆի էությանը [9, էջ 18-22, 24-31]: Միայն Օրգոնը և տիկին Պերնելն են շարունակում հավատալ Տարտյուֆ-«հակակերպարին»: Եվ ի հակադրություն նախորդ օրինակի՝ այստեղ գլխավոր հնարը միտումնավորությունն է: «Երկփեղկվող» կերպար Տարտյուֆը

նաև ակտիվ «սուբյեկտ»-կերպար է, քանի որ հենց ինքն է իր անձի շուրջ կառուցում «կեղծ» իրականություն: Պիեսի մյուս կերպարները «թիրախ»-կերպարի կարգավիճակում են, քանի որ նրանք տարտյուֆյան կեղծարարությունների զոհերն են: Երկու պիեսներում էլ ի վերջո քողազերծվում է կեղծ իրականությունը: «Ռևիզոր»-ում «քողազերծող» կերպարը փոստատար Իվան Կուզմիչն է, բայց ակամա «քողազերծողի» գործառույթ է ստանում նաև Խլեստակովի կերպարը, քանի որ հենց նրա նամակն է բացահայտում իրականությունը [8, էջ 104-106]: «Տարտյուֆ»-ում այդ գործառույթն իրականացնում է արտաբեմական ներկայություն ունեցող արքայի կերպարը [9, էջ 96-98]: Հայ գրականության մեջ բախման այս կերպի ամենաամբողջական արտահայտությունները քաջնազարականության թեմայով գրված ստեղծագործություններն են: Այստեղ հակիրճ կանդրադառնանք միայն Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» հեքիաթ-պիեսին: «Քաջ Նազար» խորագիրն արդեն արտահայտում է բուն իրականության (Նազար) և «կեղծ» իրականության (Քաջ) բախումը: Դ. Դեմիրճյանի հեքիաթ-պիեսում իրական Նազարին ճանաչում են Ուստիանը, Հարևանուհին, Տիրացուն և ընթերցողհանդիսատեսը: Մնացածը հաղորդակից են Քաջ Նազար-«հակակերպարին»: Սակայն բուն իրականությանը հասու կերպարներից յուրաքանչյուրն այս պիեսի կոնֆլիկտի կառուցման և լուծման հարցում ունի վճռորոշ նշանակություն: Հարևանուհին «կեղծ» իրականության կայացումը կանխատեսողն է [3, էջ 220] (պասսիվ «սուբյեկտ»-կերպար), Տիրացուն՝ հիմնաքարը դնողը [3, էջ 222-223] (ակամա «սուբյեկտ»-կերպար), իսկ Ուստիանը՝ բուն իրականության բացահայտողը [3, էջ 299-303] («քողազերծող» կերպար): Պիեսի մյուս կերպարները «թիրախ»-կերպարի կարգավիճակում են: Պատահականության խաղը այս կամ այն կերպ ազդում է բոլորի վրա, և Նազարը հընթացս կերպափոխվում է բոլորի համար: Այդ կերպարները նաև ակամա «սուբյեկտ»-կերպարներ են: Դիտարկելով զուտ երևույթների մակերեսը՝ նրանք էլ են նպաստում Նազարի «հակակերպարի» կայացմանը:

Նմանատիպ ստեղծագործություններում գործողությունների ընդհանուր մոդելը կարելի է ձևակերպել այսպես՝ բուն իրականություն-դրա նենգափոխման հետևանք «կեղծ» իրականություն-վերադարձ բուն իրականությանը: Սովորաբար նախնական փուլը համեմատաբար փոքր տեղ է զբաղեցնում: Այն կազմում է երկի նախադրությունը: Հանգույցը բուն իրականության նենգափոխման դրվագն է՝ «կեղծ» իրականության անցման պահը: Հանգուցալուծումն ընդգրկում է քողազերծման փուլը: Սակայն որոշ ստեղծագործություններում այս մոդելը կարող է կիրարկվել որոշակի փոփոխակներով: Մոդելը լիարժեքորեն պահպանված է Դ. Դեմիրճյանի հեքիաթ-պիեսում, Ն. Գոգոլի «Ռևիզոր»-ում: Հ. Թումանյանի հեքիաթում բաց է թողնված վերջին փուլը. Նազարի «հակակերպարը» չի քողազերծվում: «Տարտյուֆ»-ում բաց է թողնված նախնական փուլը. պիեսի գործողությունների մեկնարկում արդեն «կեղծ» իրականությունը քայքայման եզրին է: Սյուժեի կառուցվածքային փուլերն ա՛յլ սկզբունքով են առանձնացվում այդ երկերում:

«Քեզնից պրծում չկա» պիեսի կերպարային համակարգը և կոնֆլիկտը

«Քեզնից պրծում չկա» պիեսի «երկփեղկվող» կերպարը Տիգրան Հայկազյանն է: Ի տարբերություն մյուս ստեղծագործությունների՝ այստեղ բոլոր կերպարները հասու են բուն իրականությանը, բայց գրեթե բոլորն էլ այս կամ այն կերպ աշխատում են «կեղծ» իրականության կառուցման վրա: Եթե մյուս ստեղծագործություններում անհատականացված էին «թիրախ»-կերպարներ, որոնց ապակողմնորոշելու գործընթացին էին ուղղված կեղծիքը կառուցելու բոլոր ակտերը, ապա այստեղ առաջին հայացքից չկա այդպիսի կերպար: Բայց դա արտաբեմական ներկայություն ունեցող ամբոխն է, որը խիստ կարևոր չափում է ապահովում Տիգրանի համար:

Բուն իրականության դաշտում Տիգրան Հայկազյանի ունեցած արժանիքները հաճելի ձայնը և գեղեցիկ արտաքինն են: Դրանք Տիգրանի էության խորքերը, ներքին դատարկությունն ու չնչինությունը քողարկող դիմակներ են: Նմանատիպ դիմակներ են նաև Քաջ Նազարի «հերոսական» արարքները, Խլեստակովի առերևույթ «ռևիզորային» պահվածքը՝ սկզբում Բոբչինսկու և Դոբչինսկու, այնուհետև մյուս կերպարների ընկալումներով, Տարտյուֆի «բարեպաշտության» դրսևորումները: Թումանյանական բանաձևումների տրամաբանությամբ՝ «Քաջ Նազար» երկի կերպարների համար հերոսը «հերոսական» գրությամբ դրոշակ կրող մարդն է, Բոբչինսկու և Դոբչինսկու համար ռևիզորը հատուկ շարժուձևեր ունեցողն է, իսկ Օրգոնի և Պերնելի համար բարեպաշտը միայն բարոյականության մասին խոսողն է: Դրանք կազմում են Քաջ Նազարի, Խլեստակովի և Տարտյուֆի կերպարների մակերեսը, իսկ «թիրախ»-կերպարներն ապահովում են, այսպես ասած, մակերեսային չափումը: «Քեզնից պրծում չկա» պիեսում էլ, համաձայն գերիշխող աշխարհընկալման, նախագահը հաճելի ձայն և արտաքին ունեցող մարդն է. «Գալուստ-...Սակայն մեր ժողովուրդը, ցավալի կերպով, բովանդակությունը չի տեսնում, խաբվում է արտաքինին, ձևական կողմին...» [5, էջ 240]:

Պիեսի նախադրությունն ընդգրկում է մինչև կուսակցության առաջնորդ Գալուստի այցը և Տիգրանին նախագահության թեկնածու առաջադրելու առաջարկը: Նախադրության կարևորագույն դետալը Տիգրանի երազի վերապատմումն է. «Տիգրան -...գործի գնացի արաբական նժույգ հեծած... ուրեմն՝ հասկանում եմ, որ վիճակս անհեթեթ է, բայց ձիուց իջնել չեմ կարողանում, ավելին՝ չեմ էլ ուզում» [5, էջ 235]: Այս երազի կրկնակ-փոփոխակն է Գուշակի՝ պիեսի մեկ այլ հատվածում բերվող խոսքը, որը երազի տարածություններում ներկայացվածը փոխադրում է կանխագուշակության հարթակ. «Գուշակ - Ձիու վրա ես, ապեր, բաշը պինդ բռնես՝ մինչև վերջ կտանի» [5, էջ 247]: Սրանք բավականին ուժգին ազդանշան-կանխագրումներ են: «Կեղծ» իրականության կառուցման գործընթացի սկիզբ կարելի է համարել Գալուստի այցի դրվագը: Հենց սա է պիեսի գործողությունների հանգույցը, որն էլ սկզբնավորելու է բուն իրականության և «կեղծ» իրականության բախումը: Իհարկե, այն չի ստանում նույնպիսի գունեղություն, հոգեբանական նրբերանգների հարստություն և վառ արտահայտվածություն, ինչպիսին վերը բերված ստեղծագործություններում էր, բայց

ընդհանուր գծերով ներկայացվում է հոգեբանորեն և կառուցվածքաբանորեն համոզիչ: Գ. Խանջյանը դիպուկ է կիրառել դետալ-մանրամասների ներբերման արվեստը, չնչին բացառություններով հետևել է մինիմալիզմի՝ քչով շատն ասելու, առերևույթ երկրորդական հանգամանքներով, մակերեսային շերտերով, հետևանքներով պատճառային-խորքայինը ներկայացնելու սկզբունքին: Նախադրությունը կատարում է երկու կարևոր գործառույթ. ներկայացնում է Տիգրանի կենցաղային ծանր պայմանները և կանխատեսում հաջողությունները: Երկուսն էլ կատարվում են սեղմությամբ, դետալիզացիոն արվեստի հմուտ կիրառման միջոցով: Նախադրության այս ընդհանուր իրավիճակը անուղղակիորեն զուգահեռվում է Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» հեքիաթ-պիեսի սկզբնահատվածին. կերպարի իրական թշվառությունը ներկայացնող իրավիճակ, ապագայում բարձունքներ նվաճելու ուղղակի համոզվածություն և կանխագուշակություն (Հարևանուհու կերպարը) կամ նույնի կանխագրում երազի (Տիգրանի երազը) միջոցով: Տիգրանին նախագահության թեկնածու առաջադրելու անակնկալ առաջարկը նույնքան է համապատասխանում դիպվածի, ճակատագրի խաղին, որքան Քաջ Նազարի սկզբնական հաջողությունները: Եվ հենց այս տեսարանում էլ Տիգրանի կերպարի էվոլյուցիայի առաջին աստիճանն է արձանագրվում: Գալուստի՝ «կեղծ» իրականություն կառուցելու գործընթացի ամփոփ բանաձևը սա է. «Թերություններ կան անշուշտ, բայց ժամանակ ունենք, կաշխատենք, ճիշտ ձևի կբերենք, կենսագրություն կսարքենք» [5, էջ 240]: Տիգրանի որդու՝ ռուս կնոջ հետ Մոսկվա փախչելու հանգամանքը խանգարում էր իդեալական կերպարի միֆի կառուցմանը, և հենց Տիգրանի օգնությամբ է Գալուստը ձևախեղում այդ իրողությունը՝ դրական գույներ հաղորդելով վերջինիս [5, էջ 241]: Այս դրվագից հետո Տիգրանն էլ Տարտյուֆի պես ձեռք է բերում «սուբյեկտ»-կերպարի հատկանիշներ՝ նպաստելով իր անձի շուրջ «կեղծ» իրականության կառուցմանը: Ակտիվ «սուբյեկտ»-կերպար է իմիջմեյքեր (ոճաբան) Կարան: Հենց Կարա-Տիգրան տեսարանում են ներկայացվում առաջնորդի և ամբոխի հարաբերությունները: Այստեղ կարծես բառացիորեն իրագործվելիս լինեն Գյուստավ լը Բոնի առաջ քաշած հոգեբանական դրույթները: Հատկապես ա՛յս հատվածում են գրեթե ուղղակիորեն ներկայացվում ամբոխի արտաբեմական ներկայությունը և նրա չափման առաջնայնությունը Տիգրանի կերպարի կառուցվածքում: Կարայի չափումը ցույց է տալիս Տիգրանի կերպարի էվոլյուցիոն հերթական փոփոխությունը: Այդ փոփոխության ցուցիչը դեմք-դետալն է: Կարան նկատում է, որ Տիգրանի հրեշտակային դեմքից գրեթե ոչինչ չի մնացել ընտրապայքարի ընթացքում [5, էջ 242]: Սա ցույց է տալիս Տիգրանի հարմարվողականության հատկանիշը: Տիգրանի և Կարայի համատեղ աշխատանքն ուղղված է զուտ թաղանթի, արտաքին ձևերի մշակմանը, քանի որ ամբոխին գրավում է համոզիչ թաղանթը: Դեռևս չգրված ճառի ողջ պարզունակությունը, խոսքից առավել դիմախաղի և կեցվածքի կարևորության ընդգծումը Կարայի կողմից ամբոխների վրա ազդելու տեսական դրույթների առարկայացումն են [5, էջ 243]: Տիգրանի կերպարում տեղի ունեցող աստիճանական փոփոխությունները փաստող կարևոր դետալ է նաև «ժողովրդավարություն» եզրույթի մեկնաբանութ-

յունը: Պարզ է, որ դեպի քաղաքական վերնախավ ձգտող մարդը, որ ցուցաբերում է հարմարվողականության գծեր, պետք է ասպարեզ գա ժողովրդավարության խոստումներով: Բայց ամեն ինչին մակերեսային պարզունակություն հաղորդող և իրեն հարմարեցնող, կեղծը կառուցող այս կերպարը այդ նույն սկզբունքով ձևախեղում է նաև «ժողովրդավարություն» եզրույթը. «Տիգրան - Սխալ ես մեկնաբանում. ժողովրդավարություն, այսինքն՝ ժողովրդին են վարում» [5, էջ 242]: Տիգրանի արտաքին, մակերեսային կողմը մշակող կերպարներից է նաև անգլերենի ուսուցչուհի Լարան, որը չունի Կարայի կերպարի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածությունը և գունեղությունը, բայց գլխավոր կերպարի «լարայական» չափումը նույնպես կարևոր է և ներկայացնում է արդեն ավելի ու ավելի սանձարձակ դարձող Տիգրանի բնավորության գծերը: Տիգրան-Լարա սիրախաղի ընթացքում Տիգրանի՝ կնոջ մասին խոսքում նկատվում են «քաջնազարական» մեծամտության հետքեր. «Տիգրան - Հեռու եմ ուղարկել... Վարսավիրանոց, ինձ վայել կնոջ տեսք ստանալու...» [5, էջ 258]:

Հետաքրքիր շերտ է բացում նաև, այսպես ասած, «այցելությունների» մոտիվը: Ապագա առաջնորդին այցելում են քրեական աշխարհի (Շխո), սեռական փոքրամասնությունների (Կալիկ), մարմնավաճառների (Նունու) և հրեաների (Իսակ) ներկայացուցիչները: Սա ոչ ուղղակի իմաստով հիշեցնում է Ն. Գոգոլի «Ռևիզորի» այն տեսարանները, որոնք ներկայացնում էին քաղաքի տարբեր պաշտոնյաների այցելությունները Խլեստակովին: Արտաքին նմանություններով հանդերձ՝ իրավիճակները երկու պիեսներում ունեն էական տարբերություններ: «Ռևիզորի» կերպարները հաղորդակից էին «կեղծ» իրականությանը և Խլեստակովին ընդունում էին իբրև հեղինակություն: Խլեստակովն արդեն հաղթահարել էր «բուն» իրականության փուլը և հասել էր «գահակալության» աստիճանի (=Քաջ Նազար): Տիգրանը դեռևս չէր զբաղեցրել առաջնորդի աթոռը, և այցելուներից յուրաքանչյուրը, շահից ելնելով, փորձում է մի նոր քար ավելացնել «կեղծ» իրականության շինվածքին: Քանի որ ամեն ինչ հիմնված էր կեղծիքի վրա, այդ նույն կեղծիքը պետք է ներթափանցեր նաև այս կերպարների հարաբերությունների դաշտ: Գալուստ-Սաքո-Կարո-Շխո-Կալիկ-Նունու կերպարային խմբի և Տիգրանի համագործակցության ներսում քողարկված են նաև միկրոկոնֆլիկտներ, որոնք, իհարկե, չունեն գոգոլյան Խլեստակովի և քաղաքի պաշտոնյաների միջև ծավալվող միկրոկոնֆլիկտների գեղարվեստական ամբողջականությունն ու գունեղությունը, դրության և խոսքի կոմիզմի տարրերի բազմաձև ու բազմաբարդ կիրարկումները, կոնֆլիկտային բազմաճյուղությունը, բայց գաղափարական տեսանկյունից խորապես հետաքրքիր են և խիստ արդիական մերօրյա հայ հասարակական-քաղաքական հարաբերությունների համատեքստում: Յուրաքանչյուր այցելություն որոշակիորեն ազդում է Տիգրանի կերպարի զարգացման վրա, դառնում է էվոլյուցիոն գործընթացի լիարժեք փուլ: Քրեական աշխարհի ներկայացուցիչ Շխոյի այցելությունը պիեսի առանցքային տեսարաններից է: Նախ՝ խիստ կարևոր են այս կերպարների փոխադարձ չափումները: Տիգրանի կերպարի «շխոյական» չափումը հանգում է հետևյալին. «Շխո.-...Շատ շուստրին ես, է՛: Բա որ ասում եմ՝ լավ պրեզիդենտ

կլնե՞ս» [5, էջ 256]: Շխոյի ամենաամբողջական չափումը հենց Տիգրանն է ապահովում. «Թամար-...Ո՞վ էր այդ համակրելի պարոնը: /Տիգրան - Երկրի իրական տերը» [5, էջ 257]: Այս տեսարանում գծագրվում է նաև Շխոյի և Գալուստի լայնորեն չդրսևորված և որպես այդպիսին հատուկ զարգացման ու լուծման չհասած կոնֆլիկտը. «Շխո-Գալուստ-մալուստների՞: Ապեր, ինձնից քեզ խորհուրդ, դրանցից ինչքան շուտ ազատվես՝ քու օգուտն ա» [5, էջ 256]: Բայց այս թույլ գծագրված կոնֆլիկտն ինքնանպատակ չէ: Ե՛վ վերը բերված կերպարային փոխադարձ չափումների, և՛ այս աղոտ գծագրված կոնֆլիկտի վերջնանպատակը Տիգրանի կերպարի էվոլյուցիոն հերթական փուլը ձևավորելն է, որ արտահայտվում է բավական խոսուն ինքնաչափմամբ. «Տիգրան-...Մեկին քսի կտամ մյուսի վրա, էն մյուսին՝ էն մեկի...վերջում կմնամ ե՛ս, ե՛ս, Ե՛ս» [5, էջ 257]: Մեկ այլ միկրոկոնֆլիկտային իրավիճակ է ձևավորվում հոմոսեքսուալիստ Կալիկի և մարմնավաճառ Նունուի այցելություններից հետո: Այս այցերի տեսարանները հարուստ են դրության և խոսքի կոմիզմի տարրերով: Նախագահության ճանապարհին կանգնած Տիգրանը երկուսին էլ խոսք է տալիս իրավունքների ազատություն, սակայն բախումնային իրավիճակ են ստեղծում նրանց շահերի անհամապատասխանությունները. «Նունու - Մեզ լուրեր հասան, որ սեքսուալ փոքրամասնություններին ահագին խոստումներ եք տվել... դուք պարտավոր եք պաշտպանել ավանդական սեքսը...» [5, էջ 271-272]: Նմանատիպ բախումնային իրավիճակ է ստեղծվում նաև կուսակցության առաջնորդ Գալուստի և նրա թիկնապահների միջև: Այս դեպքում բախումը հենց Տիգրանն է առաջացնում: Իսկ նրա կին Թամարը խորհրդատուի և բախումնային իրավիճակի ստեղծման գործում առյուծի բաժինն իրականացնողի դերում է: Սաքոյին և Կարոյին պաշտոններ խոստանալով՝ Տիգրանը և Թամարը Գալուստին ասպարեզից հեռացնելու նախագիծն են մշակում: Այցելությունների սյուժետային գիծը լրացնում է հրեա Իսակի կերպարը: Առաջին հայացքից այս այցը չունի նախորդների գործառութային ծանրաբեռնվածությունը, բայց այն Տիգրանի կերպարի էվոլյուցիայի վերջին փուլն է պայմանավորում: Հենց այս այցն է ավարտին հասցնում Տիգրանի ինքնագնահատման գերաճի գործընթացը. «...սա նախախնամության ձեռքն է, որ շարժում է մարդուկներին՝ ինձ ընդառաջ...» [5, էջ 282]: Պիեսում չափազանց մեծ գործառութային կարևորություն ունի նաև կերպարների՝ «կեղծ» իրականությունը քողազերծել փորձող խումբը, որոնք միայն պայմանականորեն են համապատասխանում վերը բնութագրված «քողազերծող» կերպարի գործառույթներին, քանի որ, որպես այդպիսին, քողազերծման փուլը բացակայում է պիեսում: Կերպարային այս տիպը ներկայացված է բավական փոքր խմբով: Այն ներառում է Հայրիկի և արտաբեմական ներկայություն ունեցող լրագրողի կերպարները: Սակայն գործողությունների ընթացքը կառուցվել է այնպես, որ երկուսի առարկայական, ուղղակի ներկայությունը և արարքները հասցվեն նվազագույնի: Եթե լրագրողն առհասարակ չունի բեմական ներկայություն, և ընթերցող-հանդիսատեսը նրա բնավորության մասին որևէ գաղափար կազմում է միայն Տիգրանի իրական կերպարը բացահայտող հոդվածներից արված մեջբերումներով, ապա Հայրիկի բեմական ներկայությունն էլ սահմանափակված է

միայն շարժումներով, ժեստերով և դուդուկի նվագով, որ անզոր բողոքի արտահայտություններ են: Պատերազմի վետերան Հայրիկը զրկված է խոսելու ունակությունից, բայց ծավալվող գործողությունների ողջ ընթացքում պարբերաբար հայտնվում է և լռության գեղարվեստական պայմանականության օգնությամբ փորձում ինչ-որ կերպ քանդել «կեղծ» իրականությունը: Այս կերպարի էվոլյուցիոն ընթացքի արտահայտման ցուցիչները հեղինակային սեղմ ռեմարկների ներբերումներն են. «Խմում են: Գալիս է Հայրիկը, ցույց է տալիս՝ իբր՝ էս ի՞նչ եք անում, էս ի՞նչ ախմախ բաներով եք զբաղված» [5, էջ 244]: Համրության պայմանաձևում ամփոփված այս կերպարը բեմական տիրույթում միակն է, որ դեմ է «կեղծ» իրականության կայացմանը: Ամենախոր էվոլյուցիայի ենթարկվում են հենց Տիգրանի և Հայրիկի կերպարները, սակայն էվոլյուցիան ընթանում է հակադիր ուղղվածությամբ: Էվոլյուցիոն փուլերը պայմանավորող գլխավոր գործոնները՝ վերը նշված կերպարների շարունակական այցելությունները, հակադիր ազդեցություններ են ունենում Տիգրանի և Հայրիկի վրա: Տիգրանի՝ «կեղծ» իրականության մեջ խրվելուն զուգընթաց Հայրիկի ընդվզումներն ավելի բուռն և հուսահատ են դառնում: Պիեսի գլխավոր կոնֆլիկտը՝ բուն իրականության և «կեղծ» իրականության բախումը, կերպարային մակարդակում հենց Տիգրանի և Հայրիկի մեջ է ամենավառ ընդգծվածությամբ դրսևորվում: Եվ այդ հարթության վրա գերկարևորվում են կերպարների ինքնաչափումները: Եթե Տիգրանի կերպարում գերիշխում է խոսք-ինքնաչափումը, ապա համրության պայմանաձևում ամփոփված Հայրիկի կերպարում առկա է միայն արարք-ինքնաչափումը: Տարբեր դրվագներում Հայրիկի կրկնվող այցերը միայն արտաքուստ են նույնական ու նույնարժեք: Յուրաքանչյուր նոր այցի ժամանակ նկատվում է վրդովմունքի և անզոր ընդվզման չափաբաժնի ուժգնացում: Մի կողմում կեղծիքն է՝ խոսքային ուղղակի և կոպիտ ընդգծվածությամբ, մյուսում՝ ճշմարտությունը՝ համրության պայմանաձևում ամփոփված և գամված հաշմանդամի անվասայլակին: Կերպարային էվոլյուցիայի այս տրամաբանությունը գործողությունների զարգացման գագաթնակետում ենթադրում է երկու բևեռների ծայրահեղորեն ընդգծված և սրված բախում: Այս փուլում և՛ Տիգրանի՝ խոսք-ինքնաչափմամբ արտահայտված եսամոլությունն ու սնապարծությունն են հասցվում գերագույն աստիճանի, և՛ Հայրիկի՝ լռությամբ և արարք-ինքնաչափմամբ դրսևորված կշտամբանքը. «Տիգրան-Հը՞, պարոն զուռնաչի, ո՞նց ես: Կհավատայի՞ր, որ տղադ թագավոր կդառնա մի օր... Չկռռաս. ոնց որ համաշխարհային վիշտը լինես: /Հայրը լուռ կշտամբանքով նայում է որդուն» [5, էջ 283]: Ճշմարտության անզոր ընդվզումն արտահայտվում է Հայրիկի՝ տունը հրդեհելու արարքով, սակայն «կեղծ» իրականության հետևորդ Տիգրանն անգամ ա՛յդ արարքն է ծառայեցնում այդ նույն իրականության կառուցմանը՝ այն ներկայացնելով իբրև ահաբեկչություն: Ճշմարտության մյուս ձայնը՝ լրագրողի կերպարը, պիեսում զուտ արտաբեմական ներկայությամբ է դրսևորվում, սակայն ունի խոսք՝ ի տարբերություն Հայրիկի: Դա արտահայտվում է Գալուստի՝ նրա հոդվածից արված մեջբերումով. «...շատ հնարավոր է, որ վաղը նախագահական գահին մենք կունենանք մի խամաճիկ, ում շարժող թելերը բազմաթիվ են լինելու՝ թե՛ դրսից, թե՛ ներսից...» [5, էջ 252]:

Ընդհանրապես բացակայող կերպարների պայմանաձևերի սիրահար Գ. Խանջյանն այստեղ էլ չի խուսափել հնարից: Ի տարբերություն մյուս ստեղծագործությունների՝ այստեղ լրագրողը կառուցվածքային կենտրոն ու գործողությունների ծավալման հիմնական ազդակ չէ և ավելի շուտ հանդես է գալիս իբրև ճշմարտության գաղափարի անդեմ ու անմարմին խոսափող, քան լիարժեք կերպար: Բայց բեմական տիրույթում կատարվող գործողությունների վրա նրա ազդեցությունը նշանակալից է: Նախ՝ այս փոքրիկ մեջբերումը ներկայացնում է բեմական տիրույթում համրության պայմանաձևով զսպված ճշմարտության խոսքային ձևը: Ճշմարտության այս ձևաչափն էլ երկար չի գոյատևում, քանի որ կուսակցության առաջնորդ Գալուստն ատրճանակի օգնությամբ լռեցնում է լրագրողին: Սակայն այդ սպանություն-արարքը խորացնում է դեռևս Տիգրան-Շխո հանդիպման ժամանակ սկզբնավորված Տիգրան-Գալուստ միկրոկոնֆլիկտը, որը, ի տարբերություն նախորդների, որոշակի զարգացում ապրում է, բայց դարձյալ չի հասնում ավարտակետին: Լրագրողի արտաբեմական ներկայությունը և՛ արտահայտում է ճշմարտության ուղղակի ձայնը, և՛ պայմանավորում Գալուստ-Տիգրան միկրոկոնֆլիկտի զարգացման հերթական փուլը: Այս երկում ընդգրկված չէ Տիգրանի գահակալության փուլը, սակայն ներկայացվող գործողությունների ընթացքը թույլ է տալիս ենթադրել նաև շարունակությունը, քանի որ պիեսում սփռված ակնարկները ցույց են տալիս, որ ամբոխը որոշակիորեն ենթարկվել է կեղծ առաջնորդի հմայքին:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Գուրգեն Խանջյանի «Քեզնից պրծում չկա» պիեսը մերօրյա հասարակական-քաղաքական իրադարձությունների շրջապտույտում պահպանում է իր արդիականությունը: Տիգրանն էլ հայ գրականության մեջ լրացնում է քաջնազարական և փանջունիական տիպի կերպարների պատկերասրահը՝ մեր ժամանակներին բնորոշ կոլորիտային նրբերանգներով, որոշակի դետալ-հավելումներով: Պիեսի խորագիրը ցույց է տալիս, որ «տիգրանականությունն» էլ քաջնազարականության ու փանջունիականության պես հավերժ է և կգոյատևի այնքան, քանի դեռ գերիշխում են ամբոխային ընկալումները:

Գրականություն

1. Ավանեսյան Ա. Արդի հայ դրամատուրգիան (1991-2008 թթ.). Երևան, «Գրական էտալոն», 2011:
2. Բոն Գ. Ամբոխների հոգեբանությունը. Երևան, «Անտարես», 2020:
3. Դեմիրճյան Դ. Երկեր. Երևան, «Լույս», 1983:
4. Թումանյան Հ. Ընտիր երկեր, երկու հատորով, հատոր երկրորդ. Երևան, «Սովետական գրող», 1985:
5. Խանջյան Գ. Թատրոն 301. Երևան, ՀԳՄ հրատ., 2008:
6. Խաչիկյան Գ. Արդիականության գեղարվեստական համապատկերը Գուրգեն Խանջյանի դրամատուրգիայում, Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, N 1, 2015, էջ 10-21:

7. Շեքսպիր. Երկեր. Երևան, ԵՊՀ հրատ., 1991:
8. Гоголь Н. Ревизор. Москва, «Детская литература», 1979.
9. Мольер. Полное собрание сочинений, в трех томах, том второй. Москва, «Искусство», 1986.

References

1. Avanesyan A. Ardi hay dramaturgian (1991-2008 t't'). Erevan, «Grakan e'talon», 2011.
2. Bon G. Amboxneri hogebanut'yuny'. Erevan, «Antares», 2020.
3. Demirtjyan D. Erker. Erevan, «Luys», 1983.
4. T'umanyan H. Y'ntir erker, erku hatorov, hator erkrord. Erevan, «Sovetakan grogh», 1985.
5. Xanjyan G. T'atron 301, Erevan, HGM hrat., 2008.
6. Xachikyan G. Ardiakanut'yan gegharvestakan hamapatkery' Gurgen Xanjyani dramaturgiayum, Gitakan teghekagir, Prak B, N 1, 2015, e'j 10-21.
7. Sheqspir. Erker. Erevan, EPH hrat., 1991.
8. Gogol' N. Revizor. Moskva, «Detskaja literatura», 1979.
9. Mol'er. Polnoe sobranie sochinenij, v treh tomah, tom vtoroj. Moskva, «Iskusstvo», 1986.

СТОЛКНОВЕНИЕ РЕАЛЬНОСТИ И «ЛОЖНОЙ» РЕАЛЬНОСТИ В ПЬЕСЕ ГУРГЕНА ХАНДЖЯНА «ОТ ТЕБЯ НЕ ОТДЕЛАТЬСЯ»

КАРЕН МАНУЧАРЯН*

Для цитирования: Манучарян, Карен. “Столкновение реальности и «ложной» реальности в пьесе Гургена Ханджяна «От тебя не отделаться»”. *Искусствоведческий журнал,* N 1 (2022): 265-277. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-265

Пьеса Гургена Ханджяна «От тебя не отделаться» являет собой своеобразный отзвук общественно-политической жизни независимой Армении. Проблема столкновения двух реальностей – истинной и «ложной» широко представлена в мировой литературе, в частности, в таких произведениях, как «Отелло» Уильяма Шекспира, «Тартюф или лжец» Жан-Батиста Мольера, «Ревизор» Николая Гоголя, «Храбрый Назар» («Кадж Назар») Д. Демирчяна. Раздвоение реальности обуславливает раздвоение художественных образов, порождает дуализм образ – «антиобраз».

Ключевые слова: Гурген Ханджян, пьеса, комедия, «ложная» реальность, образ «камуфляж», столкновение, эволюция.

* Соискатель кафедры древней и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ имени Х. Абовяна, 098150411@mail.ru, статья представлена 10.01.2022, рецензирована 20.01.2022, принята к публикации 20.05.2022.

THE CLASH OF THE REAL AND "FALSE" REALITY IN GURGEN KHANJYAN'S PLAY "THERE IS NO ESCAPE FROM YOU"

KAREN MANUCHARYAN*

For citation: Manucharyan, Karen. "The Clash of the Real and "False" Reality in Gurgen Khanjyan's Play "There Is No Escape from You"", *Journal of Art Studies,* N 1 (2022): 265-277. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-265

Gurgen Khanjyan's play "There is No Escape From You" is a kind of echo of the socio-political life of independent Armenia. The problem of the collision of two realities – true and "false" is widely presented in world literature, in particular, in such works as "Othello" by William Shakespeare, "Tartuffe or a Liar" by Jean-Baptiste Molière, "Inspector General" by Nikolai Gogol, "Brave Nazar" ("Qaj Nazar") by D. Demirchyan. The bifurcation of reality causes the bifurcation of artistic images, gives rise to the dualism of the image – "anti-image".

Key words: Gurgen Khanjyan, play, comedy, "false" reality, "camouflage" image, collision, evolution.

* Applicant at the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan, 098150411@mail.ru. The article was submitted on 10.01.2022, reviewed on 20.01.2022, accepted for publication on 20.05.2022.

ՀՏԴ : 378(479.25) + 001(479.25) +281.6
DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-278

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հղման համար. Զաքարյան, Անուշավան: «Էջմիածնի գիտական ինստիտուտի գործունեությունը»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2022): 278-289. DOI: 10.54503/2579-2830-2022.1(7)-278

Հայտնի իրողություն է՝ հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային դարավոր արժեքները պահպանելու և սերունդներին փոխանցելու գործում Ս. Էջմիածնի Մայր Աթոռին կից հիմնարկների՝ տպարանի, ճեմարանի, թանգարանի, մատենադարանի ունեցած խոշոր դերը: Դրանց նոր շունչ և ոգի հաղորդվեցին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հենց սկզբից: Այդ առումով նշանակալի էր Էջմիածնի գիտական ինստիտուտի հիմնադրումը:

Ստորև ներկայացնում ենք գիտական այդ կենտրոնի հիմնադրման և գործունեության մասին նշանավոր բանասեր, պատմաբան, բառարանագիր, ինստիտուտի գիտնական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի՝ 1922 թ. հունիսի 6-ին գրած ուշագրավ հաղորդումը և ինստիտուտի կանոնադրությունը (տպագրվել են «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի» գիրք Ա. և Բ.-ում, Էջմիածին, 1921–1922, էջ 320-329):

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ*

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԷՋՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
(5 փետրուարի 1921 – 1 յունիսի 1922)

Էջմիածնի Գիտական Ինստիտուտի ծագման և հաստատութեան համառօտ պատմութիւնը հետևյալն է.

Երբ Հ.Ս.Խ.Հ. Յեղկոմի 1920 դեկտեմբերի 17-ի դեկրետով պետականացման ենթարկուեցին «բոլոր ազգութեանց կուլտուր-կրթական հիմնարկութիւնները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գոյքով» և փոխանցուեցին «Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի տնօրէնութեան», բնականաբար խնդիր առաջ եկաւ, թէ ի՞նչպէս պէտք է վարուել Էջմիածնի հաստատութիւնների հետ և նոյն թուի դեկտեմբերի 17-ին դեկրետին կից լոյս տեսաւ նաև Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի *հրամանը «Հոգևոր հաստատութիւններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկութիւնների պետականացման մասին»: Այդ հրամանի երկրորդ յօդուածի ծանօթութիւնն ասում էր. «Էջմիածնի վանական Ճեմարանը, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարանն ու տպարանը՝ որպէս ընդհանուր պետական նշանակութիւն ունեցող հիմնար-*

---

* ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 03.02.2022, գրախոսելու օրը՝ 12.03.2021, տպագրության ընդունելու օրը՝ 20.05.2022:

կութիւններ Հայաստանի աշխատաւոր ժողովրդների սեփականութիւն դառնալով, ենթարկւում են անմիջապէս Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատին և վերակազմւում վերջինիս կողմից նշանակուելիք կոմիսարի ղեկավարութեամբ»[*]*:*

Այսպիսով Լուսժողկոմի վրայ պարտականութիւն էր դրւում Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների վերակազմութեան ծրագիրը մշակել և իրականացնել այն կեանքում, և Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանը իրեն յանձնարարուած խնդիրը լուծում է այն մտքով, որ Հ.Ս.Խ.Հ. համար անհրաժեշտ է ունենալ մի գիտական հաստատութիւն, մի «Կուլտուր-պատմական Ինստիտուտ» Էջմիածնում, ուր ամփոփուած են գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեցող բազմաթիւ յիշատակարաններ:

Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի այս մտադրութիւնը հաւանութիւն է գտնում Հ.Ս.Խ.Հ. Յեղկոմում և 1921 թ. փետրուարի 5-ին հրատարակւում է դեկրետ Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ հիմնելու մասին:

Այդ դեկրետն ասում է.

1. «Պետականացւում են և Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատի անմիջական իրաւասութեան տակ դրւում Հռիփսիմէի վանքը, Զուարթնոց եկեղեցու աւերակները յարակից շինութիւններով և գոյքերով, Էջմիածնի նոր Վեհարան կոչուած շինութիւնը, վանական հիւրանոցը և վանական նոր հանրակացարանը իր կահաւորութեամբ»:

3. «Յանձնարարւում է Լուս. Ժող. Կոմիսարիատին վերակազմել Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների պետականացրած ցանցը (մատենադարան, թանգարան, տպարան և այլն) և հիմնել Էջմիածնում Կուլտուր-պատմական Ինստիտուտ, *որ նպատակ պիտի ունենայ գիտական հիմքերի վրայ դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրութեան գործը և միաժամանակ մասսաների սեփականութիւն դարձնել հնութեանց այն բոլոր յիշատակարանները, որոնք գիտական և գեղարուեստական նշանակութիւն ունեն և կարող են աղբիւր դառնալ կուլտուրական նոր արժէքների ստեղծագործութեան»:*

Դեկրետի երկրորդ յօդուածը վերաբերում է հանրապետութեան որբանոցների մի մասը Էջմիածնում կենտրոնացնելուն և շէնքերի, գոյքերի և հաստատութիւնների մի մասը այդ նպատակին յատկացնելուն[**]*:*

Այս դեկրետով հիմք է դրւում «Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի», որի իրաւասութեանն են յանձնւում մատենադարանը, թանգարանը, տպարանը, վանական հանրակացարանը, Հռիփսիմէի վանքը և Զուարթնոց աւերակները, իսկ դեկրետում յիշատակուած միւս հաստատութիւնները դրւում են Սոցիալական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսարիատի տրամադրութեան ներքոյ՝ որբանոցների համար:

«Էջմիածնի Կուլտուր-պատմական Ինստիտուտի» առաջին կազմակերպչական նիստում (1921 թ. փետրուարի 2-ին) Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանն *յայտարարում է Ինստիտուտը բացուած և հաղորդում, որ նրա գիտական կոլեգիայի անդամ են նշանակուած ընկ. ընկ.* Լեւոն Սարգսեան, Երուանդ Տէր-Մինասեան, Սենեքերիմ Տէր-Յակոբեան *(միաժամանակ նաև մատենադարանի վարիչ) և* Լեւոն Լիսիցեան *(միաժամանակ նաև թանգարանի վարիչ. մինչև 1921 թ. փետրուարի 1-ը նա Էջմիածնի կուլտուր-կրթական հաստատութիւնների կոմիսար էր): Ընկ. Լուսժողկոմի առաջարկութեամբ Լ. Սարգսեան ընտրւում է Նախագահ, իսկ Ե. Տէր-Մինասեան Գիտական Քարտուղար: Լ. Սարգսեան*

[*] Թէ՛ Հայյեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետը եւ թէ՛ Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի նոյն թուի հրամանը տես՝ Դեկրետների եւ Հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, եր. 16:

[**] Տե՛ս Դեկրետների եւ Հրամանների ժողովածու, պրակ I, Էջմիածին, 1921, եր. 107-108:

նշանակում է նաև Ինստիտուտի կոմիսար և ժամանակաւոր վարիչ: Այդ իսկ առաջին ժողովում ընկ. Լուսժողկոմը յանձնարարում է գիտական կոլեգիային շտապ կարգով կազմել Ինստիտուտի կանոնադրութեան նախագիծը և ներկայացնել իրեն ի հաստատութիւն:

